



ԱԿՐՏԻՉ ԾԻՐԱՅԻ


ԱՐԻԱՑԻՆԵՐԻ
ՏԵԶԵՐԱՐԱՆԱՐ
ԻՄԱՍՏԱՆՇԱՆՆԵՐԻՑ
ԱՆԴԻՆ



Տիեզերական
համալսարանի մատենաշար
թիւ 1

ՄԿՐՏԻՉ ԾԻՐԱՑԻ

ԱՐԻԱՑԻՆԵՐԻ
ՏԻԵԶԵՐԱՀԱՆՑԱՐ
ԻՄԱՍՏԱՆՇԱՆԵՐԻՑ
ԱՆԴԻՆ



ՊԵՂՈՒԹ, 1996

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս աշխատասիրութեան մէկ մասը,
յօդուածներու ձեւով լոյս տեսած է
լիբանանահայ մամուլին մէջ, որ որոշ
փոփոխութիւններէ ետք, ընդգրկուած է
այս հատորին մէջ:

Պատմականօրէն Կորիւնի «Վարք Մաշտոցի» բնագիրը գլխաւոր վկայութիւնը կը համարուի Ս. Մեսրոպի կատարած առաքելական ուղեւորութեան՝ ի սպաս հայ զիրերու յայտնաբերումին:

Ընդհանրապէս Կորիւնի նշած պատմական տուեալներուն վրայ հիմնուած են նաև Մովսէս Խորենացիի, Ղազար Փարպեցիի եւ այլոց բննական տեսութիւնները, որոնք կու գան շեշտելու այս դէպքին ժամանակագրական տեղեկութիւններն ու Գանիէլեան նշանագրերու ենթադրեալ առնչութիւնը մեսրոպեան տառերու ձեւակերտման աշխատանքին զծով: Քացատրելու համար այս վիճելի երեւոյթը, կարգ մը բանասէրներ յայտնած են, թէ Մեսրոպ Մաշտոց իր երկար ուղեւորութիւնը կատարած է Գանիէլեան նշանագրերու անբաւարարութենէն մղուած: Ումանք իրենց տեսակէտը յարմարցուցած են Մովսէս Խորենացիի այն վարկածին, թէ Գանիէլի մօտ գտնուած գրերը «կարգեալ ըստ ձեւոյ օրինակի յունականին» (1) էին:

Մակայն հայոց այբուբնի ծագումին առեղծուածը, դժբախտաբար, բաւարար չափով չէ լուսաբանուած պատմագիտութեան մէջ խորացած հայագէտներու կողմէ: Ցարդ կատարուած բազմաթիւ բանասիրական

(1) Մովսէս Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1913, էջ 326:

հետախուզումները, թէեւ տրամաբանական ըլլալու պատրանիքը կը թողուն, բայց չեն յաջողած վերջնական եզրայանգում մը գտնել հայկական տառերու մեծ ձեռնարկի իրագործումին առնչութեամբ։ Թերեւս պատճառը կը կայանայ այն իրողութեան մէջ, որ մեր պատմութեան այդ ժամանակաշրջանին քիստոնեական կրօնը, իբրեւ նոր քաղաքակրթութեան մը սկզբնաւորութիւն, յեղաշրջած ըլլալով հեթանոսական բարքերն ու մշակոյթը, առհասարակ կոչուած էր արմատաւորուելու ողջ ժողովուրդի հոգեբանութեան մէջ, իբր «օտար լիի դէմ իր գոյութեան համար մղուող ազատազրական պայքարի հզօր գաղափարական նախադրեալ»։

Այս իմաստով ալ քիստոնեւութեան հետագայ տարածումն ու ամրապնդումը ո՛չ միայն եկեղեցւոյ մտահոգութեան առարկան էր, այլեւ պետական քաղաքականութեան իրատապ հարցերէն մին կը հանդիսանար, իբրեւ գաղափարական ուժ ծաւալելու բոլոր բնագաւառներէն ներս։ Անմիջապէս մեծ թափ ստանալով, հայերէն լեզուի ուսուցման գործը կը դառնար բոլորին յանձնառութիւնը, միաժամանակ կը սկսէր մտաւորականութեան եռուն գործունեութիւն։ Հետեւաբար, այս տուեալներէն մեկնելով, դժուար չէ կոհենլ, թէ հայ դպրութեան ու դաստիարակութեան ծաղկումը, այդ բախտորոշ հանգրուանին ժողովրդականացած ըլլալով, բարոյական մեծ նշանակութիւն ունէր մեր պատմիչ գրողներուն համար, որոնք հասկնալի պատճառներով հաւատարիմ մնացած են այն վարքագիծին, թէ քիստոնեւութենէ առաջ զիր եւ գրականութիւն գո-

յութիւն չունէր Հայաստանի մէջ։ Սակայն«Նախամաշտոցեան Հայ Մատենագրութիւնը եւ Դանիէլեան Գրերը» (2) խորագիրը կրող յոյժ կարեւոր իր մէկ յօդուածին մէջ, Փրոֆ. Աշոտ Գ. Աբրահամեան նախաքրիստոնէական շրջանի գրականութեան եւ մշակույթի գոյութիւնը հաստատող իր ժննարկութեան մէջ կը նշէ հետեւեալ անհրաժեշտ տեղեկութիւնները.

Մասնաւոր առաջ հայ գրի եւ գրականութեան առկայութիւնը հաւաստող միև փաստը գրական զարգացած լեզուի գոյութիւնն է, որը դատրասի վիճակում օգտագործել է մասնաւոր դպրոցը։ Անժխտելի փաստ է, որ Ե. դարի հայ գրական լեզուն եւրականօրեն արտակարգ օրինաչափուած եւ բառադաշտով հարուստ լեզուն է եղել։ Բաւական է ասել, որ ասորական եւ յունական բնագրերից հայերեն է թարգմանուել հարիւր ժողագրական մամուլից աւելի ծաւալով Աստուածառունը՝ առանց օսար բառերի օգտագործման։ Թարգմանուած բնագրի իմաստը հայերենում տրուած է այնորիս նշուրեամբ, որ հայերեն Աստուածառունը համարւում է «թարգմանութիւնների բագուիի»։ Ըստ որում, լեզուի հարատութիւնը, ընդուրական բարձր արուեստը եւ այլն, յատուկ են ընդհանրապէս Ե. դարի հայկական բոլոր իննաշտիութեան բարգմանական աշխատաւթիւններին։ Ահա այս փաստեն են, որ հիմք են տուել մեզ առաջադրելու հետեւեալ հարցումները.

«Եթէ հայկական գրականութեան սկիզբը Ե. դարն է, աղա հնարաւոր չէ,

(2) «Պատմաբանասիրական Հանդես», Երեւան, թի. 4, 1963, էջ 131-143։

Ա) որ Ե. դարի զանազան հայ հեղինակների աշխատութիւններ եւ բարգմանութիւններ միատեսակ ժերականական մշակուած ձեւեր ունենային.

Բ) որ Տարբեր գաւառների մարդիկ գրեին միեւնոյն բարքառվ.

Գ) որ բարգմանութիւնների ժամանակ հարկադրուած չինէ-ին բնագրի լեզուից մեծ բուով տեմիններ փոխ առնել.

Դ) որ բարգմանին այդոիսի ճշդութեամբ.

Ե) որ ինմասիո աշխատութիւնները սկսեին այդոիսի բարձր թեմատիկայով»(3):

.... Նախամածոցեան հայ գրի եւ գրականութեան մասին արժեաւոր տեղեկութիւններ են հաղորդում նաեւ յոյն մատենագիրները: Սատնացոյց անենի նրանցից միայն երկուսին» (4)...: «Յիոնոդիտ անունով մի յոյն ղատմիչ 234 թ. գրած իր ժամանակագրութեան մեջ բուարկել է այն ժողովուրդների անունները, որոնի դպրութիւն են ունեցել. դրանց բուում են նաեւ հայերը. (5) (տես՝ Hippolytus, Werke IV Bd. Die Chronik):

Ի՞նչ շահագրգուածութիւն ուներ յոյն հեղինակը կեղծելու դպրութիւն չունեցող ժողովրդին դպրութիւն ունեցող ներկայացնելու:

Փիլիստանու անունով մի յոյն հեղինակ, որն աղրել է մ.թ. Գ. դարում, իր «Վարք Ալոռինեա Տիկացու» խորագրով աշխատութեան մեջ տեղեկութիւն է հաղորդում այն մասին, որ Տաւրոսի լեռներում մի յովագ է բռնուել, յովագի վզիս՝ ոսկի

(3) Նոյնը, Էջ 133-134:

(4) Նոյնը, Էջ 135:

(5) Նոյնը, Էջ 135:

մանեակ, իսկ մանեակի վրայ հայերեն գրուած «Աւրակ Թագաւորից՝ նույր Նիւսիայի Աստուն» (6) (տես՝ "Philistrati de via Apollonis Tianei", հատոր Ա., Էջ 44):

Վերջացնելով հայկական նախամաշտոցեան գրի առեղջուածին պատմական որոշ հանգամանքներու լուսաբանութիւնը, համապարփակ ակնարկով մը հետեւն ալ հարցադրումը կը կատարենք. ի՞նչպէս կարելի է բացատրել Դ. եւ Ե. դարերու յանկարծակի փայլը հայ դպրութեան: Ի դէպ, պէտք է ըսել, որ ո՛չ մէկ մշակոյթ այդպէս, ոչինչէն, ընդուստ ծնած է, մինչդեռ ամէն զարթօնի ունի իր աճումը պայմանաւորող, հասունացումի եւ պատրաստութեան նախընթաց շրջանը:

Այսօր, մեր օրերուն եւս, այս հարցերը կը շարունակեն մտատանչել շատերը, որոնք հետամուտ ըլլալով Ճշմարտութեան լոյսը սփոնելու հայոց պատմութեան կարեւորագոյն հանգրուանին շուրջ, դասական հարթ մտածողութենէն դուրս զալով, աւելի ծառալային տարողութիւն ունեցող տրամաբանութեամբ կը բնութագրեն հայկական այբուբենի ծագումին բարդ խնդիրը: Այս ուղղութեամբ ուշադրութեան արժանի լեզուարձութիւն մը կը համարուի իմաստասէր-արուեստագէտ Մկրտիչ Ասլանեանի գիրքին բովանդակութիւնը, որ աննախընթաց եւ միանգամայն անսպասելի մօտեցումով մը կ'անդրադառնայ հայոց գիրերու գիւտին մասին: Ասլանեան առասպել մը ստեղծելու միտումով չէ որ մշակած է այս վերլուծական աշխա-

(6) Նոյնը, Էջ 135-136:

տասիրութիւնը, ո՞չ ալ հայ պատմագէտներու լրջութիւնը կասկածի տակ առնող ընդդիմախօսութիւն մըն է անոր քննարկումը։ Հեռու ամէն տեսակի նախապաշարումներէ եւ սահմանագծումներէ, «Արիացիներու Տիեզերահանձար Խմաստանշաններէն Անդին» կոչուող ներկայ ուսումնասիրութիւնը հեղինակին տասը տարիներու գեղարուեստահմաստասիրական տիեզերահայեցին արդիւնքը ըլլալով, յառաջացման եւ զարգացման ընթացքի մէջ կը տեղաւորէ խնդրոյ առարկայ այս նիւթը՝ դուրս բերելով զայն իր պատմական տոկմաթիֆ պայմանաւորուածութենէն։

Սկզբնական շրջանին Ասլանեանը ստեղծագործական երկունք ապրեցաւ արեւոց հայոց մտածողութեան բնորոշ խորհրդանիշերը պատկերելով զանազան թեմաներու ներկայացումով։ Մեհենատուներ՝ որոնց խորագիտակաները գեղազարդարուած են բազմաթիւ սվաստիքաներու իրազործումով, իսկ այդ հեթանոսական տաճարներու մէջ կատարուող ծիսական արարողութիւնները պատկերացուած են քուրմերու այնպիսի աղօթավիճակով, որ զարմանալիօրէն կը լիշեցնէ սվաստիքայի խորախորհուրդ նշանը։

Ի՞նչ է սվաստիքան եւ ինչո՞ւ Ասլանեան այս արեւածին գաղափարանշանը կամ արիացիներու յատուկ կրօնադաւանաբանական կնիքը կը նկատէ իբրեւ հայոց այբուբենի ծագումին կենսամդիչ ուժը։ Սվաստիքան նախնադարեան շրջանի մեծապառաժեայ (mégali-thique) յուշակոթողներուն առընթեր եղած է բարձրորակ մշակոցի մը Հարտարագիտական արեւածեւ

գաղափարախորհուրդը՝ օժտուած ըլլալով ձեւաստեղ ծման շարժուն գործառնութեամբ։ Այս կառուցողական յատկութիւն ունեցող գծապատկերին բնազանցական խմացութիւնը մեծ ձշգրտութեամբ ու բացալայտ կշռութով մը կ'արտայալու տիեզերքի մէջ գործող տարերային երեւոցքները։ Հետագային, միեւնոյն մոգական խորհրդանշանը, շնորհիւ իր առթած ուժականութեան եւ հզօր արտայալուշաճեւին, հնարաւորութիւն կ'ընձեռէր Ասլանեանին ներազգաց ներաշխարհին տրամաբանական հիմքերու վրայ վերաձարտարակերտելու հայոց այբուբենի ամբողջ համակարգը, կշռութաւոր ձեւով մը զանոնք տեղադրելով եւ տարրալուծելով կանոնաւոր համաշափութիւններով սվաստիքայի ուրուագիծին վրայ։ Այսպիսով, գեղանկարիչ Ասլանեանը իին հայոց մտակառուցին ուղիով հայ գիրերու ձեւակերտման բանալի սկզբունքը հաստատելէ ետք, արիացիներու յաւերժական խորհրդանշանին միջոցաւ հնարաւորութիւն կը ստեղծէր առանձնայատուկ նկարագիր տալու հայկական տառերուն, միաժամանակ անոնց կրաֆիքական իմաստաւորումներուն մեկնութիւնը կատարելով լեզուա-ոճական հարուստ բառապաշարի շարակիւսութիւններով։ Այսուհետեւ ան տիեզերահմաստասիրական իր ինքնատիպ մտահայեացքին ծաւալումով, իրաքանչիւր տառ կը փոխակերպէ նախնական բնոյթ ունեցող գաղափարապատկերներու՝ բացալայտելով անոնց արեւապատական մտածողութեան բնորոշ սկզբունքները՝ ապա՝ տիեզերահմանձար նախատիպերուն երկրաչափական կերպաւորումները կը գովեր-

գէ, իբրեւ իմաստանշանային հոգեզմայլ ընթերցումներ:

Ի վերջոյ, Ասլանեանի արտայալտած մտքերը ընթերցողը կը մղեն այն եզրակացութեան, թէ՝ բանասիրական ուսումնասիրութիւնները առանձինն ո՛չ մէկ շօշափելի արդիւնքներու հասած են: Արդարեւ, մնզի պարզ կը թուի, որ ասոր իբրեւ լճակից, անհրաժեշտ է զեղարուեստահմաստասիրական մօտեցումը, որպէսզի հնարաւոր ըլլայ հայ ժողովուրդի մոռցուած անցեալի առեղծուածային ծալքերը յայտնաբերել հայոց լեռնաշխարհի ժայռապատկերներուն վրայ արձանագրուած տեղեկութիւնները կարդալով փորձենք հաղորդակից դառնալ այս արեւելումին, որովհետեւ նախաքրիստոնէական շրջանի հայ գիրերու գոյութեան եւ չգոյութեան այս խնդիրը լոկ հայոց մշակութային պատմութեան ակադեմական մէկ խնդիրը չէ, այլ՝ հայ գրականութեան ու հայ մշակութի ինքնուրոյն նկարագրի գոյութեան կամ չգոյութեան հարցը:


Սարգիս Գ. Լեւոնեան

ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶԱՆ ՏԱՊԵՐԸ ՏԻԵԶԵՐԱԿԱՄԱՍԻՐԱԿԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՏՐԱՍԱԲԱՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՍԲ

Այս մտածողութեանը հետեւելու բուն պատճառը եղաւ իմ ստեղծագործական նկարը, որը անուանած եմ «Յօշուուած Սվաստիքան» (Արեւը): Նկարի մեծութիւնը 100 X 80 սմ. է (տես կողքի նկարը), երկար դիտելոց որոշ ժամանակ յետոյ, իմ նկարած սվաստիքայի մէջ նկատեցի նրա ունեցած նմանութիւնները հայկական մի քանի տառերի հետ: Այդ երեւթէն մղուած, աւելի խորացայ հետազոտութեանս մէջ:

Ես սվաստիքան պատկերելիս վարանում էի, սակայն ինչ որ մի անյայտ հարազատութիւն կապում էր ինձ այդ պատկերաւորմանը: Չեմ ուզում զարմացնել ոչ ոքի, սակայն պիտի ասեմ, որ ինչ որ չափով այս աշխատանքում մեծ բաժինը տրւում է ինձ որպէս երեւակայող, ստեղծագործող նկարիչ: Քանի որ տառերի նախապատկերը եղած է նկար, յետոյ գաղափարանշան:

Այսպիսով մեկնաբանում եմ տրամաբանական մտածողութիւնս գեղանկարչակմաստասիրական մօտեցումներով: Սվաստիքան աշխարհում շատ է տարածուած կամ, աւելի ճիշդը, շատ կայ, եւ չէր կարող չլինել, քանի որ այն համաշափ (սինեղրիֆ) եւ շարժում արտայայտող պարզ մի նկար է: Սվաստիքան, որպէս նշան, ցոյց է տալիս շրջանաձեւ շարժման ուղղութիւնը, նման այն գծերին, որոնք իրենց ուղղութիւնը ցոյց



Սվաստիքայի քանի մը տեսակներ, որոնցմէ կ'երեւին հայոց տառերը

Են տալիս սլաքով կամ հատման նշանով:

Հայկական տառերը, որոնք նախապէս գաղափարապատկերներ էին, իմաստ արտայալող պատկերներ են և ոչ թէ հնչին: Սվաստիքայի քազմատեսակութիւնը արտայալողում է նրա շարժման զանազան տրամադրութիւնները: Արեւապաշտ Մեծ Հայքում նախնական հաւատքը հիմնաւորուել էր արեւի վրայ, հետագայում լուսինը, որից աստղեր, բնութեան զանազան երեւոյթներ եւ առարկաներ մուտք գործեցին արեւա-


պաշտ կրօնքի մէջ: Ուստի, այս ձեւով է որ լուսաբանում է տառերի ծագման նախապատմութիւնը:

Սվաստիքան, ինչպէս գիտենք, հայոց արեւի խորհրդանիշն է, ուր կան հայոց աստ, աստղ, աստու-ած բառերը: Այս պատկերի քազմատեսակութիւնը բացատրում է նրա վիճակներով: Նաեւ տարուան եղանակները արեւի պաշտամունքով հետեւեալ ձեւերն են ստացել: ամրան շոգին արեւը աւելի զօրաւոր էր տաքացնում եւ սվաստիքայի ձեւը եռանդուն է՝ , իսկ ձմրան՝ նրա շողերը կրծատում են, վերշաւորութիւնները ներս են դարձել եւ շարժումը դանդաղեցուել է՝ : Արեւապաշտութեան սկզբնական շրջանին տարուան երկու եղանակներ գիտակցւում էին. հետագային է որ չորսի վերածուեցին:

Այս գաղափարանկարի ուրիշ տեսակները արտայայտուել են առատութեան, երաշտի, մառախուղի եւ տարուայ վերջի կամ օրուայ վերջի շարժման հոգերանութեամբ: Սվաստիքան՝ արեւի նշանը, արտայալում էր մահուան եւ յարութեան գաղափարը: Արեւոց կրօնքի զարգացումով ստեղծուեցին արեւի մարդացուած աստուածները. սրանց մեծ ապացոյց են հանդիսանում հայոց անձնանունները, որոնց հիմքը արեւ է, որի կրծատ ու նախնական հնչումն է - ԱՐ -:

Օրինակներ՝ որոնք համարեա հայոց բոլոր բառերու հիմքն են, որպէս արեւակրօն. արեւ, Արա, արտօյ, արօր, արիւն, արգանդ, արմատ, գարի, վարել, վարս, հարս, հայր, մար, մայր, հարցաւ եւայլն: Հայոց արեւապաշտ լինելու փաստերը շատ շատ են՝ սկսեալ շարականներից մինչեւ ժողովրդական երգերը. նոյնիսկ պարերի կլոր շարժումը ունի արեւի խորհրդանիշ, իր արագ եւ հաշուարկուած տարատեսակներով:

Հետագայում, լուսինի եւ արեւի ճանաչումը նպաստեց աստղագիտութեան զարգացմանը: Արեւոց ժամանակ ասում էին



	ԱՐԵՐԱՐ	ԵՐԵՐ	ՀԱ-ՀԱՐ	ՀԱ-ՀԱՐ	ՀԱ-ՀԱՐ	ՀԱ-ՀԱՐ	ՀԱ-ՀԱՐ
1	☀ *	*	☀	☀	☀	☀	☀
2	☀ *	*	☀	☀	☀	☀	☀
3	☀ *	*	☀	☀	☀	☀	☀
4	☀ *	*	☀	☀	☀	☀	☀
5	☀ *	*	☀	☀	☀	☀	☀
6	☀ *	*	☀	☀	☀	☀	☀
7	☀ *	*	☀	☀	☀	☀	☀
8	☀ *	*	☀	☀	☀	☀	☀
9	☀ *	*	☀	☀	☀	☀	☀
10	☀ *	*	☀	☀	☀	☀	☀
11	☀ *	*	☀	☀	☀	☀	☀
12	*	*	☀	☀	☀	☀	☀
13	☀ *	*	☀	☀	☀	☀	☀
14	☀ *	*	☀	☀	☀	☀	☀
15	☀	☀	☀	☀	☀	☀	☀
16	☀	☀	☀	☀	☀	☀	☀
17	☀	☀	☀	☀	☀	☀	☀


բարեւ; Հուսնի մուտքով այս բառին միացան բարի լոյս եւ արշալոյս:

Հաւատքի խորացումով այս բոլորի գարգացումը ձեւաւորում եւ ստանում էր օրինաշափ սահմանում: Աստղերի ճանաչման հետ առաջ եկաւ հետեւեալ ողջոյնի կանոնը. բարի լոյս եւ պատասխանը՝ Ասծու բարին; Այս բառերի խորքում արեւ, լուսին, աստղ հասկացողութիւններն են; Զ ժիստականով ստացում է՝ չար, չարիք: Զ տառի կառոյցը Զ տառից տարբեր է. եթէ Զ տառը արտայայտում է տիեզերքի եւ երկրի կապը արեւի շարժման ուղղութիւնով, ապա Զն կորում է այդ կապը, շեղակի սահմանագծով:

Շատ հետաքրքիր կառոյց ոնի Զ տառը. Կլոր շրջանը անջրպետն է, վերեւից անսահմանութեան նշանով: Ուրիշ տեսակի մէջ Զ տառը ստանում է ազատ, այլ իմաստ: Այս բոլոր մտածումների որոնումը կենտրոնացւում է հեռաւոր ժամանակների հայոց հոգերանութեան սկզբնական բնոյթին վրայ, որտեղ արտայայտութիւնը գիտակցուած է ոչ ամբողջական, այլ որոշակի: Այս հոգերանական կառոյցը, որպէս օրինաշափութիւն եւ ոչ պատահականութիւն, նոյնն է այսօր եւ մշտապէս ներկայ կը լինի հետագալին:

Քանի որ այս լուսաբանումը հայոց տառերի մասին է, ես աւելի խորանում եմ նրանց մէջ եւ առատ ապացոյցներով հոգերանականը, գիտակցականը, կրօնքը եւ աշխարհաճանաչումը իրենց պատմական բարդ ելեւէջներով կապում եմ տառերի գարգացման հետ: Հստ օրէնքի, հայոց առաջին տառը - Ա, Ֆ - Ան է, քանի որ արեւի կրօնքը սկսում է այստեղից: Ա գաղափարապատկերը, ինչպէս եւ միւս գաղափարանշանները, յատուկ դասաւորութիւն չունեն, նրանք Մերուակ Մաշտոցին հասել են խառն՝ իրենց զանազան տեսակներով: Ուստի, մեզ անհրաժեշտ է որոնումի ճանապարհը

եւ գաղափարի նշանը փնտուել կրօնքի մէջ, ինչպէս նաեւ հայոց անձնանունների ու բառերի եւ կենցաղի շերտաւոր ուրաններում:



Կարեւոր է նաեւ իմաստը ճանաչել գաղափարանշանի կառուցուածքի բնոյթից: Հետեւաբար, անվրիպելի է Յ նշանի կառոյցը, որը պիտի ունենար իր տարատեսակները՝ Այս նշանը սրբազն նշան է, որը արտայայտում է յարութիւն առնելու գաղափարը: Որպէսզի աւելի համոզուենք, կը տեսնենք որ նշանը զետեղուել է ԱՐ բառի առջեւը, որը նշանակում է արեւի գարնան եւ ձմրան իմաստը: Վարի մասից բարձրանում եւ երկրորդ մասում նոր կեանք է առնում: Մենք ՅԱՐ նշանը ընթերցում ենք այսօր որպէս վերապրող արեւ, անմահ արեւ: + Յ = ՅԱՐ = Ֆ + Յ + Ք

Իսկ է տառը, իրենից յետոյ ից եւութիւն աւելացումով, բացայայտում է իր սրբազն լինելու բնոյթը եւ որպէս իմաստասիրական երեւոյթ, խորհրդանշում է Աստուծոյ գործունէութիւնը: Հայոց տառերի սրբազն լինելու բնոյթը ոչ միայն արեւապաշտ Հայաստանի համար էր, այլ ամբողջութեամբ մտել է հայոց քրիստոնէական կրօնքի մէջ:

այս նշանը, որը նախատիպն է Է-ի տեսակների, ցոյց է տալիս անջրպետից վեր բարձրացող, այսինքն սկիզբ առնող կամ ծնուող ուղղութիւնը, անսահմանութեան գաղափարով՝ Է, մօտենում է արեւի նշանին, քանի որ անսահմանութեան նշանը արեւի նշանի երկու ճառագայթի ձեւն է՝ : Եթէ այս գաղափարանշանը մասնատենք, կ'ունենանք իմաստի հետեւեալ մասերը. Օ / : Այս երեքի համատեղ կառոյցը տուել է տառի եւ էութեան հասկացողութիւնը:














Այս ապացոյցը լրացւում է հայոց անձնանունների վկայութեամբ: Օրինակ՝ արեւածող Վահագն, լուսնակ, խաժակ, կայծակ, փայլակ. այս բոլոր անունները կառուցուել են եր-

կու գաղափարներից, որոնք սկզբից երևոյթ են եղել եւ յետոյ մարդասուածացած ու բաժանուած են անձնանունների: Այսպիսով, մի ուրիշ իրականութիւն է հանդէս գալիս՝ բանաւոր խօսքի եւ գաղափարի համատեղ զարգացումը, որը հասնելով մինչեւ մեր օրերը, ենթարկուել է շատ փոփոխութիւնների:

Հայոց Կ-Ն տառը ծնուել է կայծակից, որպէս քնոթեան փայլուն երեւոյթ: Կ տառի կառոյցը ունէ կայծակի պատկերը: Կ տառին շարունակում է այօ բառը, ուստի ժայռապատկերներում կայծակը պատկերուել է այժին հարուածելով: Իսկ ինչ է հայոց Կ նշանի եւ էլեքտրականութեան նշանի նմանութիւնը: Էլեքտրական նշանի ծագումը գալիս է հենց կայծակից եւ կապ չունի հայկական Կ տառին հետո Երկուսի սուացուածքն էլ ծնուած է բնութիւնից, բռն կայծակից: Այսպիսի նոյնութիւնները ոչ թէ բանավիճական մտքեր են, այլ մեծ ապացոյց լրացնելու օրինաչափ երեւոյթները: Միայն այն տարրերութեամբ, որ հայերի մօտ կայծակի նշանը գալիս է շատ հնուց, իսկ էլեքտրականութեան նշանը՝ այդ գիւտի յայտնումից յետոյ: Միւս տարրերութիւնը այն է, որ կայծակը կրօնահայ նշան է եւ ունի իր հետ հետեւեալ կիրառումները. օրինակ՝ Վ-Ենաց կայծակը, որպէս անձրեսի աստուած, միացել է Եռեան հետ, որպէս կեանք: Նոյն է՝ կեցցո-կեցը:

Է-ի եւ Ե պարագան հետեւեալն է. Ե Ե - որի
նախատիպը Ե արտայայտում է երկինք հասկացողութիւնը,
որը եւ արեւ հասկացողութիւնն է: Աւելացնեմ որ Երգը եր-
կնքի գովքն է գարնան համար: Ե տառը որպէսզի տարբեր-
ուի արեւ գաղափարից, այնտեղ զեղչուել են շարժման եւ ուղ-
ղութեան որոշ կողմէր ու թողւած միայն այն մասը, որը միայն
երկնքի ուղղութիւնն է ցոյց տալիս: Հ Հ ↑ ↑ Ա

Հայոց Յ տառը Յ Յ Յ ունեցել է յաւիտենականութեան իմաստ: Յաւերժութեան նշանը եւ այս նշանը ունեն իմաստա-

 ԱՐ ԼՈՅԱ ՃԱԿԱՐ	 ԲԱՐՁՐ, ՄԵՐ ՀԱՏ, ԲԱՋՈՒՄ ԼՈՅԱ	 ՄԵՐԱՄ	 ԲՈՒԺՔԱՐԱ
 ՀՈՎ ՏԵՐՔ ԽՈՎԽՈՎ	 ԱՅ ԱԿ ՀՈՎ ԱԿ	 ԵՐԱՆԵՐԻ	 • ՊԶԱՐԵ
 ՀՈՎ ՏԵՐՔ ԽՈՎԽՈՎ	 ԱՅ ԱԿ ՀՈՎ ԱԿ	 ՎԵՐ	 ԲՈՐ
 ՀՈՎՍ ՄԵՐԱ	 ԱՐԱՍ ԱՐԱՍԱԿ 2	 ԴԱՆԴԱՆ	 ՏՐԱՋԵ
 ԵՐԱԾ	 ԼՈՒՄԱԿ	 ՊԻՆԱՅ	 ՅԱՅԻՔԱՐ
 ԼՈՅԱ ԱՐԵԳԱԿ	 ԱՍՏ	 ԲԵԺ	 ԾՐԿԱՐ
 ՅԱՐԵԱ ՅԱՐԵԱ	 ԿԱՅՑԱԿ	 ԱՇԱՐԵ	 ԿԻԶԻՉ ՏԵՐ

սիրական բնոյթ: Յ տառը, որպէս արեւի գալափարախմատածեւի տեսակ, ստացել է պատիքայի մէկ թեւը՝ թոփշքային լրացումներով: Որպէս իմաստ՝ նոյնանում է արեւի գործունեութեան հետ իսկ որպէս Հ-հուր իմաստով, օրինակ՝ Դրանդ, Դրայր, Դրաչ, Դրա-նոյց, Դրաժ. բոլորի մէջ կրակ իմաստն է եւ այդ պատճառով Հ տառի կառուցուածքը հրահանգային է՝ սրբնթաց ուղղութեամբ: Հ Հ Հ Հ Հ

Ն տառը իր մասին կարող է վկայել տաճար բառի մէջ,
ուր միանում է ար-ին: ճարտար - այստեղ նոյնպէս ն տառը
միանում է արեւին՝ թէ՝ նմանութեամբ ~~×~~ եւ թէ իմաստով:
Նրա հետ են կապուած կրօնական շատ բառեր: ճարտարադես-
եթէ մենք վերադառնանք նախնադար եւ գաղափարազրերից
կազմենք արտայայտութիւն ~~×~~ ~~×~~ ~~×~~ ~~❖~~ ~~*~~
պէտք է ընթերցենք՝ «Ճառագայթող արեւ անսահման արեւը
էսաւան»:

«**Ճ**առագայթ» ըստեղոցինք «ծիրանի ծովը անսահման արեւ-
լու ձմռան ոչ ճառագայթէ ոչ»:

Երբեմն նշանները գաղափարի մէջ հանդէս են գալիս կրծատ: Արեւ միայն Ա է: Ը տառը Ե տառի հակադիր կառուցուածքը ունի, որը ցոյց է տալիս վերեւից արուող թերթը երկրի վրայ: Արդէն թերթ բառը լրիւ գաղափարագրերից է կազմուած այնպիսի զասաւորութեամբ, որ որպէս առանձին գաղափարապատկերներ կ'ընթերցուեն՝ Բարի Երկիննեն քաղած - շատ: Գ տառը իր կառոյցով երկնքից տուած ձեւ է: Վ Հ Բ Բ Ր = Կ Բ Ր

Մէկ ուրիշ տրամաքանութիւն է ստեղծում որպէս ընդհանրական ապացոյց: Դա հայոց տառերի միատեսակութեան եւ փոքր փոփոխութեանց նշանաբան: Սա փաստ է լրսարաններու, որ գաղափարապատկերները իրանց զարգացումի մէջ պատահական ձեւ չունեն, այլ բոլորն էլ սերում են արե-

Եի ձեւից: Այս բոլորը քրմամտաւորական կրօնքի եւ կանոնի հաստատման ապացոյց են, ինչպէս բանաւոր խօսքի, այնպէս էլ կենաց բոլոր բնագավառներում:

Հազարաւոր տարիներ հայոց հոգեբանութիւնում խտացուած արեւապաշտ կրօնքը, արմատացել ու տարածուել էր Մեծ Հայքով։ Քրիստոնէութեան մուտքը Հայաստան յեղաշրջեց հեթանոս հայոց կրօնքը։ Սակայն արեւոց քաղաքակրթութիւնն էլ մտաւ քրիստոնեայ հայոց կրօնքին մէջ, իր մտածողութեամբ եւ ազգային ժառանգականութեամբ։ Կրօնափոխութեան փոթորիկի դադարից յետոյ, արեւապաշտութիւնը ձուլուեց քրիստոնէութեան մէջ ու վերատին, առանց նշմարուելու, հին սկաւառակը սկսեց պտղտուել հայոց տաճարների մէջ։

Ց տառը իր կազմով վկայում է ցոլացող արեւը անշրջե-
տից վեր: Ո՞րն էր Մաշտոցի մեծ գործը: Նախ Մաշտոցը
անուն չէ, ինչպէս՝ դորոց, զինանոց, հիւրանոց, վզնոց, գոգ-
նոց: Եթէ մենք ոցը հանենք, կը մնայ Սահմանը: Սակայն
Սն միացած է աւսին, որը աստин է. ուրեմն Մաշտոց պիտի
հասկանանք՝ աստուած, աստղ, աստանոց, աստղագէտ, աս-
տուածաբան, լուսաւորիչ: Մաշտոցը տեղեակ էր հայոց
գաղափարազգերին եւ նրան յայտնի էր արեւոց Հայաստանի
բնաւորութիւնը: Առանց Երկարացնելու՝ մենք Մաշտոցի բո-
լոր հետազօտութիւնները, շրջագայութիւնները, պատմա-
կանօրէն իմանում ենք, զիտակցելով որ Մաշտոցի բոլոր
տառերի հիմքը արեւապաշտ Հայաստանի գաղափարազգերից
ու քաղաքակրթութիւնից է ստեղծուել:

Բոլոր այն տարակարծիքները, որոնք հայոց տառերի ծագումը օստարացնում են դիտակցաբար կամ անդիտակցաբար, ի վերջոյ ցնդելու են իրենց պարապութեամբ: Եթէ Մաշտոց հայոց տառերը դրսից բերեց, նշանակում է որ քրիստոնէ-


ութիւնից փախած արիացիներից կորցուածը Հայաստան քերեց: Այդ լաւ է երեւում պատմութեան տրամադրութիւնից:

Մաշտոցի գործունէութիւնը ցնծութեամբ ընդունուեց ժողովրդի կողմից: Դա առաւել փաստ է ապացուցելու, որ արիացի, սակայն Քրիստոնեայ դարձուած հայր իր հարազատ գաղափարագրերը պիտի ուզենար: Եւ դա եղաւ: Էութեան խորհուրդով եւ էջմիածին է տառով, բոլոր, բոլոր բառով, բարբառով, ժառանգեց ամէն բան՝ սկսեալ աղօթքներից, տեղանուններից, անձնանուններից, նոյնիսկ կրօնքից:

Արդեօք այսօր գաղափարագրութիւն կամ նշան գոյութիւն ունի: Պիտի տեսնենք, որ այսօրուայ քաղաքակրթութիւնը ծգտում է լիովին մօտենալ նշաններին: Սկսեալ ճանապարհների արգելուած եւ ոչ արգելուած նշաններից, դրօշակի գոյներից, մուրճ ու մանգաղից, որոնք գաղափարներ են, մենք ամէն տեղ ենք տեսնում ուտելու նշանը՝ պատառաքաղ, դանակ, եւայլն: Նոյնիսկ մեր անունների կրծատ ձեւը վերածում է գաղափարի: Պատճառը այն է, որ նշանը կամ պատկերը հասկանալի է բոլորին՝ օտարին, մեծին ու փոքրին, ուսեալին եւ անուսին, նոյնիսկ համ րին:

Գաղափարանշանները այսօր դարձեալ անհ բաժեշտութիւններ են մեր առօրեայ գործունէութիւնների մէջ: Գաղափարանշանը ընդհանրական է նաև ուրիշ ժամանակների համար, քանի որ նրա հիմքում իրական շօշափելի առարկաներն են: Ոչ մէկ բան հնարքով չի կարող լինել օրինաշափութիւնից դուրս: Այս պարզ օրինակը միայն ընդհանուր հասկացողութեան յանգելու եւ չտարակուածելու համար է:

Ուստի եթէ արիացի հայր արեւը պաշտելով ստեղծել է արեւի խորհրդանիշը, թող մեզ զարմանալի շթուայ: Գաղափարանշանները բոլոր ժամանակների համար են: Առաւել եւս աշխարհագրական մեծ փաստ է հողային տարածքի վրայ



Սվաստիքայէն ստեղծուած հայկական տառերը,
Վարի երեք տողերը՝ արեւի շարժման ուղղութիւնը ցոյց
տուող նշաններ են

ապրած ժողովրդի արեւոց ժառանգաց կրօնքը։ Սվաստիքայի ծագումը հայոց մօտ թնական օրինաշափ երեւով է։

Եթէ մենք ուշադրութիւն դարձնենք Ներսէս Շնորհալու «Առաւոտ կուսոյ»ի աղօթքակառոյցին, այն հայոց տառերի գաղափարագրութեան փայլուն արտայայտութիւններից է: Շնորհալին չի յօրինած, այն իմանում էր բանառը խօսքից: Նա Մաշտոցի նման աշխատեցաւ սրբազն տառերի խոր-հուրդը վերականգնել ու գրի առնել: Հայոց պատմութեան ե-լեւէջներից, փոփոխութիւններ են առաջ գալիս, նորից վե-րադառնայով նախկինին:

բադառնալով նախպիստ:

Վ տառի իմաստը փայլակ, փայլ, փայլել է, որը մօտենում
է արեւ իմաստին: Օրինակ, փաստ բառը երդում աստուծոյ
հոգեբանութիւնից է կառուցուել, փայլոն աստուծ մտա-
ծողութիւնից, որը ծշմարտութեան խորհրդանիշն է: Մ տառի
կառոյցը նման է ավաստիքի եւ ձգուածութեամբ ատանում է Ա.
Բ. Վ. ի. = ՀՀ : Ուրեմն՝ արեւին ուղղուած մաղթանք եւ մե-
ծարում է, ինչպէս գրաւոր եւ բանաւոր աղօթքներում:

Զ տառը այնքան մօտ է պաստիքի, որ մնում է միայն վարի մասը թեքել: Հայոց գաղափարագրութիւնը մտաւ քրիստոնէութեան մէջ: Ծատ իմաստներ կրծատուեցին. օրինակ՝ ԱԾին, որն է Աստուածածին:

Այսպիսով ամէնուրեք հանդիպում ենք կրծատումների կամ մէկ տառից երկու տառ տեսնելու գաղտնիքին, օրինակ, Ա. Բ. Ս. միացումով ստանանում ենք՝ **Ա** **Շ** **Ա**.

Մեծն Տիգրանի թագի վրայ պատկերուել է արեւը՝ երկու արծիւներով։ Խաչքարերի վրայ խաչի տակ զարդարուած արեւի սկալառակն է։ Հայոց տաճարների վրայ ամէն օր կարդում ենք զաղափարապատկերներ, նոյնիսկ բարձրաքանդակ եւ խորաքանդակ ոճերով։

Բացի գաղափարագրերից հայերը ունեին մեծ եւ փոքր

շափի քանդակներ, որոնք նոյնպէս մեզ օգնում են ճանաչելու դարաշրջանի նիստն ու կացը: Մանրանկարչութեան մէջ թաքուցեալ զարդի վերածուած հիսուածքով, նշմարում է ավաստիքայի պատկերը:

Մեր ուշադրութիւնից չեն կարող աննկատ մնալ շատ կարեւոր բնական երկու երեսոյթներ, որոնք կապուած են արեւի հետ. գարուն եւ ձմեռ բառերը, որոնց նախնական իմաստներն են արեւ եւ մեռնել: **Գ** նշանին յաջորդող՝ ար-արեւ իմաստը բացում է **Գ** տառի գաղափարանշան լինելու գաղտնիքը: Նրա ձեւը հոգերանօրէն արեւի շարժման ձեւն է՝ ներքեւից վերեւ բարձրացող անջրպես տարած քով եւ հատման գծով, որն ուղղանշում է արեւին՝ **Գ**  , որովհետեւ գարնան բարձրեալ իմաստը բնորոշում է արեւի տերմութեամբ:

Այս իմաստի ճշմարիտ լինելու ապացուցը աւելի է յստակացնում ձմեռ բառը, որի մէջ թաքնուած է մեռնել իմաստը: Այսպիսով, այս շատ կարեւոր իմաստի սկզբի Զնշանը մեզ ասում է՝ անջրպեսի միջից արեւը իշնում է փոքր շրջանցումով դէպի վար: Մեռնել բառը արդէն կար, նրա առաջ եթէ տեղատրինք Զնշանը, կ'ունենանք ձմեռ իմաստը: Այս երկու բնութեան երեւոյթները աւելի նախնական են, որոնց մէջտեղ առաջ է եկել երկու եղանակ եւս՝ աճառ եւ աշուն կամ Աս-ուց:

Քանի որ ամառը պլողաբերութեան առատ ամիսների շրջանն է, այն ստացել է անառ բառի իմաստը՝ հնչպէս իմանում ենք Հայոց Նաւասարդը՝ Նոր Տարին՝ Ամանորը ամրան է զուգադիպում:

Այս փաստը աւելի յստականում է ամիս բառով՝ ամ, որի սուածի տառը արեւ գաղափարն է: ԱՅՈՒՆ իմաստը նոյնպէս յապուած է աշ, աս, աստուած, աստղ կրծատ ձեւին: Կրծառումների պատճառը յայտնի է: Աւելանում էին իմաստները,

փոխում էին ձեւերը. սա օրինաչափական է:

Քրիստոնէական կրօնքի մէջ ամբողջ վարդապետական տարազները գաղափարահմաստներ են. սկսեալ խաչից եւ խաչեալից, գաւազանի գլխի օձերից, աղաւնոց, թագերից ու նրա վրայ զարդարուած խորհրդանշաններից, բուրվառից, խնկից, մոմակալներից, միւռոնից, գորգերի վրայ պատկերներից, սովորոյթների մէջ մտած բուսական եւ կենդանական հաւատալիքներից:

Ազգային այս մեծ եւ ամբողջական հարստութիւնը ընդհանրացնում է հայ ժողովրդի ազգային ինքնուրոյն քաղաքակրթութիւնը բոլոր ժամանակաշրջաններում:

ԾՀԶՃԶ

Ընթերցել՝ Ծիրանի ծով անսահման արեւ ձմրան ոչ ճառագայթ ոչ:

ՃՇԾՈԽ

Ընթերցել՝ Ճաճանչող արեւ անսահման արեւ էութեան:

ՉՄԵՐ

Ընթերցել՝ ձմեռ բառը մեռնիլ բառի հետ տալիս է մեռնիլ իմաստը:

ԳՆԵՑՆԵՑՉՉՐ


Ընթերցել՝ զարման արեւը լարութիւն առած արեւը ոչ մեռնի:

ՀԱՅՈՑ ՍՎԱՍԻՔԱՆԵՐԻ ՎՆՐԵՏԱՑՈՒՄԸ

Ավասիքա միջազգային բար է,
որ ճշանակում է Աստղ-Արեւ-Լոյս-Աստուած.
աստղը ունենալով որդես հիմք, ինչոքս՝ հայերեն
Աստղ-Աստուած եւ
միջազգային լեզուներով՝ Astr-Star-Astro

Ուսումնասիրութեանս այս յօդուածում մէծ անհրաժեշտութիւն եմ Համարում որոնել սկաստիքայի անհետացման պատճառները Պատմական Հայաստանի ամ բողջական տարածում եւ արդի Հայաստանում:

ՄԵԾ ՀԱՅՔԸ, որպէս միակրօն արեւապաշտ երկիր, հազարմեակների մէջ արմատաւորուել եւ ձեւաւորուել էր որպէս բարձր քաղաքակրթութեան հասած պետութիւն։ Արեւապաշտ լինելու փաստը մենք կարող ենք նկատել հայոց անձնանունների մէջ. օրինակ՝ Արեգ, Արեգակ, Արշալոյս, Արեւիկ, Ցոլակ, Արմեն, Արամ, Արախ, Արարա, Արազած։ Հայոց տեղանունները նոյնպէս կապուել են արեւի հետ։ Եւ ամենաուշագրաւը հայոց բանաստեղծները, գուսանները փառաբանել են արեւը (Խորենացի, Մաշտոց, Նարեկացի, Շնորհալի, Զարենց)։ Հայ մշակոյթի ամբողջականութիւնը ճարտարակերտուած է արեւի վրայ։ Սվաստիքան, լինելով արեւի խորհրդանիշը, շատ բարձրացած է։ Սրանց մեծամասնութիւնը այսօր հայ մշակոյթի մէջ մտել է։ Այս սվաստիքաներից ամենաշատ տարածուել է բաղմաթեւ վերջաւորութիւնները կլորցուած սվաստիքան, որը յառաջացած է արեւ գաղափարից յաւերժութեան իմաստով։



Բաղմաթել սվաստիքաները շարժման տարրեր ուղղութիւններով


Սակայն, շատ նուազ են քառաթերև ու ութաթերև սվաստիքանները: Այս սվաստիքանների սակաւաթիւ լինելը պատճառաբանում է հայոց արեւապաշտ քաղաքակրթութեան անկրութով եւ քրիստոնէութեան դարձով: Քրիստոնէութեան հիմնական գաղափարանշանը խաչն է, իսկ քառաթերև սվաստիքան, որ նոյնպէս խաչաձեռ է, խորհրդանշում է այլ իմաստ: Այս օրինաչափ հակամարտութեան մէջ, պարտուած սվաստիքան մեծ նահանջ տալով, անհետացաւ ժողովուրդի տեսադաշտից: Հայոց մի քանի եկեղեցիների վրայ մնացիլ են քառաթերև սվաստիքաններ. օրինակ՝ Զուարթնոցի, Պտղնիի, Գոշավանցի,

Թալինի, ճ'կվարի (տե՛ս «Հայաստանի Յուշարձանները», Մ. Հասրաթեան): Եկեղեցիների վրայ Մ Տ Խ այսպիսի տեսքով եւ վիճակներով: Այս մեծ փաստերը դալիս են արեւապաշտ Հայաստանի հազարամետակների խորքից: Սվաստիքայի եւ քրիստոնէական խաչի համատեղ ձուլուածութիւն ստեղծուեց՝ երբ մարդկութեան բնազդամտութիւնը վերաբարձաւոյթների զարդարման օրինաչափութիւններին եւ Քրիստոսի խաչը վերածուեց անշարժ ալաստիքաձևի:

Խ Ֆ
այս անշարժ կիսասվաստիք վիճակը երկու նշանների կողմից մարդու բնազդի մէջ նահանջեց եւ ստացաւ մէկ վիճակ: Սակայն, քառաթեւ սվաստիքան մոռացուեց, քանի որ քրիստոնէական խաչի զարդափարախօսութիւնը արտայայտում էր խաչի գօրութիւնը:

Հայաստանի տարածքում քառաթեւ սվաստիքան հեթանոսական մշակոյթի հետ իր ողբերգական անկումը ապրեց:

Փաշիստական Գերմանիան այս նշանը վերցրել էր իր յստակակառոյց եւ մոգական արտայայտութիւն ունենալու պատճառով: Փաշիզմի պարտութիւնից յետոյ, քառաթեւ, անյանցանք այս նշանը հակաֆաշիզմի տեսադաշտում դարձաւ պղծուած: Մարդկային բնազդի համար այս երեւոյթը օրինաչափ է. վրէժ լուծել զաղափարանշանից, նրան ոչնչացնել, արհամարհել: Այս մոգական նշանը հայոց մօտ վերակենացանացաւ նոյն արմատների հոգեբանութեամբ: Այս մեծ փաստը բնազդաժառանդումի ապացոյցն է, որպէս էթնիկական ծագում ունեցող մի հին ժողովուրդի, որը ցեղասպանութեան ենթարկուել եւ արտաքսուել է իր պատենական հողերից: Սվաստիքան հայերի համար հարազատ զաղափարապատկերների ողնաշարն է եւ միասնութեան մոգական խորհրդանշը: Քառաթեւ սվաստիքան, հայոց արեւի զաղափարանշանը լինե-



Քրիստոնէական խաչի եւ անշարժ սվաստիքայի նոյնացման տեսակներ

լով, հիմք հանդիսացաւ հայոց պատմութեան մէջ նոր էջեր բացելու: Մոգական այս զաղափարանշանը ունի հզօր արտայայտչածեւ, որին նայելով նրբազդաց եւ գիտակցող անհատը

ունենում է աշխուժանալու, շարժուելու, ուժ առնելու, վախը մոռնալու, լիցքաւորուելու եւ իմաստաւորուելու նախապատրաստակամութիւնը։ Սվաստիքան ունի տիեզերահմաստափական ծայրագոյն տրամաբանական բարդ մտածողութեանը մղելու ուժեղ կարողութիւն։ Արեւանշանի զօրութիւնը ներփակուած է նրա կառոյցի խորքում։ Քառաթեւ սվաստիքան եւ խաչը իրենց գաղափարահմաստներով նոյն են. մէկը ցոյց է տալիս լոյսի, աստղի, արեւի շարժուն վիճակը, իսկ միւսը ցոյց է տալիս լոյսի անշարժ վիճակը։ Իսկ գաղափարահմաստներով նոյնանում են ծայրագոյն մտքին եւ երկուսն էլ նշանակում են լոյս, աստղ, աստուած, փրկութիւն, արեւ, ինաստութիւն, էութիւն, յաւերժութիւն, անմահութիւն գաղափարները։ Լուսաւոր այս աստղանշանը կայ ու մնում է ոչ միայն հայոց, այլ ամբողջ մարդկութեան համար, որպէս համաշխարհային մտքի իմաստափական կառոյց։

Որպէսզի մենք տեսնենք, թէ որքան հայկական իմաստներ ունենք, որոնց ողնաշարը ԱՍՏ է, այսինքն արեւի սահմանում Տիեզերքի  թուարկենք.

Աս, փ-աս, վաս-ակ, Դայ-աստ-ան, առ-աստ-ակ, առ-
աստ-աղ, հ-աս, նաւ-աստ-ի, նաւ-աս, հ-աստ-աս, Տ-աստ-
ակ, աստ-ու-ած, ս-աստ-ել, Լ-աստ-ակ, աստ-իծան, Մ-աստ-
արշ, Դր-աստ-ամաս, իմ-աս, Եր-աս եւ շատ շատ անուններ,
որոնք անհետացել են սկաստիքային նման։ Արդեօք մեր
մտքով պէտք չի՝ անցնի այս մեծ փաստը, որ ամբողջ
աշխարհում, ոչ մէկ երկիր չունի ԱՍ կառուցով անուն, բացի
հայերից։

ՀԱՅ-ԱՄՍ-ԱՆ՝ զաղափարագրութեան մաքուր տեսքով նշանակում է ~~Տ~~ Յ Ֆ Ա Ս = Դրանու արեւ յարեալ, արեւ սահման Տիեզերքի + արեւ նորաստեղծեալ։ Եթէ ասենք Քրանսա, Խտալիա, Գերմանիա, Ռուսիա, Ճափոն, Հնդկաստան,

Պարսկաստան, Վրաստան եւայլն, սրանք միայն հայերէնի մէջ ստացած են «ստան» կառոյցը, բայց ոչ իրենց մայր լեզուով, ոչ մէկը իր մէջ չունի ԱՍՏ կառոյցը, բացի ՀԱՅ-ԱՍՏ-ԱՆ-ԷՆ: Զշփոթենք ՍՏԱՆԸ ԱՍՏ-ի հետ. Հայաստանը ոչ թէ ՀԱՅԱ-ՍՏԱՆ է, այլ՝ ՀԱՅ-ԱՍՏ-ԱՆ, քանի որ ունենք ՀԱՅԿ, ՀԱՅ, ՀԱՅՔ եւ չունենք եւ չենք կարող ունենալ ՀԱՅԱ, որովհետեւ Յից յետոյ Ա-արեւը անիմաստ է դառնում գաղափարահմաստով: Ուրեմն՝ ՍԳ-ԱՍՏ-ԻՔԱՆ, ինչպէս հայոց ԱՍՏ-իմաստ սրբանշանները, ՀԱՅԱՍՏԱՆ-ածնունդ են, արեւածնունդ:

ՍՎԱՍԻՔԱՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՅԹԹՈՒՄ

Արեւի գաղափարապատկերը արտայայտող նշանների՝ «ՍՎԱՍԻՔԱ»ների խորքում յայտնաբերել եմ հայոց կրօնքի եւ մշակոյթի հետ նրանց անմիջական կապը։ Սվաստիքաները, լինելով բազմատեսակ, միշտ իրանց ներկայութիւնը շեշտել են հայոց մշակոյթում, յատկապէս քանդակագործութիւնում, գեղանկարչութիւնում եւ ճարտարապետութիւնում։ Հայոց գաղափարանշանների սկաստիք եւ կիսասկաստիք պատկերները ցնցող ապացոյց են հայոց կրօնամշակութային, լեզուամտածողութեան կառուցուածքների ոլորտում։ Նոյնիսկ Հայաստան բառի մէջ մենք տեսնում ենք կապը սկսատիք իմաստի հետ։ ՀԱՅ-ԱՍՏ-ԱՆ, ՍՎ-ԱՍՏ-ԻՔԱՆ, ինչպէս՝ աստղ, աստուած, առաս-աղ, ազդ-աստ-աց, հարուստ՝ ԱՍ ողնաշարով իմաստներ։ Այս բոլոր օրինակները վկայում են հայոց կրօնի տիեզերականատական կառոյցի մասին, որոնք ապացուցում են Հայաստան բառի ձիշդ գիտակցումը՝ ԱՍՏ-ԱՐԵՒ ՍԱՀՄԱՆ ՏԻԵԶԵՐՔԻ։

Ուշադրութեանս մտաապարէզում միշտ մտահոգութիւնս է եղել Հայաստան իմաստը - արդեօք Հայ-աստ-ան թէ՝ Հայաս-տան։ Համոզումներիս եղրակացութիւնը հիմնաւորում է Հայ-աստ-անի վրայ եւ ոչ՝ Հայա-ստանի։ Այս երկթեւ ուղղութիւնը «ստան» կիսակառոյցով շփոթութեան պատճառ է եղել։ Հայոց պատմութեան մէջ, այս երկու ձեւերը միայն տարրերակներ են եւ ոչինչ կարող են փոխել հիմնական իմաստներից։ Այս «ստան» իմաստից ընկած Անշանը, որը անցեալում սրբավայր երկրի իմաստն ունէր, տրոհումից մեզ

է հասել «ստան» տարրերակով, այսպիսով ապացուցանելով հայոց տեղաբնիկ լինելու պատմական փաստերը։ Հայերը եկուոր չեն ՄԵԾ ՀԱՅՔի աշխարհատարածքում, այլ բնիկ ժողովուրդ են։ Որպէսզի աւելի խորը եւ յատակ պատկերացում ունենանք հայոց կրօնամշակութային կառոյցին մասին, թափանցենք նրանից ժառանգած հայոց անձնանունների, տեղանունների եւ այլ կենսաբանական օրինաշափութիւնների մէջ, որոնց նախնական կառոյցը ԱՐ-ԱՐԵՒ իմաստն է, եւ որի հետ կապուել են հետեւեալ իմաստակառոյցները։ Ար-արեւ, արի, Արա, այր, արտ, Արարա, Արաբս, Արա-Ա(զ), հայր, մայր, Արագած, Վան, Դրայր, Դրաչ, արօր, արշալոյս եւ շատ նմանակառոյց իմաստներ։ Այս բոլոր իմաստները, որպէս կարճ բառեր, ապացուցում են իրենց նախնական լինելու փաստը։ Արեւոց հայոց պատմութեան այս շրջանը, որպէս մտահմացականութեան կառոյց, անուանում եմ Արեւի շրջան։ Արեւի պատմական շրջանում հայոց հոգեմտակառոյցի ամբողջական արտադրութիւնը արեւի պաշտամունքն էր՝ հազարերանգ փառարանութիւններով, երեւակայութիւնների գերբնական չափազանցութիւններով, կենցաղահաւատքային բարդ հիսուածքներով։ Հայոց պատմական ԱՐ-շրջանը հետագային անցնում է ԱՍՏ պատմական շրջանի։ Հայոց ԱՍՏ պատմական շրջանը յառաջացած է ԱՐԵՒ շրջանից՝ տիեզերախմաստասիրական մտածողութեամբ՝ արեւը գիտակցել որպէս աստղ, աստղագիտական սկզբունք։ Արեւի աստղագիտական բաժանումը միւս աստղատեսակներից անհրաժեշտութիւն է ստեղծել նրան որպէս զօրաւոր ուժ՝ աստուած գաղափարախմաստով։ ԱՍՏ պատմական շրջանում հայոց մշակոյթը արդէն հասել էր գաղափարապատկերների գիտակցման փոխարարերութեան վերելքին։ Գաղափարապատկերների շնորհիւ զարգանում է ժողովրդի մտակառոյցի ազատութեան ձեւաւորումը։ Մշա-

կոյթի ներգործութիւնը, որպէս գիտակցութեան զարգացման մղիշ ուժ, պայմանաւորուում է որպէս գրաւոր միջոց: Պատկերների շնորհիւ մարդիկ ընթերցում էին միմեանց մտքերը, այդ մտքերի կեղրոնական աստուածը արեւն էր: Հայոց պատմութեան Արեւ շրջանից Աստուած պատմական շրջանի անցումը արդէն լճացուել է արեւապաշտութեան հետեւանքներով: Այն՝ ինչ կրօնքի մէջ էր, նոյն էր եւ մշակոյթի մէջ: Հայոց պատմութեան կրօնքը հայոց մշակոյթի արտայայտութիւնն է: Այս տեսակէտով, հայոց խեցեգործութիւնում, քանդակագործութիւնում, ճարտարապետութիւնում եւ գեղանկարչութիւնում, հայոց գաղափարապատկերները հազար հիւսուածքներով իրենց յատակ ու ջինջ արտայայտութեամբ պատկերուել են արեւի գաղափարը արտայայտող խորհրդանիշերով: Արեւի խորհրդանիշը, սկսեալ բազմաթիւ սվաստիքաները, դարձել են հայ մշակոյթի սրտի գարկերակը: Այս բոլորը երեւակալութիւն չէ, այլ մեծ իրականութիւն. որպէս մեծ օրինակներ ուշադրութեամբ հետեւենք Մայր Հայաստան յուշարձանի ճակատի եւ ոտքերի տակ զտնուող երկու սվաստիքաների հաւասարակշիռ առկայութեանը: Խաչաքարերում բազմահազար հիւսուածքներով շեշտուած սվաստիքաների սկաւոռակը: Մանրամկարչութիւնում այնքան շատ են սվաստիքաները, որ նոյնիսկ հասել են մեծարման անգիտակից յագեցումի: Սվաստիքաները դարձել են հայոց մշակոյթի բնագդահոգեկառոյցի լիցքաւորման աղբիւրը: Ճարտարապետութիւնում նրանց առկայութիւնը այնքան գօրաւոր է, որ նոյնիսկ տեսանելի է աւերակների մէջ: Զուարթնոց տաճարի հիմքն է արեւածեւը: Հայոց եկեղեցիների գմբէթների բաժանումները եւ նրանց ամբողջական բովանդակութիւնը իրանց սրածայր եւ վերջում խաչով սահմանուող կառոյցներով՝ արեւաբնույթի մէջ: Այս անժխտելի մեծ փաստը հիմնաւորութիւնը է:

Միքաների հարազատութիւնը նոյնիսկ տեսնում ենք Տիգրան Մեծի թագի վրայ, որպէս կրօնաքաղաքական արեւապաշտ պատկեր: Հայոց ԱՐ եւ ԱՍ պատմական, ամբողջական կառոյցը անցել է քրիստոնէական կրօնքի մէջ, երբեմն թաքուցեալ, երբեմն գերզօրացեալ ներկայութեամբ: Նոյնիսկ հայոց բուսական անունները կապուել են արեւի հետ, արեւածաղիկ, շուշան, ծիրան եւայլն:

 Հայոց պատմութեան կինսարանական կառոյցի զարկերակը իր բարդ անցուղարձերում, որքան ճնշուած ու կործանումի եղին հասած, սակայն յարութիւն է առել իր հին աստուածների յարալէզների միջոցով: Հայոց գովքասանները արեւասէր հոգուով անցեալից մինչեւ այսօր երգում եւ օրհնում են արեւին: Բայց, որքան կարճատես պիտի լինենք մենք, երբ չնկատենք հայոց գաղափարագրերի սվաստիք եւ կիսասպատիք ձեւերը: Հայոց պատմութիւնը հզօր էր մինչեւ այն ժամանակ, երբ հայը իմանում էր չխոնարհուելու, չստրկանալու վարքի զօրութիւնը: Հայոց մտքի զօրութիւնը պատմական ինքնաճանաշողութեան մէջ է, որպէս միասնութեան ընդհանրական գաղափարապատկեր: Հայոց պատմութեան ամենամեծ բաժանումը՝ արեւապաշտութիւնից դէպի քրիստոնէութիւն անցը, խափանեց արեւոց կրօնքի ճանապարհը իր մշակոյթով:

Հայոց մշակոյթի աշխարհացրի սփուռումը պատմական օրինաշափ երեւոյթ է: Քրիստոնէութեան մուտքը Հայաստան երկրաշարժի նման ցնցեց հայոց պատմութեան հիմքերը: Արեւապաշտ հայերը չուզեցան նոր կրօնքը եւ բռնութեանց իրը հետեւանք, ստիպուեցին հեռանալ իրանց հարազատ երկրից, իրանց հետ տանելով իրանց հաւատքի մասունքները: Այսպիսով, սվաստիքան Հայաստանից դուրս եկաւ եւ անցաւ ուրիշ ժողովուրդների մէջ: Այս անժխտելի մեծ փաստը հիմնաւորուել է հայոց կրօնաշխարհագրական, բնախմացական,

գաղափարապատկերների կենսաբանական ծնունդի հետ: Հայոց գաղափարախմաստներից մենք հասկանում ենք տուեալ ժողովրդի սերտ կապը իր երկրի հետ: Հայոց բոլոր բառերը, որոնք ծնուել են արեւից, ջրից, լոյսից, մթից, կայծակից, շատ կարճ են. օրինակ՝ արեւ, լուսին, զուր, բար, սար եւ նմանօրինակ շատ շատ բառեր, իրենց նախնական վիճակով, ապացուցում են իրանց հայածին բնոյթը: Հայոց գաղափարագրերի սվաստիք եւ կիսասվաստիք կառուցուածքները մեծ ապացոյց են արեւոց կրօնքի մասին: Ոչ հերթականութեամբ թուարկենք հայոց արեւագովք ուահվիրաներին՝ Զարենց, Վարուժան, Ներսէս Շնորհալի, Գրիգոր Նարեկացի, Սայաթ Նովա, Շերամ, Շիրին, Հաւասի, Գուսան Աշոտ, Գուսան Շահէն, Ջիւանի, Մաշտոց, Խորենացի, Թումանեան, Աղայեան, Շիրազ, Սեւակ, Էմին, Դուրեան, Մեծարենց եւ շատ շատ անուններ, որոնց նոյնիսկ թուարկումը անհնարին է: Հայկական ժողովրդական բանահիւսութիւնը, երգն ու պարը, վարքն ու բարքը, ամբողջութեամբ արեւածին են: Հայոց սվաստիքաները թափառում են աշխարհից աշխարհ, սակայն նրանց հետքը տանում է պատմական Հայաստանի Մեծ Հայք աշխարհատարածքը: Սվաստիքաները հայոց մշակոյթի մէջ են մի շտ:

Հայոց մշակոյթի պատմական կնիքը դրոշմուել է արեւի լոյսով եւ այդ լոյսը երբեք չի մարելու:

ՀԱՅ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԱՐԵՒ

Հայոց գաղափարանշանների խորքում թաքնուած գաղափարախմաստները, իրանց նախնական հասկնալի եւ ըմբռնելի վիճակից մինչեւ այսօր մեզ հասել են նոյն թարմութեամբ. աւելացնեմ, որ բոլոր գաղափարանշաններն էլ ծնել են համապատասխան իմաստներ, իրենց խիստ ու կանոնաւոր օրինաշափութիւններով: Արեւոց հայոց դաւանաբանական կրօնքի յստակութիւնը տեսնում ենք հայոց տառերի մէջ, որոնք նախկին գաղափարանշաններն են: Հայոց պատմութեան միակ եւ յստակ ուղեցոյցը հայոց գաղափարանշաններն են: Սեպագրութիւնները ինչպէս նաեւ զանազան լեզուներ՝ ասորական, պահլաւական, յունական, հոռմէական, եղիպտական եւայլն, իշխել են Հայաստանի վրայ: Սակայն, նրանք հայոց արեւապաշտական կրօնքը չեն կարողացել իրանց ենթարկել, քանի որ արեւապաշտութիւնը արդէն հիմնուել ու հաւատքի խոր արմատներով մտել էր ժողովրդի մէջ: Վկայ է արեւոց աստուածը՝ Արեւը: Արեւոց հայոց անձնանունների եւ տեղանունների մէջ անմաքրութիւն չկար, ամէն բան սերուել էր արեւից, Արարատի, Արագածի, Հրազի, Հրաչի եւ նմանօրինակ երեւյթներից: Հայերը երգուում էին արեւով («արեւս վըկայ»): Իսկ հիմա հետեւենք գաղափարախմաստների հանձարեղ հայահմաց լեզուաբանութեանը: Արեւոց հայոց կրօնքում, որպէս ամենակալ, արեւից են ծնուում հետեւեալ իմաստները. արեւ, արեգ, հայ, հայր, նայր. այսօր էլ մենք ասում ենք նայրենի լեզու, հայրենիք:

Մեր այսօրուայ ՄԱՅՐ հասկացողութիւնը գաղափարախմաստների շրջանում արեւին մեծարման խորհրդանիսէք: Ան՝



որպէս մշտնշենական արեւ յարեալ, այսինքն միշտ կեանք տը-
ռող հայր գաղափարախմասոք, իրատու արեւի անմահութեան,
այսինքն՝ միշտ յարութիւն առնող, վերապրող:


Մեր այսօրուան ՀԱՅ-ԱՍՏ-ԱՆ հասկացողութիւնը նախկի-
նում եղել է իշտառու արեւ յարեալ, իսկ ԱՍՏ-ԱՆ՝ արեւը որպէս
տիեզերքի սահման միշտ նորաստեղծեալ նոր (Եւ սա թող
չզարմացնի մեզ, քանի որ օրինաշափութիւնը նոյնն է Հա-
մաշխարհային առումով նոյնիսկ եւ այսօր): Շատ կարեւոր եմ
համարում ընդգծել, որ արեւոց հայոց գաղափարանշանները
միայն սկզբունքորէն տիեզերական են, նրանց մէջ իսկատ բա-

ցակայում են բուսական եւ կենդանական գաղափարահմատները. ուստի ժայռապատկերներում կայծակ իմաստի մէջ Կ նշանը մնացել է առանց ԱՅԾ կենդանուն, իսկ ԱԿ՝ կայծակի երկու նշաններից ստեղծել է կրակ իմաստը եւ միացել արեւին: Հետագայում այս կենդանակերպերը մտան զարդերի մէջ, մի մասն էլ դիւցազներգութիւնների մէջ, իսկ կայծակի պաշտամունքը միացել էր արեւին, ինչպէս գաղափարագիրն է հաստատում: Արեւոց կրօնքի հարուստ ժառանգութիւնն են հայոց այսօրուայ տառերը, որոնք գաղափարանշան, գաղափարապատկեր եւ գաղափարահմաստ են արտայայտում նոյնքան թարմութեամբ, որքան հնում էին:

Հայոց արեւի հետ կապուած բոլոր անձնանունները՝ Դրակ, Դրաչ, Դրանդ, Դրաչի, հրաչ, Դրաս, Դրահաս եւ նմանակառոյց անուններ, լրացնում եւ ապացուցում են արեւոց կրօնքի սահմանադրութիւնը, որպէս բարձր գարզացած քաղաքակրթութիւն, Եթէ մեզ հարցնեն՝ Հայ ի՞նչ է նշանակում, մեծ հպարտութեամք պիտի ասենք՝ արեւ, արեւաբնոյք, իսկ երբ հարցնէք՝ «Ո՞վ է Մովսէս Խորենացու Հայկ Նահապետը», Մովսէս Խորենացու եւ Հայոց գաղափարանշանների միջեւ երկու-երեք հպարամեակներ է բաժանում եւ արեւապաշտ Հայոց Դայկը, որը հուր արեւ յարեալ կրակն է, արդէն մարդացուել էր ու կրում էր մարդկանց անուն: Մովսէս Խորենացին ճիշդ է ասում Հայոց անուան մասին եւ զա վկայում են Հայոց պատմութեան վկանները՝ սրբազան գաղափարանշանները, որոնք շատ շատ ասելիքներ ունեն իրենց անմահ գաղափարախմատներով: Իսկ օտարները, որ ARMENIA են ասում՝ դարձեալ նշանակում է արեւ: Ինչպէս գիտենք, Հայոց Արա-արեւ իմաստը եւ ՀԱՅ նոյն արեւ իմաստն է: Արա-Մանիա օտարները կոչում էին Հայոց երկրի Արա մարդացուած տիրոջ անունով, այսինքն ԱՐԱԿ երկիր՝ Արարատեան աշխարհ ARMENIA:

Այս շատ խտացուած իմ ուսումնասիրութիւնում չեմ մեկնաբանում այն բաների մասին, որոնք յայտնի են: Գրութիւնս հայոց պատմութեան մեռած ու անհետացած շրջանի մասին է, որը շատ ասելիքներ ունի:

Հայ նշանակում է արեւ, որովհետեւ հայ-իշատու արեւ-յարեալ, արեւոց կրօնքի գլխաւոր տաճարն է. սկզբնական շրջանում գաղափարանշանների՝ հրատու արեւ յարեալ դաւա-նանքին առելացաւ Կ' կրակ, Հրակ, Հրաչ հաւատամքները, իսկ ՀԱՅ գաղափարախմաստին առելացաւ կրակ, կայծակ՝ Կ սր-բազան նշանը եւ ստացաւ ՀԱՅԿ, այսինքն՝ ՀՐԱՏՈՒ ԱՐԵՒ ՅԱՐԵԱԼ ԿՐԱԿ, կամ՝ հրատու արեւից է ծնւում կրակը եւ ինքը՝ արեւը կրակ է: Իսկ հետագայում Ք՝ շատ, մեծ, անմահ, անսահման, արեւելքից արեւմուտք եւ անջրպետ գաղափա-րագրութեան նշանով սահմանուեց ՀԱՅԿ կամ ՀԱՅՔ համա-կարգը (տե՛ս Ք նշանը): Այստեղ ոչ մէկ չափազանցութիւն եւ երազային հնարամտութիւն չկայ, քանի որ գաղափարանշան-ների կառուցուածքն ու գաղափարախմաստի ներքին պարու-նակութիւնը ճշմարտացիօրէն նոյնն են խօսում: Որպէսզի հա-մողուենք այս օրինաշափութեանը, տեսնում ենք որ արեւը ոչ միայն հայ, այլ՝ նայր, Դայր, այր, Վայր, սար, բար, նար, հաց, Ցոլակ, Փայլակ, արեգ-արեգակ եւ շատ շատ իմաստներ ունի, որոնք ի սկզբանէ ունեն սրբազան իմաստ եւ ալօթք են: Իսկ ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ նշանակում է արեւ գեղեցիկ, որ դարձեալ ՀԱՅ է, քանի որ գաղափարանշանները արտայայտում են գաղափարապատկերի գաղափարախմաստը, այդ պատճառով նոյն նշանի ներկայութիւնից իմաստ ենք, որ իմաստը վե-րագրում է այդ նշանին, այսինքն ԱՐԵՒԻՆ: Արեւոց հայոց ՀԱՅԿ կրօնադաւանաբանութիւնը կրակի օրհնութիւնն է, որը արեւի ծնունդ է: Այսպիսով արեւապաշտ-կրակապաշտ հաս-կացողութիւնները սկզբում նոյնանում եին: Հետագայում,




ԽԱՌԱՎԱՀԱՆՉՈՐԴԻՆ ԱՐԵԼՊՈՅ ԿՐՈՆՔԻ ՄԷջ ԼՐԻՒ Բացակայում են այս նշանները

Կրակապաշտութիւնը որոշ մտածողների կողմից մեկնաբանուեց որպէս առանձին կրօնք, որը անհամոզիչ է: Սուրբ էջմիածնի մայր խորանի տակ թաղուած կրակարանը իր հազարալար երակներով կապուել է արեւոց հայոց սրբազն Արարատ լեռան հետ, որպէս հայոց կրօնքի առաջին փարոս, որ դիմաւորել է սրբազն արեւի առաջին ոսկեփայ ճառա-

գայթները. Որպէս հոգու եւ իմաստութեան աղօթամատոյցի ինքնազոհաբերում, արեւի վերջին լոյսը խառնելով իմաստութեան տիեզերական լոյսին, երգւում էր արեւագալի, լոյս, զուարթ, առաջին լոյս, առաւօս լուսոյ, արեւապաշտ երգերու շարք-շարականները։ Առաւօս լուսոյ արեգակն արդար նշանակում է Յայ, Յայկ, Յայֆ, Յայկաստ-արան այսինքն՝ արեւի երկիր։

ԱՐԱՐԱՏ ՍԱՐԻ ԱՆԴՎԱԾՆՈՒՂՋ

Անհրաժեշտ խտացումի ենթարկելով աշխատութեանս այս բաժինը, անմիջապէս խորանում եմ արեւոց հայոց ԱՐ շրջանում, այսինքն արեւոց կրօնահաստատման՝ գաղափարապատկերներից գաղափարախմատների եւ գաղափարանշանների տիեզերախմատասիրական անցման շրջանում, երբ արդէն արեւապաշտութիւնը տարածուել էր Մեծ Հայքում։ Արեւոց հայոց ԱՐ շրջանի վառ ապացոյց է ԱՐԱՐԱՏ սարի անուանածունդը։ Արեւապաշտական կրօնքի սրբազն արեւի սարը (Լեռը), որպէս հաւատքի եւ աղօթքի շօշափելի առարկայական կեղրոնացում, արդէն երկգագաթներին տիսղոսաւորել էր ԱրԱրեւ՝ փոքր Մասիսին եւ Ար-Աս՝ երկրորդ տիսղոսը Մեծ Մասիսին։ Առաւել՝ արեւ տիեզերական կրօնաշեշտումին Արարատ ՍԱՐ նախնական անուանումն է Լե՛ն անուանումից առաջ, քանի որ ՍԱՐ իմաստի կառոյցը ԱՐ է; հսկ որպէս մեծարումի կրօնախմաստասիրական նախախնամութիւն, Ս չափ արտայայտող գաղափարախմաստ տրւում էր ԱՐ իմաստից առաջ, արտայայտելով սահմանումը արեւի սկզբնաւորումին եւ Արարատ սարին մեծարմանը։ Այսպիսով, արեւոց կրօնակղրունքային կառոյցից յստակացում է, որ արեւահաւատքը ունէր սահմանումներ, իրան յատուկ իմաստասիրական հոգեկառոյցով։ ՍԱՐ եւ ԱՐ իմաստակառոյցներից հետեւցնում ենք, որ նախ ԱՐը գիտակցուել էր, յետոյ, Սի աւելացումով, սահմանուեց արեւատեղը՝ Մասիսների վրայ։ Հետեւարար, այս օրինաչափութիւններից եղրակացնում եմ, որ



Արարատ սարի յարանուանումները՝ Մասիս-ազատ անուանումները, արդէն արեւոց կրօնքի մէջ ԱՐ շրջանից հասել են տիեզերախմաստափական ընդարձակ հասկացողութեան, ուստի՝ 1) ԱՐ-ԱՐ, 2) ԱՐ-ԱՐ-ԱԹ, 3) ԱՐ-ԱՐ-ԱՍՏ եւ հետագային լեռ անուանումները, Արարատ սարի անուանափոխութիւնները չեն, այլ՝ սարի մեծարման տիտղոսաւորումները։ Արեւոց հայոց Արարատ լեռան հետ կապուած առասպելներն ու ասացուածքները, անցեալից մինչեւ այսօր եւ վաղը, այնքան շատ են, որ նոյնիսկ թուարկելու անհրաժեշտութիւն չկայ։ Արարատ լեռան անուանափոխութիւնների հետ կապուած առաջին վկայութիւնը՝ Նոյեան Տապանի յօրինուածքային նպատակամղումից զագացում է, որ հայոց լեռը Աստուածաշնչացնելով՝ նոյեան լեռան հետ է կապում։ Երկրորդ՝ Սուրբ Յակոբ Մծրնայ Հայրապետի երազը զարձեալ անհետացել է պատմութեան փոշիների մէջ։

Արեւոց ԱՐ-ԱՐ-ԱՏ սրբազան լեռան հետ առնչուող՝ նոյեան Տապանի պատմութիւնը Աստուածաշնչի մէջ մեծ մեծ զարմանք է պատճառում։ Սակայն ամէն մի գիտակից մտածող, առողջ հաշուարկումներով կ'եղրակացնի, որ եթէ ջրհեղեղը բարձրացրել է նոյեան Տապանը Արարատ լեռան վրայ, սա


նշանակում է, որ համաշխարհային ովկիանոսի ջրային տարողութիւնը կրկին անգամ աւելանալու էր երկրագնդի վրայ, որովհետեւ հինգ հազար մեթր բարձրութեամբ ջրատարողութիւնը աւագ, հող, քար չէ որ մէկ տեղ լցուի եւ անշարժ մնայ, իսկ ջուրը այն ծշմարիտ հեղուկն է, որը եթէ Արարատ լեռան գագաթը բարձրացել է, ուրեմն Հիմալայնան լեռները, Կիլիմանջարոյի լեռը եւ շատ շատ լեռների գագաթները պիտի լինեին միայն փոքրիկ կղզիներ։ Ինչպէս տեսնում ենք, այս բոլորը տրամաբանօրէն անհամոզիչ են։ Սակայն ինչո՞ւ Աստուածաշնչում յիշատակում է Արարատ լեռ անունը։ Աչա այս հարցին ճիշդ պատախանը. Արարատ լեռը ասելով Մասիսները նկատի չունի, այլ՝ Արարատեան երկի որեւիցէ լեռան վրայ, որը Մեծ Դայի հարաւ արեւմտեան Եփրատի աշխարհագրական մասում է։ Աստուածաշնչի Արարատ լեռան՝ Արարատեան աշխարհի արեւոց հայոց սրբազան սարի անունով հայոց երկիրը կոչուել է Արարատեան աշխարհ։ Աչա շատ կարեւոր մի մեծ փաստ, որ Աստուածաշնչի բերանով յիշատակում է արեւոց հայոց Արարատեան երկիրը։ Ինչպէս իմանում ենք շատ շատերը Արարատ լեռան վրայ նոյեան Տապան փնտոելու մեծ փորձեր են անում, եւ ինչ ինչ նպատակներով ուզում են գաղութատիրութեան ենթարկել մարդկանց մտքերը։ Դժուար չէ ենթադրել, որ այդ բոլոր քարոզչութիւնների միակ նպատակն է հայոց ծագումը կապել Տիեաներին։ Այս խաւարամիտ եւ պատմաշեղիչ փորձերը անիմաստ են ու ձախողուած։ Սակայն Աստուածաշնչի բերանով հնչած Արարատեան լեռները այսօրուայ քաղաքական առումով նշանակում են, որ Աստուածաշնչի Արարատեան Աշխաճը արեւոց հայոց քաղաքակրթութեան երկրորդ շրջանն է, իսկ առաջին՝ ՀԱՅ քաղաքակրթական շրջանի մասին անտեղեակ է Աստուածաշնչի պատմիչը։ Ուրեմն եկէք ճիշդ հասկանանք՝ որ

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՏԻ ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆԸ ՄԵՐ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԵՒՈՑ ԼԵՐԱՆ ՔԵՏ ՈՉ ՍԷԿ ԱՌԵՋՈՒԹԻՒՆ ՉՈՒՏԻ: ՆՈՅԵՆԻՍԿ ԱՅԴ ՄԱՍԻՆ ՎԻճԱՐԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԻԱՅՆ ԵՒ ՄԻԱՅՆ ԱՆԳԵԹԵԹՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ՈՒ ՏԿԱՐԱՍՄՈՒԹԵԱՆ ՔԵՏԻԱՆՔ:

Այօր Արարատ լեռը թրքական լեզուով Արարատ չէ:

Նոյն խտացուած ձեւով, մի քանի խօսքով անդրագառնանք ԱՐԱԳԱԾ կամ ԱՐԱՐԳԱՅ կամ ԱՐԱԳԱՀ լերան մասին, ինչպէս վկայում են արեւոց կրօնքի հաստատման հիմքերը, որպէս իրականութիւն, ԱՐԱԳԱԾ լերան անուանածնումը դարձեալ գալիս է արեւից, մենք գիտենք, թէ ինչու կուսաւորչի կանթեղի յօրինումով Արագած լերան անունը փոխելու անյաջող ձգտումներ ատեղծուեցին, ինչպէս Արագածը, այնպէս էլ Արարատը հայոց սրբազն արեւի անունից է ծնուած: Ուստի, դժուար չէ թափանցել մարդկային ենթագիտակցութեան նախապաշարումների ամբողջական ծալքերը եւ նրանց քաղաքական նպատակների բնորոշ մղուածութիւնը, որ դրսեւուել է Գրիգոր (արթոն) կուսաւորիչով:


Այսպիսով, ոչ թէ եթադրում եմ, այլ՝ արեւոց կրօնքի հոգեմտածելածեւի երակը արմատապէս կապուել է այն տարածահատուածի վրայ, որ կտրեց ու նետեց Արթոն կուսաւորիչը: Այս բոլորից երեւում է, որ կուսաւորիչը մուրճով փշրեց ոչ թէ կառուցեց Հայկ աստուծոյ տաճարի գործունեայ հաւատատեղը: Թող հայոց պատմոթեամբ մեծ դաս լինի այսուհետեւ, որ ոչ ոք իրաւոնք ունի ինքնազլուխ, ինքնակամ ձեւով յեղաշրջելու հայոց երկիրը այն փշրելու եւ աւերելու վայրի բնազդով: Խսկական հայր պէտք է գուրզուրայ իր ժողովրդի պատմական գանձերի, վեր պիտի պահի եւ պահպանի իր հարազատ երկրի անգին մշակոյթը, ինչ էլ որ այն լինի: Զկայ աւելի մեծ ստորութիւն եւ դաւաճանութիւն, երբ



վաճառում կամ ոչնչացնում են մեր ազգային հոգու եւ մտքի սրբազն մասունքները: Ո՞վ հայ ժողովուրդ, կոչ եմ անում ձեզ, արթնացեք եւ կտրեցեք այն չարագործ ձեռքերը, որոնք աւերում են մեր սրբազն երկիրը:

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԻ ԱՐԵՒԱՊՍԱԿ ԹԱԳԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Հայոց պատմութիւնը իր անսպառ փաստերով հարստացնում եւ վաւերացնում է պատմական իրադարձութիւնների խսկութիւնը։ Տիգրան Մեծի պատմական գործունէութիւնը, որքան էլ խօսուէր պատմիչների լեզուով, սակայն շատ մեծ պակասութիւններ պիտի զգացուէին առանց նրա դրամական փաստին, որի վրայ դրոշմուել էր հայոց արքայի պատկերը՝ թագաւորական թագով։ Իմ համակրանքը պատմական այս մեծ վաւերականի հանդէս այնքան զգացողական էր ու մօտեցումն՝ ցեղագիտական, որ անկարող էի կեղրոնանալ ինձ շփոթեցնող մի քանի մոլորեցուցիչ կէտերի վրայ, որ դրամի վրայ պատկերուած են Կասկածամտութեանս յուշարարը գեղեցիկ ու խարուսիկ ամհաւասարակշիռ յօրինուածքն է, որը կեղծ է տրա-մարանօրէն, բայց անհրաժեշտութիւն է ճշմարտութեան հա-մար։ Ինչպէս գիտենք, Մեծն Տիգրանի թագի վրայ պատկերուել է հետեւեալ գաղափարապատկերը։ Երկու ար ծիւների մէջտեղը ճառագայթող արեւանշանը։ Սակայն հարց է ծագում, որ Տիգրան Մեծի պատկերը դրամի վրայ կողքից է, ուստի թագի վրայ արեւը թագի ճակատային մասին պէտք է դրոշմուէր եւ մէկ արծուի շարադրումով։ Ահա այստեղ է, որ քանդակործ արուեստագէտը պատկերել է թագաւորի պատկերը կողքից, որը իր նեղ ու սահմանափակ հնարաւորութիւնն էր դրամի վրայ ամբողջացնելու, իսկ թագի պաշտօնամատոյց կառուցուածքը ամբողջութեամբ ընթերցելի է կողքից։ Այսքանը չէր, որ ինձ համար պարզուեց եւ դադարեց գաղտնիք լինելուց։ Այլ՝ մտածողութիւնս արուես-



տագէտի եւ նրա հետ խորհրդակցող թագաւորական յանձնախմբի եւ թագաւորի անմիջական ներկայութեան մասն է, որ պատկերաւոր ձեւով ուզում եմ վերածել իրական կենդանի կեանքի: Որպէս ընական օրինաչափութիւն, դրամի պատրաստման համար եղել էր հրամայական որոշում, ուստի դժուար չի եղրակացնել, որ դրամի կերտումը պէտք է լինէր Տիգրան Մեծի թագադրութեան օրօք, որպէս երկրի տիրակալ: Ուշադրութեան է արժանի դրամի վրայ պատկերուած անմօրուս Տիգրան Մեծը. մենք դիտենք, որ այս օրէնք-սովորութիւնը հոռմէական էր, իսկ հակառակ արեւելեան հոգերանութեան, պէտք է որ Տիգրան Մեծը լինէր չածիլուած: Եթէ Տիգրան Մեծի դրամը կերտուել է Հոռմում եւ շնորհուել է թագաւորին, այս վարկածը անհամոզիչ է, քանի որ հոռմէական կայսրերի թագը նրանց դափնեպսակն էր, իրանց աւանդական դափնիի պաշտամունքը: Եւ այդքան զարդարուն ու ճոխ թագաշնորհումը Տիգրան Մեծին՝ հոգերանօրէն անհամոզիչ է: Տիգրան Մեծի դրամակերտումը կատարուել է Հայաստանում՝ յարգելով հոռմէական հոգերանական կեցուածքի օրինաչափութիւնները: Տիգրան Մեծի թագադրութիւնը աւանդական է. այդ շատ կարեւոր փաստը արեւապաշտ Հայաստանի արեւի գաղափարանշանն է նրա թագի վրայ: Տիգրան Մեծի թագադրութիւնը կատարուել է արեւապաշտ կրօնաւորների ներկայութեամբ, հայալեզու մկրտութեամբ եւ խօսակցութեամբ: Որպէսզի մենք չեռանանք եւ չ'որոնենք ուրիշ փաստեր, կարող ենք ասել, թէ ինչի վրայ էր հիմնուած Տիգրան Մեծի երդումը: Մենք բոլորս իմանում ենք, որ այսօր քրիստոնեայ հովուապետների թագի վրայի ճակատային մասում պատկերուել է Յիսուսի պատկերը կամ խաչը, իր զանազան գեղագիտական հնարանքներով: Ուստի դժուար չէ եղրակացնել, որ հայոց թագաւորի երդումը արեւով էր սահման-

ւում: Եւ այդ սահմանումը հասել է մինչեւ մեր օրերը, երբ լսում ենք «Արեւս վկայ», «Մօրս արեւով» եւ շատ երդումներ, որ հիմնուած են արեւի վրայ: Արեւ հասկացողութեան երկրորդ տարբերակն ու իմաստը լոյսի վրայ երդուելն է, որը նոյնպէս պահպանուել է մինչեւ այսօր: Երբ ասում են «աշքիս լոյսի պէս» նշանակում է լոյսովս կ'երդում: Նոյնիսկ հայոց բանաստեղծներից Յովհաննէս Թումանեանի քերթուածում յիշատակում է. «Արեւդ ապրի շարչի ախրեր», եւ արեւի վրայ շատ շատ վկայութիւններ կան:

Ուրեմն, Տիգրան Մեծի երդումը արեւի վրայ էր: Երեւակայենք, թէ ինչպիսին էր հայոց երկրի հոգերանական առօրեան: Դժուար չի պատմութեան խորքից լսել ժողովրդի ցնծութիւնը, պալատական երգն ու խոնդութիւնը, արեւի հետ կապուած աղօթքներն ու ցնծութիւնները: Բանաստեղծների հայանչիւն ասացուածքները, գուսանների երգն ու գովերգական մրցոյթները, որ յատուկ էր մարդկային հոգերանութեան կառոյցին: Եւ այսպէս, թափանցելով ճշմարիտ իրականութիւնում, մենք անկասկած իրական սակայն անհետացած պատմական եղելութեանը ճշմարիտ օրինաչափութեան ականատեսը կը լինենք: Տիգրան Մեծի թագաւորութիւնից յետոյ, երբ արդէն լիովին հաստատուել էր թագաւորական օրէնքը հայոց տարածքում, անմիջապէս անհրաժեշտութիւն էր Տիգրան Մեծի դրամի պատրաստման ծրագիրը: Հրաւիրում էին քանդակագործ գեղանկարիչ արուեստագէտները, որոնք արդէն շատ լաւ իմանում էին իրենց հարազատ երկրի պանծալի թագաւորի դիմագիծը, նրա թագի ամ բողջական խորհրդանիշը՝ իր թանկարժէք գունաւոր մշակուած քարերով, ուսկու ցոլացող փայլուն ծիրանագոյն եւ կարմիր կապոյտ գոյնագաղափարայորինումներով: Տիգրան Մեծի դրամի պատրաստմանը ներկայ էր ինքը՝ հայոց թագաւոր Մեծն Տիգրանը, որի գոհունա-

կութեան կենդանի ու հայարնոյթ արտայայտութիւնը ներկայացնելու եմ ստորեւ: Ինչպէս բոլոր հայերս գիտենք ամսվերապահ մնալ՝ երբ մէկը մեծարում են, յատկապէս այն պարզ ու անմիջական ժամանակները, երբ ամէն բան կատարւում էր անմիջականօրէն, առանց յետաձգուածութեան: Երբ Տիգրան Մեծի ներկայացուեց պատրաստուած ոսկեծոյլ դրամը, այդ ոսկեծոյլ, որովհետեւ չէր կարող պարզ մետաղից լինել, Տիգրան Մեծը ժատուն եւ ծիծաղկուտ, նոյնիսկ իր դիմագծի նմանութեան մանրամասնութեանը չհետապնդող անկեղծութեամբ, բոլոր ներկաներին ընդունեց գոհունակութեամբ ու սիրալի: Եւ ես պատկերացնում եմ այն քանդակագործ արուեստագէտի հոգու հապարտութիւնը, որին մեծ պատի էր ընծայուած թագաւորական դրամի պատրաստումը: Այստեղ ոչ մէկ չափագանցութիւն կայ, որ մենք ներկայ լինեինք այստեղ: Այս բոլորը բնական օրինաշափ երեւոյթ է բոլոր ժամանակների համար: Եւ այս գրածս յօրինուած չէ, այլ՝ գրուած՝ ճշմարտութեան մարդկային հոգուն յատուկ ընդհանրական չափանիշներով: Տիգրան Մեծի դրամից բացի, հայոց թագաւորի մեծ արձանները պատրաստեցին, որ պատմութեան ո՞ր ծալքերում ընկդմեցան՝ մենք չգիտենք: Սակայն շատ լաւ գիտենք, որ նրա արձանները անպայման կային: Եթէ այսօր չկան՝ չի նշանակում, որ չեն եղել: Մենք էլ այսօր կանք եւ վաղը չենք լինելու, եւ դա չի նշանակում, որ մենք չենք եղել: Ուստի ես մատնանշելու եմ մի ուրիշ շատ կարեւոր երեւոյթ: Երկու արծիւների խորհրդանիշը՝ որպէս շատ կարեւոր անհրաժեշտութիւն թագի վրայ: Արծուի խորհրդանիշը երկնքի գաղափարն է, որի մէջ ութաթեւ ճառագայթող արեւի նշանն է: Այս գաղափարապատկերների դասաւորումից ընթերցում եմ հետեւեալ գաղափարահմաստի ընդարձակ մեկնարանումը, որը լրացնելու է արեւի երդումին անհրաժեշտ լինելու առկա-

յութիւնը. Երկու արծիւների մէջտեղը փայլող ոսկեծոյլ արեւը խորհրդանշում է հայոց թագաւորի արծուազօր, վեհ, ընդհանրականի վրայ տեսնող, իշխող, ազատ ճախրող թոշունի խորհրդանշանով պահպանող սրբազն արեւը: Եւ այդ պատճառով է, որ արեւը պատկերուել է ամբողջական տեսքով՝ կողմնակի դիրքից: Սակայն թագի վրայ կայ արեւից վեր, սրածայր եռանկիւնածեւ դէպի երկինք ձգուած ներդաշնակ բաժանումներով թագի աւարտական վիճակը, որի ամէն մէկ սրածայր եռանկեան ծայրին ամրացուել է մարգարտեայ գունդ: Արեւից վերեւ արտայայտուած այս զիկզակածեւ կտրտուածքը խորհրդանշում է անսահմանութիւնը տիեզերքի: Որոշ հնագէտներ այն ենթադրում են որպէս վիշապածեւ: Ես չեմ հակադրուած այդ ենթադրութեանը, սակայն իմ կարծիքով արեւից վերեւ վիշապագաղափարի ըմբոնումը անհամոզիչ է, որպէս հոգեբանական, գեղագիտական դրսեւորում, երկրորդ պարագայում լրացնում է անսահմանութիւն լինելու անհրաժեշտ գաղափարը, դա արեւի ազատութեան իմաստի բնազդային ըմբոնումն է: Ուստի, հայոց մօտ օձի, վիշապի պատկերումները տարբեր դրսեւորումներ են: Տիգրան Մեծի դրամի վրայ կայ զարդարանք եւ չափ արտայայտող խորհրդանիշ, որի գաղափարազգացողութիւնը աւելի արեւախորհրդանշական է, որպէս թագաւորի արեւապսակ. ընդհանրապէս այդ պատկերակառոյցներից կարելի է հետեւել նրա շատ պարզ ձեւին, սակայն խոր գաղափարաբնոյթ արտայայտող ներքին նպատակով վերածում է գոց, ինքնամփոփի նշանի: Սակայն զգացմունքամղումից դժուար չի ենթադրել, որ դա պատկանում է արեւային իմաստ արտայայտող բնազդախմբին: Տիգրան Մեծի դրամի բազմացումը եւ տարածումը հայոց մետաղածուլումը ներկայացնող կենդանի վկայութիւն է: Եւ շատ կարեւոր է դիմագծի հայաբնոյթ արտայայտութիւնը, որը

նկատուել է Խորենացու նկարագրութեան մէջ Տիգրանի մասին: Այսքանով չի աւարտում Մեծն Տիգրանի թագի եւ դրամի հետ կապուած ուսումնասիրութիւններս, այլ գիտակցում, որ ինձ համար շատ անյայտութիւններ տակաւին մեկնարանութեան կարիքը ունեն: Եւ դարձեալ պիտի խորանամ գաղտնիքների խորքը՝ թագի եւ դիմագծի առնչութեամբ: Տիգրան Մեծի դրամի վրայ պատկերուած քոլոր գաղափարախմասոնները վկայում են Հայոց արեւապաշտ լինելու պատմական փաստի մասին, որը պատմական մեծ անհրաժեշտութիւն է Հայոց կրօնաքաղաքական մշակոյթի ասպարէզում: Տիգրան Մեծի թագը պատմական մեծ հանդրուան է. նրանից յետոյ Հայոց թագերը ձեւափոխուեցին ու տեսակաւորուեցին, որտեղ նկատելի է արեւի եւ արծիւների բացակայութիւնը: Տիգրան Մեծի թագը ապացուցում է արեւի եւ արծուի Համատեղ գաղափարախմատը, որը մինչեւ այսօր համատեղ գետեղում է: Սակայն լաւ գիտենք, թէ ինչու Զուարթնոցի արծիւը առանց արեւի է: Բայց այսօրուայ արուեստագէտներից շատ շատերը արեւը պատկերում են արծուի թեւերի վրայ: Այս գաղտնիքները հիացնում են իրենց խորիմաստութեամբ, մեզ ուրախացնում են, որպէս Հայոց պատմութեան մասունքներ, որպէս սրբազն նմոյշներ, մեր ժողովրդի ինքնատիպ եւ ինքնուրոյն լինելու վկայութիւններ:

Ով հայ ժողովուրդ, դարձեալ կոչ եմ անում ձեզ՝ արքացեւ եւ սրափուեցե՛մ, մի թոյլ տա՞ որ որեւից մեկը հայիոյի կամ ծաղրի, ոչնչացնի կամ թալանի մեր սրբազն հայրենիք: Ո՞վ հայ ժողովուրդ, որ զաւակներիդ սովորեցրու, որ խոնարհուել իմանան մայր հայրենիքի անմահ հոգու համար: Ազգուրացները թոյ դարձի գան: Չո թենամիներդ որ որ միջից կլինեն, աններող եղիր նրանց հանդէտ: Մի՞թ դատերազմները աւարտուեցան, մի՞թ թենամիներդ վերացան: Ո՞չ: Նրանց աւե-

լի շատացան: Ով հայ ժողովուրդ, որ միտք թոյ ուրիշներով չիմայուի եւ ուրիշին թմբուկը բաւ է թմբկահարես որ անմիտ հոգու եւ մտի մեջ: Մի՛ հաւատա սուս ուսուցումներին, որոնց թակարդը որ համար է շինուած: Ով հայ ժողովուրդ, որ սրբազն հայրենիքը ամեն բանից վեր է եւ ամեն բանից թաճկ, ամեն բանից վեհ:

ՍՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՏԻԵԶԵՐԱԽԱՍՏԻՍԱՐԱԿԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՄՔ

Տիեզերահանձար ականատեսի գօրութիւնով, հայոց պատմութիւնը դիտենք երկնալսարանից այն կողմը բացուող արեւամատեանի մէջ։ Սա ոչ թէ համոզումս է միայն, այլ մարդկային օրինաշափ երեւոյթ է համաշխարհային առումով, որպէս ընդհանրական սահմանում։ Խորենացու Հայկի եւ Բէլի պատերազմը եւ հայոց անուան ծագումը հեքիաթային գեղեցիկ յօրինուածք ունի եւ հայերիս հայ կոչուելու այս անիմանալի վարկածը միշտ մնացել էր հարցական։ Ինչո՞ւ համար հայ եւ ո՞վ էր Հայկը։ Ահա այստեղից է, որ մեկնարանելու եմ այս բոլորը։


Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւնը ամ բողջութեամք համապատասխանում է հայոց բնաշխարհի աշխարհագրական, երկրաբանական, բնակլիմայական տիեզերաժամանակահատուածին եւ բնաձայնաբարտարելման հոգեմտածելակառոյցին։ Ուստի, այն մեծ փաստերը, որ հասել են Խորենացուն, ոչ թէ պատառիկներ են, այլ՝ խոտացուած վաւերագրութիւններ։ Ինչպէս երեւում է պատմութիւնից, Հայկի եւ Բէլի պատերազմը ոչ թէ դիւցազունների պատերազմ, այլ կրօնաքաղաքական պատերազմ էր։ Հայկը իր անունը ժառանգել էր իր նախնիների՝ արիացիների Արեհ անունից, եւ որպէս մեկնարանում՝ ՀԱՅ նշանակում ԱՐԵՀԱԲՆՈՅԹ։

Այն բոլոր վարկածները, որոնք երազային ենթադրութիւն-

ներով հայոց պատմութիւնը փորձում են կապել նոյեան Տապանի հետ, չարաշար սխալում են, քանի որ Արարատի վրայ նոյեան Տապան փնտողների խաւարամտութիւնը արդէն յայտնաբերել եմ (Տե՛ս «Արարատ Սարի Անուանածնունդը»)։

Այս պատկերում արեւից յառաջացած՝ չ, Յ գաղափարախմաստները ամ բողջութեամք հարազատ են մարդկային հոգեմտակառոյցի պարզ արտայայտածելին՝ որպէս իմաստաձեւի ըմբռնում։ ՀԱՅ, ՀԱՅԿ, ՀԱՅՔ շերտաւորումները ապացուցում են կենսահմացական, յաջորդական զարգացումների օրինաչափ հոգեբանական դրսեւորումները, որոնք որպէս զաղափարախմաստ արեւաբնոյթ են։ Այս բոլոր իմաստները արդէն ճշմարտութեամք մեկնարանում են գաղափարախմաստները եւ նրանց խորհուրդները։ Խորենացին քրիստոնեայ վարդապետ էր, նա չէր կարող գրել Յայկ աստուծոյ եւ Բէլի դասերազմը, դա համականալի է մեզ։ Ուրիշ մէկ գաղտնիք այն է, որ տեսնելու ենք ճշմարտութեան լոյսի տակ, որ Խորենացին ինքը թաքցնում է ոչ թէ մեզանից, այլ քրիստոնէական կրօնից, որը նրա համար մահու-կենաց խնդիր էր։ Խորենացին ոչ թէ հաւաքել է ժողովրդական բանահիւսութիւնից մնացած գողթան երգերը եւ աւանդապատումները, այլ իր ծերոֆի տակ ուներ արիացիների հայալեզու արեւոց կրօնաքաղաքական կառուեմատեան մագաղաբը։

Առողջ մտածող միտքը անպայման կը թափանցի Խորենացու ներքնաշխարհը, Եթէ Խորենացին հաւաքէր ժողովրդից, այդ հաւաքելը աւելի մեծ պատասխանատուութեան առաջ էր տանելու Խորենացուն՝ քրիստոնէական նորակառոյց եւ դաժան կրօնիք դիմաց։ Ուրեմն բացառուած էր այդ «խառնակչական» քայլը։ Իսկ այն փաստը, որ Խորենացին երդւում է, որ իր պատմութիւնը ճշմարիտ է եւ ոչ յօրինուածք, դա բացում է



«Տիեզերական Աղօթքը», իւղանկար՝ գործ Մկրտիչ Ասլանեանի

այն գաղտնիքը, թէ ինչի վրայ էր երդում ճշմարտութեան անունով: Բոլոր կողմերով ի յայտ է գալիս այն մեծ ճշմարիտ փաստը, որ Խորենացին պահել էր արեւոց Կրօնի դատնութեան Վկայութիւնները, ոօշափելի հիմքեր ունենալով գրի առնել հայոց դատնութիւնը: Այս իրողութեանը նոյնիսկ տեղեակ էին ուրիշ քրիստոնեայ վարդապետներ, սակայն, վախենալով միմիայնցից, միշտ կասկածանքով եւ գաղտնապահութեանը են մօտեցել այս կենսախնդիր Հարցին: Նոյն պատկերը տեսնում ենք Մեսրոպ Մաշտոցի հայոց տառերի պարագային: Մաշտոց իր ձեռքի տակ ուներ արեւոց խորհրդանշանները, սակայն ինքը եղաւ նրանց բիստոնեամկրտող, բիստոնեամկրտող: Նոյն վախով են մօտեցել հայոց միւս պատմիչները. վախի եւ սարսափի բախտորոշ լուծը իրենց վզին առները.

լով, ինչպէս գիտենք, այս սրբազան պատմիչները բոլորն էլ հալածուեցին եւ կոչուեցին երանելիներ: Ինչո՞ւ Համար այս վարդապետները ժողովրդի մօտ աւելի մեծարուեցին եւ սրբացուեցին, քան թագաւորներն ու կաթողիկոսները: Մէկ ուրիշ շատ կարեւոր փաստ ունենք, որը անկարող է որ երկնալսարանիս տիեզերախմաստ լոյսի տակ խաւար մնայ: Դա Աստուածաշնչի թարգմանութիւնն է՝ հայալեզու, հայատառ, կառւեմատեան գրութիւնը, որը կոչուեց թագուհի թարգմանչաց: Արդէն պատմութիւնը իր լեզուով խօսում է արեւոց մասկոյթի առկայութեան մասին, որից ատիպուած էին սնուելու, որովհետեւ ուրիշ ելք չունեին: Իսկ ինչո՞ւ էին ատիպուած հայոց Երկրի ղեկավարական դաշտոնակառոյցը յեղացրջել եւ ոչնչացնել արեւոց հայոց հազարամեայ բաղաբակրութիւնը՝ ինքն ըստ ինքեան մնաց անելանելի վիճակի մէջ եւ միակ փրկութիւնը գտաւ իր նախնեաց մէջ: Մովսէս Խորենացին զգուշութեամբ էր զրում հայոց պատմութիւնը եւ որպէս Հայրենասիրական գաղափարախօսութիւն՝ մեծարում ու չափազանցում էր ՅԱՅՅ նահապետին իր քաջութեամբ եւ զօրութեամբ: Արդէն Խորենացու գրական լեզուի ներքնաշխարհը ամ բողջովին արհական հոգեբանութեանը յատուկ հոգեմտամղունով է գրուել եւ ի զուր չի, որ Խորենացին իմ հոգեբանութեանս մէջ միշտ եղել է արհացիների արեւակրօն սերնդի կենսածին ամենամեծ ներկայացուցիչ ժառանգորդն ու վկան: Որպէս գիտական հիմնաւորում ժառանգականութեան եւ ոչ քաղաքական ձեւափիխում կենսարանական առումով, այս մեծ փաստը հիմնովին հաստատուել է: Խորենացու Արա Գեղեցիկ եւ Շամիրամ պատմուածքում նոյնիսկ յիշատակուում են այնպիսի անուններ, որոնք առանց վաերականի, երդուեալ մէծ պատմիչի համար ինքնապատասխանատուութիւն էր զրել երեւակայութեամբ:

Արա Գեղեցիկը, արխացիների արեւոց կրօնի նորոգուած արեւի դաւանաբանական ձեւն է, որը Արա Գեղեցիկ անունը ստացաւ Շամիրամի դեմ դատերազմելուց յետոյ յարութիւն առնելով։ Արա Գեղեցիկի եւ Շամիրամի պատմութիւնը միայն սիրային եւ Հայրենասիրական պատմութիւն չէ, նրա խորքում փայլատակում է արեւոց հայոց արեւակրօն քաղաքակրթութեան ինքնակերտումի մեծ պատերազմը։ Նոյնիսկ շատ կարեւոր է մեզ Համար տեսնել Շամիրամ ասորական արեւ անուան հետ միացած եղիպտական (RAM) արեւ կառոյցը, որը դարձեալ ուշագրաւ մի երեւոյթ է իմանալու, որ Արա Գեղեցիկի պարտութիւնը ասորա-Եգիտական կրօնաբաղաբական ուժի դիմաց օրինաչափ էր։ Խորենացու Հերոսները (թէ՝ Արան, թէ՝ Հայկը նշանակում են արեւ), որոնք իրական են արմատապէս, վկայում են արխացիների հետ առնչուող փաստերի մասին։ Նոյն պարագան է Տիգրանի պատմութիւնը, իսկ գողթան երգերից Վահագնի ծնունդը, մեծ վկայութիւնն է արեւոց կրօնի դառակամանը եւ բազմաստուածութեան անցնանը։ Բոլոր, բոլոր գրութիւնները հիմնուել են կենաբանական հիմունքների վրայ, Պատմութեան լեզուից իմանում ենք Խորենացու Հալածուելը եւ դժուար չէ ենթադրել Հալածանքի մեծ պատճառները։ Իսկ Հալածուելից իմանում ենք նրանց դաժան, կրօնամոլ, ծայրայեղ, խաւարամիտ, ազգաւեր, կիսավայրենի վերաբերմունքների մասին։ Մովսէս Խորենացու լայնախոռն տիեզերահանձար մտածողութիւնը իր նախնիներից ժառանգած կենսածնութիւնն է, որը մենք տեսնում ենք իր նախորդների մէջ, որոնք դարձեալ սկսեցին քրիստոնէական կրօնքի միջից փառարանել արեւը։ Հայոց սրբազան հայրեւը իրենց հոգին բացեցին արեւի դիմաց եւ այստեղից ծնունդ առա արխացիների կրակէ ոգին։ Ուստի, մեզ բոլորիս թող յայտնի լինի, որ Հայը, Արան, Արամը, ծոլակը, Հրակը, բոլորը նշա-

նակում են արեւ, արեւաբնոյթ։ Այդ են ասում արեւոց սրբազան գաղափարանշանները։ Իսկ օտարները մեզ ինչ որ կոչեն՝ ARMENIA նորից նշանակում է ԱՐԵՒ-ԱՍՏԱՆ, ԱՐԵՒԻ ԵՐԿԻՐ, Այս երեւոյթը միայն Հայերիս յատուկ չէ. օրինակ՝ (Վիրքի) վրացի ժողովուրդը մեզ անուանում է սոմեխի, իսկ իրենք իրենց ասում են քառթուլի, ոուսերը նրանց երկիրը կոչում են Գոռոգիա, իսկ անգլերէն՝ Georgia, Այսպիսով, թող այս օրինաշափութիւնները, որոնք պատմական երեւոյթներ են, ձեր մտքի շեղուելու պատճառ չդառնան։

Վերջնական եւ ընդհանրական եղրակացութեամք՝ կարմիր գծի նման, սկիզբից մինչեւ այսօր, Հայոց պատմութեան կառոյցը ազգակերտումի ազգային ամբողջականութեամք խտացուած է այս ուղղու վրայ, որի հիմքերը սկսում են նախամարդուց, որը Հայոց լեռնաշխարհում արդէն կենսաւորուած էր եւ այնտեղից զարգանում եւ արեւակրօնի կերտումով ազգայնանում, գոյատեւում է մինչեւ մեր օրերը. իսկ պատմական անցուղարձերը, կրօնաբաղաքական յեղաշրջումները Հայոց ազգային կառոյցէն չեն կարողացել ոչնչացնել Հայոց ազգային, լեզուական եւ գրաւոր արիական դրոշմը։ Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւնը ամբողջութեամք ձիշդ է, որի խորիմացութիւնը մեր սրբազան պարտքն է։

ԲԱՄ Է ԶԱՐՉԱՐԵՆՔ ՄՐԵՒՈՑ ՀԱՅՈՑ ՊԱՏՍՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս որ խաւարի բանալին լոյսն է, այդպէս էլ խաւարամտութեան բանալին իմաստութիւնն է, որը եւ կոչ- տում է լոյս իմաստութեան։ Այս մտքերի ծնունդը այն մեծ ու վեհ գաղափարախօսականի արդիւնքն է, որի արշալոյսը բաց- տում է տիեզերահմաստասիրական մտքի ԱՐԵՒԱԾԻՆ լամա- նում։ Սթափումի, արթնութեան, երազայինից իրականութեան անցնելու առաքելական ուղիս կապելու եմ տիեզերահանձար ե- րեք սկզբունքների՝ ԱՐԵՒ, ԶՈՒ, ՇՈՂ աշխարհաճանաշումնե- րի հետ։ Ուստի, շատ յստակ է, որ այս երեքի միացումներից ստեղծուելու էին նորիմաստ շերտաւորումներ՝ ԼՈՅՍ, ՕՂ, ԲՈՅՍ, ԿԵՆԴԱՆԻ, եւ այս օրինաշափութեամբ ստեղծուելու են ուրիշ հոգենտաշերտաւորումներ՝ կրակ, հուր, հողմ, հրաբուխ, ջրիեղեղ եւ շատ նմանօրինակ հոգեմտաշերտաւորումներ, իրենց զանազան արտայայտչակառոյցներով։ Իմ համոզումս է, որ ՇԱՅ նշանակում է արեւ, եւ արեւոց հայոց արե- ւապաշտական կրօնքի դաւանարանութիւնը հիմնուել է արեւի վրայ։ Իսկ այսքանից յետոյ ունեմ հետեւեալ եւ շատ կարե- ւոր մի նոր համոզում եւս, որ նոյնպէս հիմնուել է տիեզե- րահանձար մտքի վրայ, որը եւ լինելու է հայոց պատմութեան ճշմարիտ մեկնարանը։ լսարանիս Հ-ԱՍՏ-ԱՏումով ի յայտ եմ բերած Հոգենտակառոյցների շերտաւորման բնակլիմայական փոխյարաբերութիւններից ժառանգած իմաստների ծայնար- տարերման օրինաչափ կաղերը, արեւոց հայոց սրբազան գաղափարանաներում։ Արեւոց հայոց (ԱՐ) ձայնարտարե-

րումը պատահական եւ քմահաճ կամայականութեան արտա- յայտութիւն չի, այլ հիմնուել է Սեծ Դայի բնակլիմայական դայմանների եւ մարդի վրայ ներգործած արեւածառագայ- թային լոյսի ու ջերմութեան ազդեցութիւններից։

ԱՐ- Ր = ձայնարտարերումը, որպէս կենսարնա- կլիմայամիջոց, բնածին է եւ դասակարգաւորում է արեւ, արի, արիացի - այսինքն արեւի եւկրից, արեւածին, արեւադաս հիմնաւորումը։ Աշխարհի հնագոյն ժողովուրդների մէջ, հայե- րից բացի արեւապաշտ էին եգիպտացիները, ասորիները, յոմերը, օրինակ՝ հին եգիպտական ՐԱ - արեւ ձայնարտա- բերման հոգենտակառոյցը ամ բողջութեամբ համապատասխա- նում է հին եգիպտոսի կենսարնակլիմայական դայմաններին։ Արեւի հօգ ջերմութը ստիղել է մարդուն՝ որոյս դարտեալի՝ բողոքի, վախի, տանչանի աղերսահնչում - ՐԱ՝ Ա՝ արտա- յայտել, այսինքն՝ տաք, շոգ, կարծր, խեղդեցուցիչ, դաժան, ձնշող։ ՐԱ ձայնարտարերումը ծնուած է ոչ լեռնային, ոչ էլ ծովեզերեայ շրջանում, այլ՝ առաւօտից մինչեւ իրիկուն արե- ւատառապեալ մարդու ըմբռոստառութասպառ արտայայտութիւ- նն է ՐԱ՝ Ա։ Հնչիւնը Ր հնչիւնի կարծր, առարկայականից Ա հոգեկան ձեւի փոխարինման միակ միջոցն է, որը հաստա- տում է Ր-ի եւ Ա-ի բնածին եւ անխախտ կառոյցը։ Նոյն պատկերը դրոշմուած է հին եգիպտոսի դաժան քաղաքա- կրթութիւնում, իր արիւնախում բուրգերով եւ մեղքի մէջ կորած մարդաստուածների անիմաստ դամբարանաշինու- թիւններով։ Եգիպտոսի յուշարձանների մէջ շաղախուել են միլիոնաւոր մարդկանց արցունքի, մեղքի, արիւնի, լացի, սո- վամահութեան դաժան նկարագրութիւնները։ Այս է RAMSEZ արեւածնի կարծր կնիքը։ Համեմատութեամբ ՐԱ-ի, ասորական ՏՀԱ, ՇԱՄ՝ արեւ հասկացողութեան բնակլիմայական կառոյցը աւելի մեղմ է եւ ՇԱՄ ձայնարտարերման հոգե-

մտակառոյցը հիմնուել է լեռնահովիտային արշալուսային տեսարանի վրայ՝ որպէս զարմանք գեղեցկութեան, որպէս շերմութեան կիսամեղմ պատկերացնկալում:

Ինչ վերաբերում է յունական HELL-արեւ, HELIOS-արեւ կառոյցը, ուշ շրջանի հոգեբանական դրսեւորում ունի, համեմատութեամբ RA, ☀Ա, ԱՐ արեւակրօն երկրների: Ինչպէս երեւում է, HELIOSը հանգիստ մտածելաարտայայտաձեւ է եւ ոչ անմիջական բնակլիմայական արտայայտամիջոց: Այսպիսով, HELIOS հանգիստ կառոյցը ստեղծուել է ծովեղերեայ մեղմ լեռնահարթավայրային տարածքաժամանակամիջոցում:

Արեւոց ԱՐ հնչիւնը մեծ առնչութիւն ունի Մեծ Հայքի բնակլիմայական ձայնաարտաքերումների հետ: ԱՐ կառոյցից բացի, հայոց հոգեբանութեանը յատուկ են Ա-ի վրայ հիմնուած հոգեծայնաարտաքերուող հնչիւններ: Ա'ս - ցաւ, ա~հ - հոգս, ա~յ - մեղմ ցաւ, Վա~յ - զգուշացում, նա~յ - երգ, Պա~յ - պար, Տա~յ - երգ: Սրանցից բացի, ունենք հեյ, հոյ, էլիտյ, Վա~յ-վույ եւ շատ ձայնաարտաքերումներ, որոնց մէջ երբեք չկայ R կարծր հնչածեւք: Օտարները անկարող լինելով արտայայտել Ռ փափուկ ձեւը՝ հնչում են R:

Մեկնաբանութեանս բուն նպատակն էր այս համեմատութիւններով ապացուցել արեւոց հայոց ԱՐ - ✶ արեւապաշտական կրօնքի ծագում-զարգացումը եւ նրա ազգայնացումը շփնտուել օտարների մէջ: Արեւոց ԱՐ ✶ աստրաց ՇԱՄը եւ եղիպտական ԲԱՆ իրենց հիմքերով ոչ մի առնչութիւն չունեն, եւ ամէնքն էլ ինքնայատուկ, բնածին, արեւակրօն դաւանանքներ են. բաւ է չարշարէք հայոց պատմութիւնը, հայոց հոգեբանութիւնը հայոց աշխարհի տիեզերաբնակլիմայական արտայայտութիւն է: Հայոց բնակլիմայական դրոշմը կնքուել է հայ ժողովրդի հոգեբանութիւնում: Հայը երբեք ուրիշին ստրկացնելու, ուրիշին շահագործելու, ճնշելու, կողոպտելու

բնաւորութիւն չունի: Հայի բնաւորութեանը յատուկ է ստեղծագործել ինքնուրոյն կարողութեամբ: Հայը իր պատմական հազարամեակներում ոչ մի անգամ փոխել կամ փոխ առել է իր լեզուն ու գիրը: Այս բոլորը հայ ժողովրդի բուն հոգեբանական արտայայտութիւններն են, որոնք ծնուել են հայոց լեռնաշխարհի մէջ, նոյնիսկ տիեզերական աշխարհագրական առումով:

Շատ կարեւոր է այստեղ շեշտել այն մեծ պատմական իրականութիւնը, որ տարագիր հայութիւնը օտար ժողովուրդների հետ համերաշխ եւ խաղաղ ապրելու բնաւորութիւն ունի, առանց կորցնելու իր ազգային արժանապատութիւնը: Ստեղծագործ հայ ժողովուրդի ազգային կառոյցի խորքում, բնազդաժամանգումի զարկերակը կապուել է իր արդար դատի, իր պատմական հայրենական հողերի պահանջով: Հայ ժողովուրդի սրբազն ուխտն է վերադառնալ եւ նորոգել իր պապենական հողերի վրայ կառուցուած տաճարներն ու ամրոցները, պահպանել մշակոյթի գործերը:

ՍՎԱՍՏԻՑԱՅԻ ՄՏԱՐՈԳԵԿԱՌՈՅՑՅԻ ՏԻԵԶԵՐԱՐԱՆՆԱՐ ԻՄԱՍՏԱԿՆԻՔԸ

Հաւանաբար շատերի համար հարց է առաջանալու եւ վիճաբանութիւնների հարցականներ է ծնելու, թէ ինչո՞ւ համար ինձ հետաքրքրել է այս ուղղութեամբ աշխատել եւ ընդարձակ մեկնաբանութիւններով բնութագրել սվաստիքայի տիեզերակմաստ կառոյցը:


Այս է ջջմարիտ պատասխանա, որ ինձանից իմանում էք: Դրանք մասնագիտութիւններս են որոնցում խորացել եմ՝ գեղանկարչութիւնը, իմաստասիրութիւնը, քանդակագործութիւնը եւ այլ հետաքրքրութիւններ:

Նախքան սվաստիքայի իմացականութեանը հասնելս, ես միշտ գծել եմ այս մոգական նշանի պատկերը, առանց իմանալու, թէ ինչո՞ւ համար եմ մագնիսացել այս գաղտնիքի հմայութեամբ: 1980 թուականից առաջ, ֆաշիստական Գերմանիայի շարժապատկերների մէջ ծածանող այս նշանը ինձ համար եղել է մի մեծ հարցական, որ ամբողջութեամբ մտքիս հետաքրքրութիւնը իր վրայ է սեւեռել: Բազմաթեւ սվաստիքան ազատ պատկերում էի եւ ամէն պատկերից յետոյ հոգու մեծ բաւականութեամբ սպառում էի նրա լիցքի հանգուցային շերտաւորումները, որպէս գեղագիտական ըմբոնում: Այս պատկերի կենդանի եւ շնչուն լինելու ներկայութիւնը չէի ըմբոնել իմացապէս, իսկ իմաստասիրական սէրս աւելի էր մագնիսանում եւ խորանում դէպի սվաստիքան, իմ մէջ զօրացնելով իր անյայտութեան հարցականները: Տիեզերակմաստասիրական ծայրագոյն տրամաբանական մտածողութեան իմաստալսարանիս մտարնթացքում, քառաթեւ սվաստիքայի

հետ ունեցած անյայտութիւնը իր մէջ ներթափանցելու կարողութեամբ պակուեց: Իսկ խորացմանս բուն բանալին եղան արեւոց հայոց սրբազն իմաստանշանները, որոնք արդէն մեկնել եմ՝ ըստ իրենց բովանդակառոյցի:


Սվաստիքայի մոգականութիւնը արթնացրեց հոգեհմացութեանս կենսակառոյցի կապը անյայտի հետ, որպէս նախնաց ժառանգութիւն: Ես չէի իմանում, բայց խորհում էի: Այստեղ ոչ մէկ պատահականութիւն չկայ: Ինչպէս համաշխարհային շրաերակները բաժանուել են գէտերի եւ ամէն մի գէտ ունի իր մէջ խառնուած տանելիքը, այդպէս էլ մենք ենք: Մեզանով է արտայայտում մեզանից առաջ եղածն ու շեղածը, անկախ մեր իմացութիւնից, ուստի յետոյ ենք իմանում, երբ զգում ենք եղածի ամ բողչականութիւնը: Իմ ծննդավայրս Ծիրան-Ծիրա գիւղն է, որը Ախալցխայի շրջանում է, սակայն իմ ապուապերս, որոնց ժառանգորդն եմ, գաղթել են Մեծ Հայքի Ծիրանեան լեռներից, որը եւ արևապաշտ Հայաստանի սրբազն լեռներն են՝ օծուած Ծիրան պատկերախմաստային կառոյցով: Ծիրանեաց լեռներ այն ժամանակի առումով նշանակում էր արեւի լեռներ, յատկապէս ծիրանի ծառերի բերքատութեան համար: Ինչպէս գիտենք, օտարները ծիրանը կոչել են Հայկական ինձոր, սալոր անուններով: Ուրեմն, դժուար չէ իմացութեան հանգրուանից դիտել իրադարձութիւնների ամ բողչականութիւնը: Իմ նախնիներիս մտքի եւ հոգու հզօր կապը այնքան զօրաւոր է եղել, որ յարութիւն առնելու արտայայտչամիջոցը այս պարագային ինձանով է դրսեւորուել: Այս օրինաշափ գիտաերեւոյթը, համաշխարհային առումով, էութեան անտեսանելի ասպարեզին պատկանող ճանաշում է, որի ներքնապատճառների գիտակցումը իմանում ենք նրա հետեւանքներից: Ժառանգականութեան կենսաբանական ընթացքը կեանքի շարժուն ձեւն է, որի փոփոխութիւննե-

ըս ոչ թէ անհետանում, այլ շերտաւորւում են իրենց ծալքերի մէջ, ստեղծելով հոգու եւ մտքի խտացուած կենդանի տարողութիւն, որը կենդրոնացուել է սաղմնախառնուրդային հիւսուածքներում, որպէս մարդկային հոգու եւ մտքի հետազայգարգացում։ Այս բոլոր օրինաչափութիւններից դժուար չէ այլեւս իմանալ, թէ ինչպիսի ճանապարհով նախնեաց իմաստաշխարհը մէշտեղ է ելնում իր տիեզերահանձար հոգեմտասսպարեզով։



ԱՐԹՆԱՑԵԱԼ ԽՈՐՀՐԴԱԿԱՐ

Քո կեցուածքի գօրութիւնը, որ ուղղուել է նո շարժման արեւելեան կողմը, տարածենով լոյսիդ նառագայթները անսահմանութիւնում։ Քոնն է երկնքի եւ երկրի փառքը։ Քո մէջ է սկիզբը եւ վերջը ամէն բանի։ Գու, որ խորհրդանշանն ես ի սկզբանե, նո լուսառու տիեզերածին արեգակին եւ նրա տիեզերահանճար պարգևեին, որ մտիրս լոյսն է։ Իմաստութեանս աղօրափառքի շառաւիդը նո մէջ է կերտուած։ Անհմանայի են լոյսիդ սահմանները։ Քո խորհրդով, աղօքիս իմաստը իմացականութեանս, պարգևառու ուղին է, որ արտայայտուել է նո նշանարիտ կառոյցում։ Լուսառու եւ գօրառոր, լոյսիդ պարգևը շերմեռանդ է, կեցուածքի ու լուսատարածումդ հարազատ են։ Իմաստութիւնս ևեզանից դուրս ունայն է, խաւար ու մուր։



ԽԱՒԱՐԱՀԱՏ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԽՐՈԽԸ

Աղօքիս փառաբանութիւնը, որ ուղղուել է լոյսիդ գօրաւոր ճառագայթներին եւ իրենց սրածայր խաւարակորիչ հատիչներին, որոնք արշալոյսիդ բացումով կը ցրեն խաւարած մտիս խորհրդակմասուը եւ կը լցնեն եւ արդար լոյսիդ յակասենական կենաց իմաստով: Փո հզօր պատկերով գօրանում է աղօքամտիս տիեզերիք: Արեւելից դէպի արեւմուտք շարժուող լոյսդ անամայ է եւ հզօր. ջնրութիւնդ՝ կրակար, լոյսդ՝ չորացեալ, պատկերդ՝ հպատակեցնող, շարժումդ՝ աննահանջ, ուղղութիւնդ՝ հաստատ, բաշխումդ՝ արդար. դու ես յատակութեան դաւանանք: Խմացութիւնս անխախտ է, եւ անխախտ շատիներիդ նման: Լոյսդ խաւարահատ է եւ միրենող: Կառոյցիդ հաստատ խորհրդանշնը, որ ի սկզբանէ կրակար արեւն է, եւ նրա սխանչելի տիեզերահաննարը իմաստութեանս փարոսն է, մտիս լոյսը՝ հոգուս նրազը: Դու անմահ ես, անվերջ ու անմահալի: Փա՛ռք են տիեզերահաստ հզօր լոյսիդ, որ էութեանս լոյսն է: Քեզանից դուրս ունայն է ամէն բան:


ԵՐԿՆԱՍԼԱՑ ԿԱՅՏԱՌ ԱՄԱՌՆԱՅԻՆ

Արեւոց հայոց ԱՍՏ շրջանի աղօքանշանս, որ խորհրդանշանն ես Արեւ շրջանի եւ նրա իմաստապատկերի խորհրդով կերտուած պատկերդ, որ տիեզերահմաստ մտիս աղօքափառէ կնիքն է: Խոնարհութեամբ փառաւորում եմ փառապանձ ուժ, որի դիմաց ոչ մէկ բան հակադրուում է: Պատկերիդ գօրութիւնը գօրացնում է հոգուս խաւարած անդունդը, երբ լոյսիդ դրոշմը միրենում է հոգուս մէջ, եւ շանքակող լոյսով, եւ կրակար կրակդ այրում է հոգուս մահասարսուս խաւարը: Մեանջելի լոյսիդ ամառային արրողը, որ աննահանջ է ու սնուցանում է մտիս արշալոյսը, կէսօրը ու մայրամուտը, ինչպէս են հայրը, որ իր կրաշալի լոյսով ու ամրան շերմութեամբ հասունացնում է իր սոււած բարիքը, որպէս կենսատու սննդապարգեւ, որ հասունացնելով ամէն բարիք, սպասել է տալիս վերափին սիրոյ արարման: Այնպէս է են արեւախորհուրդ կնիքը, որ հասունացնում է մտիս գործունեութեան բարիքը: Փա՛ռք շանքահար լոյսիդ, որ պարզեւ է կենսունակութեանս տիեզերահմացումին:



ԱՆԻՄԱՆԱԼԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԱՆՍԱՀՄԱՆ ՉՄԵՌՆԱՅԻՆ

Արեւոց հայոց ԱՍՏ շրջանի աղօրանշանս, որ արեւի սահմանումն է տիեզերքի, երկրի և երկնի, ամէն բանի՝ գարնան, ամրան, աշնան, ձմրան, ամէն ժամի, ամէն բանի մէջ, իմաստութեան կնիքը, որ նո սրբադրոշ իմաստով է կնիւում արեւը որպէս տիեզերախմասն մտիս ծնունդ: Մարդացնում ես մեզ, որպէս ճանաչողութեան խորհուրդ: Դու ես ժամանակը, այժմ պատկերիդ ներքելուած շարժումը խոհունակութեամբ զովացնում է յոգնած մտիս եւ հոգուս խորենը: Ճեռացնում ես լոյսդ եւ շիրմութիւնդ (աշնան) փոխարէնը տայով սնունդ, բարիք: Սակայն են հեռացումից մեծանում է մտիս եւ հոգուս սէրը, ուստի դու ես սահմանումը սիրոյ, որ էութեան իմանալի սահմանումն է: Պարզեւատու սիրոյ եւ բարիք, փա՛ռք է էութեանդ:



ԵՐԿՆԱԾԼԱՑ ԿԱՅՏԱՌ ԱՄԱՌՆԱՅԻՆ

Ի սկզբանէ արեւոց Հրակ, Կրակ, Ցոլակ, Արեգակ, Հայ, Յար, Մար, Սէր, Բար տուող մատիմասները, որ խորիրդի անսահմանութեամբ, մեզանից քակցնելով եւ մեզանից հեռանալով, ցոյց ես տալիս էութեանդ տիեզերահաննար գոյութիւնը: Ինչպէս ամրանը մեզ տուեցիր կրակ, կրակ, իսկ ձմրանը հեռանալով մեզմից, մեր հոգու մէջ սանդծեցիր սէր, կարօտ, խոհեմութիւն, համբերութիւն եւ տուիր մեզ են կրակից այրելու մեր հոգու կրակը, չերմանալու, կարօտելու են գալստեան գարնանային վերստին իմաստաւորումի խոհեմ սիրոյ հանճարին: Քո ներկայութիւնը եւ նո բացակայութիւնը, նո սառնութիւնը եւ նո շիրմութիւնը աղօրամտահոգուս մէջ ստեղծեց տիեզերախմաստափրական կենսահմացական կառոյցը:


ԱՐԵՒԱԾԻՆԵՐԻ ԿԱՍ ԱՐԻԱՑԻՆԵՐԻ ՍՐԲԱՁԱՆ ԵՐԿԻՐԸ


Երդում եմ արեւիս լոյսով, նրա փառքի տեղերահանար ընորհինվ, դու ես սկիզբը իմաստութեան եւ նեզանով է սկսում եռթեանդ ճանաչողութիւնը։ Լոյսիդ իրաւափառ խորհուրդը հոգուս անխալս դասկաւորումն է։ Այն ժամանակների հոգերանական մտակառոյցի այս արտայայտչամիշոցը նոյնն է, միայն իմաստների շարադրակառոյցը կարող է տարբեր լինել, որպէս ազատ եւ կենդանի աղօթքարտայայտում։ Արիածիները ալու զաւակներն էին, որոնց ծնողները թերում էին ՀԱՅ, այսինքն իրատու արեւ յարեալ տաճարը, որտեղից արեւապաշտ վարդապետը տաճարից դուրս էր բերում արու զաւակը եւ բարձրացնելով արեւին, աղօթում էր. Ով տեղերահանար լոյս, ամենակալ, ամենափառ, ընդունիր այս այրին եւ նրա մարմինը եւ հոգին թող խառնուի նո հանճարակեր ընորհինվ։ Այսուհետեւ նա, որ տաճարիդ խորհուրդ եւ նո փառքի ընորհիւ ծնուեց, ոչ հօրից եւ ոչ մօրից, այլ դու, որ մեր հայրն եւ մայրն ես, այս արու զաւակը ծնուեց նեզանից։ Նրա հոգին երդում է նո արեւածող լուսահանճարիդ տակ, որ միայն եւ միայն նեզ է հաւատալու, նեզ է դաշտելու, նեզ է սիրելու։ Խսկ եթ ուրանայ, այս այրը օրերից մի օր ՊԻՏԻ ԱՅՐԻ ըն ծնորշս ԿՐԱԿՈՎ, որդես Զ-ԱՐԻ, Զ-ԱՐԻԱԾԻՆ եւ նրա մարմինը դիմի նետուի նահալեզու հողին անդունդերը։ Նա ԱՆ-ԱՐ-ԳՈՒԱԾ է ԶԵԶԱՆԻԾ ԵՒ ԱՐ-ՏԱՔ-ՍՈՒԱԾ որդես Զ-ԱՐ։ Հ Պ Պ Վ Կ Դ Հ Ֆ


Այս արարողութիւնները ամբողջութեամբ արեւոց հայոց կրօնաքաղաքական գաղափարախօսականի հիմքերն էին, աղ-

գակերտումի հզօր եւ ընդարձակ նպատակամղումների ծրագրով։

Արեւապաշտ վարդապետը, որը կոչւում էր հայր սպասաւորական ամունով, վեր պարզած մանուկը իշեցնում է արեւասեղանի վրայ, որը կոչւում էր արիա եւ լայն բացելով ձեռքերը դէպի արեւը, շարունակում է արեւապաղօթքը կամ արեւաերգը։ Նրան միացող կրօնական հայրերը, որոնք կոչւում էին հայի, ձայնակցում են արեւաերգին, հոգու եւ մտքի տուրքը մատուցելու։ Այս երեւոյթը բնական օրինաչափութիւն է բոլոր ժամանակների եւ ժողովուրդների համար, միայն այն տարրերութեամբ, թէ ինչ խորհուրդի վրայ է հիմնուել նպատակը՝ եւ այսօրուայ (ամէն ծօմարիսի) փոխարէն աւարտում էր ԱՐ-ԱՐ-ԱԾ, ՆԱԻԱ-ՍԱՐԴ, ԱՐԻ, ՀԱՅՔ, որը նշանակում է հոգերանական ձայնաարտաքրումով՝ (ԱՐԵՒ + ԱՐԵՒ + ԱՐԵՒ + ՏԻԵԶԵՐՔ), 

Ոչ թէ տիեզերք՝ բարդ գիտակցական շրջանի հնչողութեամբ, այլ  տիեզերք խորհրդանշող սրբազան իմաստանշանով։ ՆԱԻԱ-ՍԱՐԴ խորհրդանշային շարքը


 նշանակում է նոր, արեւ, կրկին ծնուող արին,  նշանակում է սահմանում, արեւ, նրան ենթարկուող անսահման լոյսի զաւանումի իմաստարմբ բռնումով։ 

 նշանակում է Հ - Հուր,  Յ - յարեալ, Ք - անիմանալի, Մեծ, բազում արիացիների ձայնաարտաքրուման բնոյթը։ Ինչպէս երեւում է բառերի շատ կարճ լինելուց, օգնութեան էին հասնում գործողութիւնների արտայայտման ձեռաշարժումները, դէմքի արտայայտչափոխութիւնները, իսկ դէպի որոշումը անմիջական էր եւ գործադրուող։

Արիացիների հոգերանական ձայնաարտաքրումներից իմանում ենք, որ նրանց մօտ ԱՐ ՀՆՉԱԲՆՈՂԹ հոգեկան խառնուածութեամբ մեղմ է, քանի որ կարծը հնչիւնները միշտ

եղել են հրամայականի, ցասումի արտայայտամիջոց: Հետագային, կարծը Ռի առկայութիւնը նկատում է ԱՍՏ շրջանում, երբ կրօնադաւանական ցատագովութիւնը ստեղծեց ԱՌ-ԱՍՏ կառոցները, որտեղ Ռ կարծրահնչիւն գաղափարանշանի կառոյցից իմանում ենք, որ արեւից յետոյ տրուած Ռն ասում է, որ լոյսի ճառագայթը ամ բողջութեամբ (Ք - անսահմանօրէն) Ռ.Ռ Ենթակայ է արեւին Եւ ծնուել է արեւից Եւ Երկնից Երկրին է տրուած անսահման փառուկ գաղափարագրութեամբ: 

Արիացիների լեզուն, որպէս արեւապաշտական կրօնապայմացում, հայ ժողովրդի արմատական լեզուն է, ԱՐ Հիմնախմատով: Արիացիների դարաշրջանը իր ծաղկումից Եւ վայրէջքից զգացնում է իր ներքին փոփոխութիւնների Եւ նորաձեւաւրումների մասին: 

Արեւապաշտական կրօնքի հասունացման յաջորդ փուլը կրօնադաւանարանական ճեղքուածութիւնն է: Ահա թէ ինչ կատարուեց: Արիացիների այն մասը, որ արեւից բացի անցաւ ուրիշ հաւատամքների, նրանք կոչուեցին Զ-ԱՐԻ, այսինքն արեւաւրացներ: Այս շատ յատակ գաղափարանշանային փաստը մենք տեսնում ենք Զ խորհրդանշանի կառոյցի մէջ, որտեղ  լոյսի նշանը արեւմտեան կողմը թեքուած՝ ոչ ուղղահայեաց, ոչ հորիզոնական դիրքով, եւ որ ժխտում է լոյսի կենտրոնից դէպի տիեզերք անցնող անհմանալի, անսահման, հարցական գաղափարանշանը: Իմաստանշելով որ արեւաւրացները խաւարամ իտներ են Եւ Զ-ԱՐ ՔԵՐ, Զ-ԱՐ ՔԵՐը արիացիներից բաժանուեցին եւ ստեղծեցին իրենց գօրաւոր անուանակոչումը՝ վիշապագուներ, Հրէշներ: 

Վիշապագուների ծագման պատճառը արեւի Եւ կայծակի կրօնադաւանարանական անհաշտութիւնն էր: Արեւի Եւ կայծակի տիեզերամարտ գաղափարախօսականը արդէն արմա-

տապէս ջլատեց արեւոց միակրօն դաւանանքը Եւ այս օրինաշափութիւնը զարգացրեց Եւ ընդարձակեց հայոց լեզուի մտաւոր Եւ հոգեւոր համակարգը: Ունենք շատ փաստեր այդ մասին: Ինչպէս երեւում է Վահագնի ծնունդը աղօթաերգից, որտեղ անձրեւի գովքն էր երգւում, ուր ջուրը որպէս առաստութեան խորհրդանշան, համեմատում էր արեւի հետ՝ «Եւ աշկունքն էին արեգակունք»: 

Կայծակապաշտների ծագումը՝ արիացիներից շարիացիների անցումը կամ բաժանումը ունի հայոց բնակլիմայական պայմանների հետ կապուած պատճառներ: Սկզբնական շրջանում, արեւը, որ ամէն բան էր, հետագայում, երաշտի Եւ կենսապայմանների անհասկանալի պատճառներից, վիճաբանութեան խնդիր դարձաւ: Թէ ինչո՞ւ կայծակը չպաշտենք, քանի որ նա է անձրեւը Եւ ջուրը տուողը, նա է զօրաւորը, որ ծածկելով արեւին, իր սարսափեցնող որոտով շաղում է բարիքին: Այս բնապատճերազմի հասկացումը ստեղծեց նաեւ բուսապաշտութեան Եւ կենդանապաշտութեան բաժանումները: Այս բոլորը շատ յատակ երեւում են հայոց գաղափարանշանների մէջ, որոնք դասաւրուելով նոր բառահնչիւնախմաստներ ստեղծեցին: Սակայն, ինչպէս երեւում է պատմութեան զարկերակից, արեւապաշտները մնացին հիմնական Եւ զօրաւոր քաղաքական դիրքի վրայ: Այսպիսով, արեւապաշտները երկրի կառավարման քաղաքածելի պատճառով ստեղծեցին մարդացուած ՀԱՅ աստուածը՝ Տրատու արեւ անմահ գաղափարախմաստը: Զ-արիացիները իրենց հետ տարան արիացիների կրօնալեզուին խօսակցակառոյցները, Օրինակ, Բարշամ կառոյցը եթէ վերծանենք տուեալ ժամանակաշրջանի օրինաշափաթեամբ, տեսնում ենք որ բարիքապաշտութեան Բ Եւ ԱՐ շերտերը հասել են արեւ-աստ-ատից դուրս՝ միանալով ասորական (օամ) արեւին:

Զ-արիացիների հեռացումը եւ բաժանումը արիացիներից, ԱՐԵՒ-ԱՍՏ-ԱՆԻ չէզոք գոտիներում ստեղծեց հակադիր խմբաւորումներ: ԱՐԵՒ-ԱՍՏԱՆ-ի ընդլայնուած հոգեբանութեան այս մեծ յեղաշրջումը հայ ժողովրդի զարգացման անհրաժեշտ փուլն է: 

Արեւածիները նախամարդուց յետոյ ձեւաւորուեցին, նախքան ձեւաւորումը մարդակառուցուածքների վերածուած կենդանամարդածեւաւորման բնածայնարտաքերման հաստատումներին, որոնց օրինաշափ բացատրութիւնը նոյնն է համաշխարհային առումով՝ մարդածեւաւորում մարդաբանութեան սահմանումով:


Մարդաբանական այս ցեղախումքերը, բոլորը մէկ կենսաբանական ձեւից առաջացած տեսակներ են, որոնք տարածուելով Մեծ Հայքի, Եգիպտոսի, Յունաստանի, Իրանի, Ասորեստանի տարածքներում, ցրուել էին տոհմախմբերով: Այստեղ ոչ մէկ վիճաբանութիւն կայ մարդաբանական գիտութեան դէմ: Իմ մեկնաբանութիւնը բնութագրում է Հայոց լեռնաշխարհում ձեւաւորուած մարդու կրօնաքաղաքական եւ ազգային ձեւաւորումի մասին, որի բոլոր ապացոյները հաստատում են, որ ՀԱՅԵՐԸ-ԱՐԻԱՑԻՆԵՐԸ-ԱՐԵՒ-ԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ծնունդ են, եւ ԱՐԻԱՑԻ, ԱՐԵՒԱՑ-ԱՐԵՒԱԾԻՆ իմաստները ծնուել եւ տարածուել են ԱՐԵՒ-ԱՍՏԱՆից դուրս: Չ-արիացիները, որոնք արեւաւուաց-արիացիներն էին, թափանցեցին ուրիշ ժողովուրդների մէջ, իսկ երբ վերադարձան իրենց նախահայրերի երկիրը, արդէն իրենց լեզում փոփոխութիւններ եղել էին: Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւնը ամբողջութեամբ հայ ժողովրդի աւանդապատումն է, որը համապատասխանում է Հայոց աշխարհագրական պայմաններին եւ լեռնակլիմայական կառուցուածքանուանումներին:


Արիացիների հզօր հոգեբանութիւնը թափանցեց նոյնիսկ քրիստոնէական կրօնքի մէջ, նրանց լրիւ վերածելով արեւապաշտական քրիստոնէութեան: Վկայ ի այ եկեղեցւոյ արեւակերտ շարականները, արիացիների ժողովրդական երգն ու դարը, ամէն ամէն բան, որ կլանելով վերադարձաւ արիական հոգեբանութեանը: Այսօր ամէն մի իայ ծնող կ'ուզէ իր զաւակը անուանակոչել Արեւ, Արեգ, Գարեգ, Արամ եւ միւս բնական հաւատալիքների անուանումները, որոնք հետագայում ձուլուեցին արիացիների արեւապաշտ կրօնքին թէ՛ բուսական, թէ՛ կենդանական եւ թէ բնաերեւոյթների մէջ: Եւ այդ անունները ընդհանրացան՝ Դրակ, Կայծակ, Փայլակ: Օրինակ՝ արեւածաղիկ, Կայծակ, Դրանուէ, Դրակար եւ այսպիսի անուանաշերտաւորումներով դարձեալ համախմբուեց արիացիների ԱՐԵՒ-ԱՍՏ-ԱՆ երկրի ազգային կառոյցը: Զշփոթենք ոչ մի բան եւ ոչ ել բնազդամղումից մեկնաբանենք իրադարձութիւնները, այլ ճշմարտութեանը նայենք աւելի ընդարձակ ու օրինաշափ փաստերով: Հայոց պատմութեան կերպարանքի ստեղծողը հայոց լեռնաշխարհի ամբողջականութիւնն է՝ տիեզերաշխարհագրական ժամանակահատուածում: Հայոց պատմութիւնը ոչնչացնելու զանքերը չեն դադարել: Հայոց պատմութեան լուս ճակատամարտը շարունակում է այսօր իր եղածին նման, արիացիների եւ չ-արիացիների խնդիրը կրկնում է այնպէս՝ ինչպէս հազարամեկակներ առաջ: Արիացիների անմահ հոգին ի սկզբանէ նշանակում է ԴԱՅ - Իրատու, արեւ, միշտ վերապրող յարեալ: Ոչ մէկը կարող է իր անձը փոխել: Նա, որ արիական ծնունդ ունի, նրա հոգում անպայման յարութիւն կ'առնի Իրատու արեւի Տիեզերահանձար աստուածային լոյսը: Իսկ չ-արիացիները ազգուրացներն են, որոնց համար չկայ ազգ, հայրենիք, հոգի, մօւակոյք: Այն մտածողները, որոնք բնազդամղումով հայոց պատմութիւնը կապում են

օտարամտածողութիւններին, նրանք հայոց պատմումը վերա-
ծում են անհասկանալի աւերակների:

ՀԱՐԹ ՄՏԱԵԼԱԶԵՒԻՑ ԾԱԻԱՍՅԻՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՏԻԵԶԵՐԱՅԱՆԵԱՐ ԱՆԴՐԱԾԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տիեզերախմաստ լսարանիս առաքեալածեմ խորհրդարանի ծաւալաբնոյթ մտաճակատամարտը իմացութեան այն ձեւն է, որը կարողութիւն ունի գաղափարապատկերներից դուրս հանել նրա ձեւահմաստ ձայնահնչիւնակառոյցը, սրանից մէջտեղ բերել գոյնալուսառժային ջերմաստիճանը ու ստանալ բնակլիմայական շրջանը եւ ժամանակահատուածի մտահոգեկառոյցը: Այս տիեզերախմաստ դասաւորութիւնը բնաօրինաշափ մօտեցում է բացայայտելու տուեալ գաղափարապատկերի լութեան հոգեմտակառոյցը:





Այս հետազոտական ձեւը արդէն զարգացած մարդի ներքին գործունէութեան օրինաչափութիւնն է, որպէս պատճառներից հետեւանքի անցման տեսութեան ու հետեւանքից պատճառին մօտենալու իմացութեանը: Այս պարագային, նախամարդին պատկերած արեւը բնական է որպէս պատկեր, սակայն ինքը անտեղեակ է այն բոլոր մասերին, որի հետքերը ուսումնասիրութեանս նպատակն է:

Այս առումով, եթէ հարթ մտածողութիւնը միայն պատկերը տեսնելով է սահմանափակում, ժաւալային մտածողութիւնը այդ պատկերի մէջ տեսնում է կառուցուածք, ձեւ, չափ, ձայն, գոյն, շերմաստիճան, տարածք, ժամանակ եւ մտքի գործունէութեան հոգերանութիւն: Այս մէկ օրինակով միայն ցոյց եմ տալիս որոնումներիս իմացական եւ ոչ պատահական ճանապարհը, որի պատճառով իմացութեանս համոզուածութիւնը հաստատուն է: Իսկ այն ինչ որ պիտի խօսեմ յաջորդ բացայայտումներին մասին, սրանք էլ հիմնուել են ծաւալային նաև անտուրիեան Վրայ: Ուստի, հայոց արեւի բազմազանութիւնը մէշտեղ բերելու համար տեսնենք, թէ արեւին ինչ անուն տուել են եւ այդ անունը ինչ կառուցուածք ունի: Նաեւ այդ անունից իմանում ենք արեւի ձայնահնչումը, շերմառութը, ձեւը, գոյնը, տարուայ եղանակը, վայրը եւ հոգեմտակառոյցը: Արեւի անուններից են Ծանթ, Շուշան, Արծ-ակ, աշուն, Ծիրակ, Ծիր-ին, Շող, Շողակ, Շոգ, Իրաք, Իրվիշապ, Դրանուած, Արեւի ճառագայթները շեն երեւում, լուսակարմ բակրակերանգաւորումը հասնում է 900 աստիճան շերմառութագոյնի, որպէս մառախուղ երեկոյեան մայրամուտի արեւագոյն:

Իսկ Ցոլակ, ցող, ցոլք, հունծի, հնձան, ցոփ, ցայս, ցորեն, ցոյց, ցմահ արեւանուանումները լոյսի ճառագայթի հաղորդականութիւնը նկարագրում են որպէս ցոլացող ոչ ամբողջական այլ հատուածաշղարձակում: Այստեղ Ցն իր մէկ ցոլքում գորաւոր է սակայն շուտ սպառուղ, եւ բոլորի մէջ առկայ է լոյսը կամ նրա բացակայութեան նշմարումը իրանով

է բնորոշուել, ինչպէս անլոյս, անցոլք:

Իսկ արեւի աստ, աստղ, վաստ, հաստ, փաստ եւ աստով արեւախմաստաւորումներում զգացւում է Ս ձայնանշանի հնչինառուժային գոյնասպիտակ, սպառուած սակայն սրացած ճառագայթի գօրաւոր ուղին: Ս ձայնահնչիւնի գունաւորումը հասնում է բարձրագոյն սպիտակ սակայն սառն լոյսին: Իսկ հայոց ԱՐ-ԱՐ-ԱՐ-ԱՐ-ԱՍ եւ նման կառոյցներում Ռ զօրաւոր է, շիկացած, սակայն անճառագայթ է: Այս բոլոր արեւախմաստակերտումներից իմանում ենք հայոց չորս եղանակների մասին, թէ որ ժամանակ եւ որ տարածքում են կերտուել արեւի բնութագրական վիճակները, արեւադարձայինին մօտ թէ հեռու: Այս ուղղութեամբ, մօտենանք արեւադարձային գօտու արեւախմաստարանութեան կառոյցներին եւ զանազան արեւախմաստածնութիւններին:

Zart, Zvart, zor, zi, haz, naz, hez, azg, az, azia, ozon, azimuth, azat, zvezda, azdak, mze, azdekk, azium, azab, roza, oziris, ezs, zor, diezer, ez, vaz, sez, behez. արեւածակատամարտային այս աւերակ, փլատակ, մտախնդիացուած վկաներից իմանում ենք, որ կենտրոնական արեւամատնանշումը Զն է: Զի ձայնաարտաքերման հնչինառուժային զօրութիւնը հասնում է արեւաջերմալուսածառագայթառուժայինի: Գոյնային առումով՝ բաց նարնջագոյնից դեղինի՝ 2000 աստիճանից աւելի ուժգնութեամբ: Օրինակ՝ եզիպտական Ramsez, որը արեւից ծնուած նշանակում է: Սակայն արեւակառոյցից հետեւում է, որ sez արեւ է նշանակում, իսկ ram դարձեալ արեւ կառոյցն է: Երկու արեւ՝ որը նշանակում է ոչ թէ արեւից ծնուած, այլ՝ արեւը ծնունդ է, այսինքն արեւը հիմքն է ծնունդի, որը շատ տրամարանականօրէն նշանակում է վերածնուած արեւ, ինչպէս հայոց Արա Գեղեցիկը: Արա = *Է նոյն պարագան է՝ Շամիրամ = Sham + Ram՝

միացեալ ասորաեզիպտական արեւներ: Մարդաստուածների ժամանակ Ramsez վերագրուում էր թագաւորին, որ արեւից է ծնուել, արեւածնունդ է, սակայն sezը գօրաւոր՝ երկու անգամ փայլող արեւ է նշանակում: Իսկ արեւադարձային գօտու Շամաց, կրկնարեւը երկու կողմից էլ ընթերցւում է արեւ: Շամաց, Խօսար, Խօփու, Աօսու, Աօսի, Շիրին, Շիր եւ Հայերի մօտ՝ շամթ, շամ, ուլս, յուլս, հրէս, հրաց, աշ, աշել, նուլս, վիս, խաց, վիչս, հես: Շական ձայնառուժերը ապացուցում են, որ արեւի անուան սկզբնական բնահնչումների կառոյցը թէ կարծ է եւ թէ բնական: Հետագայի շերտաւորումներն են, որ շփոթեցնում կամ կասկած են ստեղծում: Զարմանալի է այս պարագային dol, soleil եւ ոռուսերէն solnce (սոլնցէ), solnisko (սոլնչկօ) արեւակառոյցները: Ռուսների մօտ սոլնչկօ արեւախմաստի մէջ տեսնում ենք չկօ շերտաւորումը, որտեղ բնագդը մղել է արեւին կրկնակի շերմութիւն տալու Շ հնչինառուժով: Այս արեւախմանարանին երկնա-երկրային, կենսայատկանշային բոլոր ծալքերում անդրադարձուող համակարգումները սկիզբ են առել ԱՐԵՒ, ԶՈՒ, ՀՈՂ, ԿԵԱՆՔ, ՄԱՆՀ հիմքերից, ուր ամէն տեղ նրանք ներթափանցել են իրար մէջ՝ զանազան ձեւափոխումներով, ըմբոնումներով, իմաստափոխումներով, կրկնութիւններով, շերտաւորումներով: Այս բոլորը ծնուել են անկախ մարդու նախապաշարումից, որոնք անմիջական են, բնական հիմքերով իմաստաւորուած: Այս նոյն իրադարձութիւնները աւելի բարդացած եւ շերտաւորուած տեսնում ենք քրիստոնէական կրօնքի մէջ, քանի որ արդէն շերտաւորուած էին նախաքրիստոնէական մտաշերտաւորումներով, առաւել աւելանում են նոր շերտաւորումներ՝ իրանց ձկուն բնազդախմաստային հիւսուածքներով, որոնք ի վերջոյ տանում են երեւոյթի անիմանալիութեան, ունայնանացումին եւ դադարում են հասարակական մտքի մէջ գործելուց: Օրի-

նակ, Յիսուսի վերագրուած բոլոր աստուածաբանութիւնների եւ աղօթքների երգերի միլիոնաւոր արտայայտչախմաստները միայն խորհրդանշում են մէկ անձի՝ Յիսուսի գործունէութեանը: Ուստի ծաւալային մտածողութիւնը ոչ թէ Ներքում է, քննադատում է կամ առաւելութեան նպատակ է փնտում, այլ ներկայացնում է իրադարձութիւնների ամ բողջական եւ նոյնօրինաչափ քնոյթը, ապացուցելու համար տիեզերահանձար լոյսիմաստութեան խորհուրդը: Ուրեմն, արեւից ժառանգած բոլոր իմաստները, զրից ժառանգած բոլոր իմաստները, կեանքից եւ մահից ժառանգած բոլոր իմաստները իրենց խառնուածքներում նմանում են թուաբանական աղիւսակին, որտեղ մէկից մինչեւ տասը հաշուարկումից եւ գումարումի, հանումի, բաժանումի, բազմապատկումի գործողութեամբ ստանում ենք անահման թուային արժէքներ, որոնց մէջ միշտ նկատում ենք մէկից մինչեւ տաս թուանշանների ներկայութիւնը կամ բացակայութիւնը: Տիեզերահանձար իմաստասիրութիւնը, խոհեմութեան հետ, կենաց փրկութեան ճշմարիտ ճանապարհն է: Եւ լսարանիս սրբազն պարտքն է իմաստախոնարհումով փառաւորել տիեզերալոյսի խորհրդատու պարզեւը, որպէս խոհեմութեան իմաստասիրութիւն, որպէս հաստատուն, անշեղ, անխափան իմաստալոյս: Սիայն եւ միայն որ դարգեւած տիեզերահանձար իմաստալոյսն է փրկչագործութեան մեծ ու փառաւոր կենաց լուսաւելիզը: Ուստի փառիդ մեծ է եւ անմանալի, անեղք, անզեր եւ խորհուրդդ գօրաւոր, հանճարդ անձեռակերտելի: Ըստ դարգեւած իմաստանունդդ անսուան է, անեղք է ու անիմանալի: Ըստ տիեզերալոյս իմաստովդ չխալողները խաւարամտութեանը մօտեցող մոլորեալներն են: Բեզ մադակերտողները եւ իրանց նմանեցողները ուուարած մոլորեալներն են, որոնց տիեզերահմաս փառիդ մեծութիւնը նուաս-

տացնելով հաւասարեցնում են իրենց խաւարակերտումի սահմանումներին: Դու ես միակ փրկիչը, որ անհասանելիութեանդ նշանը միտք լուսաւորելու հանճարեղ փաստն է: Ըստ փառիդ գօրութիւն որ երկրային լսարաններ ստեղծեց այս կենաց հողի վրայ, որոնց միջից խաւարը հեռացուցիր, իսկ որ խկական փառիդ բարողիչները հալածուեցին խաւարի կողմից, սակայն նրանց լուսաղսակը մնաց որպէս իմաստութեան նշմարիս առաջելութիւն. այրուեցին նրանք, որ որ լոյսիդ նշմարիս իմաստը բարողեցին, խաչուեցին նրանք իրենց թշնամիներից: Եթէ յիշողութիւնս անթափանց է ուրեմն մառախուղ է մտիս խորեւը: Եթէ մարմնիս անտանելի կշիռը հողից կտրուելու գօրութիւն չունի, ինչողե՞ս մտիս հորիզոնները տանում են ամենու: Եթէ հոգուս բնազդը անկարող է բարձունքներդ բալելու, մտիս ճառագայթը գօրացրու, որ անմտութեան չիետեւմ: Եթէ մարմինս եւ հոգիս անկարող են բաց դռնեդ մտնելու, դու մտիս լոյսը ասեղի անցից անցկացրու: Անվիճելի ես նոյնիսկ իմաստասիրութեան հետ, բանի որ նրա փրկութիւնը աղափովել ես ի սկզբանե ունայնութեան եւ անմահութեան եղերով, որդեսզի փառիդ դժուղը չսայրափի անդնդոց մեջ: Նրանք, որ նշմարիս լոյսիդ փոխարեն կրակով առաջնորդուեցին, իրենց կրակով այրուեցին: Նրանք, որ իրենց մարմնի եւ հոգու փրկութեան համար խորհեցին, նրանց ուղին նշմարտութեանդ լոյսի կողից անցաւ, իսկ նրանք աւելի խորացան իրանց մեղքերի մեջ: Դու որ յսակեցրել ես ոչ հոգու ոչ մարմնի փրկութեան սահմանները, որդես տեսանելի, հօսափելի, իմանալի աւարտ եւ արդարութիւնը յանձնել ես սոված մահուան, որի բերանից ոչ հոգի, ոչ մարմնի կարողութիւն ունեմ փախնելու: Իսկ նրանք, որ մահուան բերանից յարութիւն են առնելու բող սղասեն: Իսկ եթէ առան, ի՞նչ է փոխուելու: Մի՞թէ ծնուռղների եւ յարութիւն առնողների միջեւ փրկութիւնը

մահով է չվեցանալու: Մի՞թ ծնուղները յարութիւն առնողներ չեն մեռնելուց առաջ: Ո՞վ սիեզերական հանճար, լոյս իմաստութեան, փրկիչ կենաց եւ մահու: Շեզանով է հաստաւում ճշմարիշ խաղաղութիւնը, եւ դա է մահից փրկութիւնը: Եթե խաւարին խաղաղութիւնը խաւարի ուժն է, նրա մահը նո լոյսով է բափանցելու: Խաւարին ղացողների խաղաղութիւնը գենի զօրութիւնն է, որ ամենին էլ իրենց գենով են զոհուելու: Ով սիեզերահանճար իմաստալոյս, նո գիշերուան արքուններդ բնած են, իսկ ցերեկուան կենծ իմաստունները երազների մէջ բայլում, շինելով իրենց ճոխ կենսադամբարաններ՝ մեծ դաշտուհաններով, որ մեծ ամօրն է, բանզի լոյսից մէջ են ու անհաղորդ նրան: Նրանց հոգու եւ մարմնի հանգստութիւնը մթնեցրել է նրանց մտի նկուղը: Դրամաղաճների փառքը գերեզման սանելու արժեք չունի: Շարողիների ճամբաները շաւ են, բայց ոչ մեկը նո ցալիղներից մօտենում է: Անհաւատութեան ծնունդը սուս մեկնաբանողների հետեւանի է: Չո խոհեմութեանը հանճարը թող սրափեցնի բալողների բնած մտերը: Արքունների ամաշեցրու իրենց բնաբարախութիւնում: Ասիս լուսահամբկը ցանելով սիեզերահանճար ճառագայթակոսներից մէջ, ամենին էլ դիմի ծլեին, անեին եւ տարածուեին, բանի որ ցանին իմաստութեան լոյսի սիեզերարտերից մէջ է, եւ ոչ հողեղեն արտերի մէջ, որտեղ յայսնի չի լինելու նետուղ հաշիկների անտեր ճակատագիրը: Ուստի, նո բափանցելի անխաւար իմաստադերի ամեն ինչը, ամեն բանը տեսանելի է, եւ գաղտնիները վերացել են, որովհետեւ խաւարը անհետացել է: Գաղտնիներով խօսողները մտեր գողացողներ են՝ լոյսը փակելով խաւարի վարագոյրով: Խաւարը այնտեղ է, ուր նո բացակայութիւնն է: Եթե խաւարի արդարադատութիւնը իրա խորհրդանիքը գլխահամբիչի ճժամներով է օրինաւորել խաւարի աշխարհում, աղա գլխատուելը գլխատողին դառնալու, եւ ծն-

ուողի ճակատագրի մահաղսակը անգլուխ ծնուելու արժեք ունի: Գաղութացուած մսերի փրկիչը դու ես եւ նո իմաստութիւնովդ է, որ փրկածները ենք յանձնելու է:

Ուր ես կենաց եւ մահի ճշմարիս փրկիչը: Չո սիեզերահանճար իմաստութեամբդ ի սկզբան սահմանել ես մսերիս ճշմարիս ցալիղները, ան՝ ով ենք մօտենայ փրկուելու է, նո իմաստալսարանիդ իրաւակերս ոչ մագաղաքեայ այլ լուսաէ իմաստարահում բարբառով փառք, որ յիշողութեանս բիւեղեայ լուսակնին է եւ իմաստութեանս լուսածումը: Գլխուղեղները դարսի տուղների սաղմնադարբնոցներում, որ խաւար է՝ սակայն լոյս է թում, նրանց նորածինները իրենց երջանկութեան չափ էլ դառնութիւն են կրելու: Դանոյիների արիւնոտուած ու մահահուն երջանկութիւնը դժոխմում ծննդաբերող մայրերն զաւակասիրութեան է նմանում: Խաւարին հարմարուղների ուղին լոյսի կարօս է մնալու: Բարացած մտերը հալելու համար սերունդներ են շարդուելու: Սուս մարգարեների անիմաստութիւնը իրեն համաղատասխան ունկնդիր է ունենալու: Միտի վաճառողների յաղթանակը իմաստասիրական լոյսի տակ է երեւալու: Միտի դարսի տալ առանց իմաստութեան՝ անխոհեմութիւն է: Անիմաց գաղափարագողութիւնը իր սեփականը կորցնելու համար է: Եւ ամեն, ամեն ինչ եւ ամեն բան իրա փրկութիւնը նո սիեզերահանճար լոյսովդ հաղորդուելով է: Դու ես միակ ճշմարտութիւնը: Բոլոր հայրեն ու մայրերը, նրանց որդիները, բոլոր մահուրներն ու անմահուրները, բոլոր օծեալները, բոլոր աստուածներն ու չաստուածները նրանց դաշերազների աւարտը չեն գտնելու առանց նո սիեզերահանճար իմաստալոյսիդ. ճշմարտութիւնը որոնողների ճամբան միշտ նո մօս է տանելու: Մարդասպանների մէջ յոհացող կիների զաւակածնութիւնը իրանց հանոյիների համար է, իսկ ողբերգութիւնը կրակի նման հոգին է այրելու: Ազգերի

կործանումը նախ իր ներսից է սկսում, յետոյ դուրսից: Վայ այս ազգին, որի իմաստութեանը անարգուած են, իսկ փրկութիւնը խաւարամիտներից է սղասւում: Լոյս քարոզողների մօտ եթ լաղտեց եւ ճազմ է շատանալու, այնտեղ աղջամուշը մութի է վերածուելու: Դաւատալ անհմանալի ունեիցէ բանի, մութի մէջ խորանալու է նմանում: Սահուան դատապարտութեանի լաւատեսութիւնը ոչ մէկ բան է փոխում: Ստիլողական հաւատքը զլխատելու չափ ահ ու կսկիծ ունի: Այնտեղ ուրեմն ճշմարտութեան քարոզը նոյնն է, այնտեղ բաժանուածութիւն չկայ: Զօրաւոր Երկրի զօրութիւնը իր սահմանադրութիւնից կ'իմացուի եւ նրա խորհրդարանի ծերակուտական իմաստութիւնից: Երկրի առաջնորդ լինելուց առաջ դատախանատութեան երդումը նոյնիսկ մահով, ոչ մէկ արժեք ունի եթ անհմանալի է գործունեութեան ուղին, նողատակը, սկիզբից մինչեւ վերջ: Երկրի առաջնորդը իր դեկավարութիւնից առաջ իր գլուխը դարտի է տալու իր ժողովրդի դիմաց, իսկ այս բոլորից առաջ, իմաստուն խորհրդական է ունենալու, որը հսկելու է փառամոլութեան, ձաղկութիւնների եւ իմբնագոհացումի սահմանները: Իսկ խաւարից փախչողները խաւարում են մնալու, եթ չեն գտել իմաստութեան ճամբան: Վայ այս քարոզութիւնն է եւ բռնութիւն չի՝ եր ազատութիւնդ դարտի են վերցնում իմացութիւնդ փոխելով: Ո՞Վ սիեզերահաննար լոյս իմաստութեան, այս դդտորուած ջուրին յատակները միւրնի ճառագայթներիդ իմաստուն լոյսը: Թող ճշմարտութիւն քարոզողները չխաչուեն, իմաստութիւն տարածողները թող չխուսանգուեն: Բո սիեզերահաննար անեղր լսարանդ ընդարձակուի այս Երկրի վրայ: Թող խաւարի դատերազմը չշարունակուի եւ ամեն, ամեն բանից առաջ լուսաւորիչ կոչ-

ուածների ծեռայից վերցրու մարդասպանութեան գործիքները, նրանցում թող թափանցի նո իմաստութեան ճշմարիս լոյսը:

Այս է իմաստութեանս սիեզերահաննար լսարանիս առաքելանմ ընթացքը, որի իմաստալոյսը փառիդ հանճարն է:

ՀԱՅՆԱՐՏՎԲԵՐՍԱՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆՆԱՐ ԼՍԱՐԱՆԸ

Հայաստան աշխարհի տարածքում ձեւառորող նախամարդի ձայնարտարերման նախաճիմքը կարելի է մեկնարաննել հետեւեալ ձեւով: Նախամարդի ձայնարտարերման պատճառը իր շրջապատն է, որի արտայայտչահետեւանքներն են զարմանքը՝ որպէս գիտակցումի նախապայման եւ յուզումը՝ որպէս հոգու արտայայտչամիջոց: Մարդը իրա զգայարանների՝ տեսողութեան, լսողութեան, համառութեան, հոտառութեան եւ շօշափումի հինգ գործօնների միջոցով, փոխարարերութեան մէջ է մտնում իրա շրջապատի հետ: Այս ձշմարխտ մտածողութեամբ է, որ մեկնարաննելու եմ արեւոց հայոց բառերի ծագման պատմութիւնը, որը ամբողջութեամբ նախնականօրէն Հայաստան աշխարհի ծնունդ է, եւ ոչ դրսից ներթափանցուած փոխառութիւն: Համոզում է, որ արեւոց հայոց ԴՈՒ ձայնարտարերման նախնական ձեւը ԹՈՒՆ է, որը ծնուել է թքնելուց, որպէս դիմացինին արհամարհական, վիրաւորական պատասխան: Այսպիսով, նոյն օրինաչափութիւններից են ծնուած ուրիշ աշխարհամասերում ապրող նախամարդի ՅՕՍ, որը դիմացինին նկատի ունի, իսկ ուսական ՏԻ նախարարատի ծնունդը նոյնպէս նկատի ունի դիմացինին: Այս երեք նոյնութիւններն ել փոխառութիւն չեն, ոչ էլ անհրաժեշտութիւն կայ փոխառութեան, այլ օրինաչափորէն բնածին են: Հայոց բնաշխարհին հարազատ ձայնարտարերուած վկայութիւններ, որոնք բնական են եւ ոչ ստեղծագործական: Աչա մի քանի երեւոյթ, երբ նախամարդը վերաբերում էր կենդանիների հետ՝ հօ՛ - կովին, չի՛ - էշին, հըա՛ - ձիուն, իի՛ -

հաւին, իո՛ս - շանը, վիիս, վիի՛ս - կասուին, մա՛ - մայր, ուա՛ - սա՛ - հայր, հէ՛յ - կանչ, ծիս, ծուս - փոքր թոշուն, բո՛ւ - ցուլ, մկկ'օ - այծին, իհիիհ՝ - լաց, հահա - ինդուք, ծօ, դո - դու, ծիւ - թոշուն: Նախամարդի տրամադրութիւնները զգացմունքային ձայնարտարերմամբ՝ սո՛ւս - լոէ՛, հէ՛յ - ուր, ով, վա՛յ - զարմանք, չո՛ո - լոէ՛, հա՛ - այո, չը, չէ - ոչ, տո՛ւ - ցանկանալ, ուրո՛ւ - զարմանքի կանչի տեսակ՝ որպէս ազդանշան: Այսպիսի օրինակները շատ շատ են եւ այս օրինակների տարատեսակները կամ այլ ժողովուրդներում, որպէս ձայնարտարերման կենսարնակիմայական արտայայտութիւն: Այսօր էլ այս նոյն ձայնարտարերումները գոյութիւն ունեն, ոչ միայն նրա համար որ ժառանգել ենք, ո՛չ, մենք նոյնպէս նոյն ձայնարտարերումը կամ որոշ տարրերութեամբ արտայայտելու էինք, որովհետեւ երեւոյթը բնական է եւ անխախտ: Այս օրինակները նոյնպէս այն մեծ փաստերից են, որոնք յատուկ են արիացիների երկրին եւ կենդանական աշխարհին:

Հետագայում, մարդու զարգացման եւ պայմաններին անհրաժեշտ ձեւափոխման փուլում, նոր մտքի շերտաւորումից ձայնախմաստները աւելի երկարում եւ բարդանում են: Օրինակ՝ կօ - հատիկ, կոր - հատիկ, կորեկ, այսինքն հատիկը արեւի էութիւնից տուած, կերուած, որպէս ուտելու հոգեզգացումնային ձեւ: Կորից յետոյ կորեկի ցանած տեղը կոչուեց կորի, որը մինչեւ այսօր կայ որպէս կորեկի արտ: Հետագայում, կորին աւելանում է տեղական չափի միաւորը՝ կոտը, որ շերտաւորում է կորկոտ նոր իմաստով: Ուտել բնացանկացումի Ո՛ւ ցանկացումի եւ Տ սպառման թքակուտակումի Ո՛ւՏՈ՛ւ - ուտելուց ծնուած ՏՈ՛ւ, ՏՈՒ-Ր, ՏԱ-Լ իմաստի ծնունդը, որը կշտանալուց յետոյ վերածում է ՈՒՏԵԼ՝ գոհացած, աւարտուած ձեւի: ՍՅ՛ եւ Ո՛ւՏ, ուտը նոյն պահանջներն են, որոնցից մէկը՝ ըրի զգացումը՝ ՍՅ՛ ցանկացումը, իսկ ՈւՏը

միայն չոր ուստելիքը ընդգծում է: ԵԼՈ - ուստելո, խմելո, սեռային նև թեղմնաւորումները, բռնաբարման ցանկաձեւերը իրենց հերթին ծնում են նոր բառեր:

Հափ-ել, լակ-ել, այս բոլորը առաջացել են լափ-թերանի մէջ, լ-փ-լփ-ացող, արագ եւ վայրի ուստելաձեւի ձայնից: ԶՈՒ, ջուրի մէջ Ու Հնչիւնը շատ մեծ տեղ ունի, ոչ որպէս տառ, այլ թերանի ձեւաւորում, թերանի արտաքին վերջաւորութիւնը, որը դուրս է ցցում Ու ձայնի ժամանակ, այսինքն բնականարար, Ուզ-ենալ ուտել՝ որպէս Հոգեկան եւ ֆիզիքական կառոյց, այսպէս էլ Չու Զ Հնչիւնը աւելի շատ թքակեղծ արտայայտող Հնչիւնն է եւ այդ պատճառով Զն սակաւաշրից ցանկանում է խմել: Նոյնն է խեղող - խեղողելո, որը ծնուել է բնական ինեղդուողի ձայնից՝ Խ-Ռ-ԽԵ-Ռ: Այս ձայնարտաքերման ձեւերի տարատեսակներից եւ նրանց միացումներից ստեղծում են նոր իմաստներ՝ Շ-ԽԵ-Ռ եւայլն:

Զարդաննքի ձեւերից՝ Վա՛յ սարաափ, լեզուաձայնային զարդացման հետեւանքներից առաջանում են իմաստութիւն որոնող ձգուումներ, որի բուն պատճառը վախն է. վախը բաժանում է բնական եւ արհեստական, այսինքն ծեծից սպանութեան տեսակների, եւ այս ուղղութեամբ կուտակում եւ զարգանում է Հայոց լեզուի մտապաշարը: Երգի միջոցով սիրային զգացումից առաջ են զալիս ձայնարտաքերումները, որոնք նոյնութեամբ այսօր կրկնում են. լայ-կարօտ, Վա՛յ-ափսոս, հայ-ուրախութիւն, նայ-ցանկացում, այ-երանի, ույ, վույ-տեսքիդ, մարմնիդ կարօտ, դարձեալ ՈՒ - ուզ-ենալը ցանկացում է: Բարդ շրջանի ձայնարտաքերման տրամարանական ձեւը առաջընթաց էր բնազդազգացմունքային ձեւից: Օրինակ՝ Վի-Շ-ապ, արդէն Վիշ-Ֆիշ-Ֆեսոց, օծ-սողուն, որի տրամարանական ձեւն է հրէշ-հրեւսակ, որը Angel չի, այլ բնածին է, արիական է: Շատ մեկնաբանութիւններ հայոց լեզ-

ւում բնածին են, սակայն ուրիշներ շփոթութիւններ ստեղծելու անիմաստ մտորումներով, մեր մտքի ճշմարիտ լսարանը պղտորում եւ նոյնիսկ ձգուում են հակառակին հաւատացնել ու մտագաղութացումի ենթարկել մեր մտքերը: Ես ոչ մէկ հակաղութիւն ունեմ այն օրինաչափութեան հետ, որ պատերազմների, առեւանգումների, բաժանումների եւ այլ օրինաչափ պայմաններից լեզուների մէջ մուտք են գործում օտար ձայնարտաքերուղ իմաստներ: Սակայն դա կարող է միայն տեղական իմաստի կրկնութիւնը լինել օտար ձայնարտաքերման կառուցախմասով: Օրինակ՝ Վարդի անուանումը՝ ՌօԶԱ, օտարներից մտաւ Հայոց մէջ, ինչպէս Յակոբ-խարեբայ, որ օտար էր, եղաւ Jack. այս ողորմելի խառնաշփոթութիւնները միայն եւ միայն անմտութեան եւ անիմաստ նորածեւութեան արդիւնք են, որպէս բարդացուած ապականութիւն, լեզուների մէջ անձնանուան նորոյթ: Այս մէկը վկայում է տուեալ ժողովրդի անտէրութեան, նրա ներքին տկարութեան մասին: Արդեօք եթէ մէկի անունը Խաչիկ է, պէտք է կոչել Christ. սա պարզապէս անհեթեթ շուր ծեծելու է նմանում: Ահա թէ ուր է տանում անմտութիւնը. իսկ ինչու արիացիների գեղեցիկ արիական անունները մոռանամք, որոնք շատ կարճ եւ դիւրահնունչ են: Արիացիների հոգու եւ մտքի հզօր կամօք, վերասին նորոգուելու եւ ծաղկում է ապրելու մեր հին ժողովրդի անցեալը, այսօր եւ վաղը: Այս մէկնաբանութեամս բուն նպատակն էր Հայոց պատմութիւնը ներկայացնել իր ամբողջական ձարտարապետութեամբ, հիմքից մինչեւ վերեւ: Ոչ մէկ բան կարող է փոխել այս մեծ ճշմարտութիւնը: Ես ոչ մէկ նպատակ ունեմ ազգայնամոլութեան, անիմաստ, նեղ, անհեռատես, շինծու յօրինուածքներով գովազդի գաղափարախօսականով մօտենալ այս խնդիրին: Ես հպարտ եմ արիացիների բարի մարդասիրական քաղա-

քակըթութեամբ: Արիացիները երեք չեն փոխած իրենց դաղափարանշանները; Նրանց վրայով է անցել սեպագրութեան դարաշրջանը, բայց նա մնացել է անխախտ, արեւոց կրօնքի պահպանողական խորհրդի մէջ: Ասորական, պարսից, հոռմէական, յունական, մոնկոլական, արաբական, թուրքական լեզուները ուզեցել են կոտրել, ոչնչացնել արիացիների լեզուն, հոգին եւ միտքը, սակայն արիացիները իրենց տիեզերահանձար արեւի նման միշտ յարութիւն են առել: Սա է արիացիների տիեզերահմաստափական ծայրագոյն տրամաբանական մտքի արեւային լսարանը, որի առաքելութիւնը տիեզերահանձար լոյսի հետ է:

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԱՐԵՒԱԳՄԱՔԵԹ ԿԱՌՈՅՑԻ ԼՈԱԿԵԱՑ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Տիեզերահմաստափական ծայրագոյն տրամաբանական բարդ մտակառոյցի գեղագիտական համակարգում, անհրաժեշտ է օրինաչափութեամբ լսել լուսկեաց երեւոյթների բազմահազարամեայ կենաց ու հաւատքի մէջ թրծուած ձայնը: Այս ուսումնասիրութիւնս մեծ անակնկալների մեկնաբանման առիթ է ներկայացնելու: Արագագաթ՝ դէպի երկինք խոյացող գմրէթի փառավիճակ կառոյցը, որի ծայրին հաստատուած քրիստոնէական խաչի կիսասկաստիք եւ գաղափարահմաստների վերածուած ստեղծագործական յօրինուածքը՝ ամբողջանում է արեւելք-արեւմուտք դիրքով: Սուրբ էջմիածնի վանքի արեւակերտ գմրէթը այն մեծ ապացոյցն է, որը շատ բաներ է ասում իրա կառուցողների մասին: Անմիջապէս ասեմ, թէ ինչ է կատարուել այդ գմրէթի կառուցման շուրջը: Նշմարելի է, որ գմրէթը որպէս կառոյց յօրինուածքային որոշակի տարբերութիւն ունի եկեղեցւոյ միս մասերից, որ զգացւում է նրա տանջահար ու սպիացած վէրքերի համադրումներից, քարերի ոչ միատարր, միագոյն, նոյնիսկ պատահական ընտրութիւններից: Այս բոլորը պատահական ու ինքնակամ վերացականութեան արտայայտութիւն չեն: Ես երեք տարի ուսանեցի Ս. էջմիածնի Գէորգեան Ճեմարանը: Այդ երեք տարիներին, սեսադաշտումս միշտ հարցական էր Մայր Տաճարի ճարտարապետական անհաւասարաբաշխուածութիւնը, յատկապէս

կենտրոնական աւագ գմբէթը, որի առաջ զարդարուածութիւնը գեղագիտականօրէն մեկուսանում է եւ ընդհանուրին մաս կազմելուց դադարում է, որպէս ամբողջականութիւն։ Տաճարի կառոյցից զգում ենք նրա վրայ ուղղուած բոլոր հալածանքները եւ տաճարի վերակառուցումից շտապ անհրաժեշտութիւնների հետքերը։ Սուրբ էջմիածնի տաճարի յօշոտուածութեան մեծ փաստը նրա քաշքուած կառոյցն է։ Սակայն՝ եկէք տաճարի աւելի մեծ ու խորացած վէրքը բանանք՝ նրա հիմքերի տակ տառապող ու հիմնաքար դարձող հազարամեակներում ծնունդ առած ու անորոշութեան մատնուած արեւոց կրօնքի սրբաքարերը։ Սուրբ էջմիածնի աւագ խորանի զոհասեղանի տակ, արեւոց կրակարանը իր սրբատաշ քարերով ու աւերուածութեամբ չի անհետացել եւ չի անհետանայ, այլ տիեզերատիրոջ լուսանուէր մտածողութեամբ այն <ի յայսմ աւուրք յայտնեցաւ>, որպէսզի ամբողջացնի Մայր Տաճարի հազարամեակների մէջ թաթախուած կակծացող պատմական ցաւերը։ Սուրբ էջմիածնի կառոյցը ամբողջականութեամբ, թէ՛ արեւոց եւ թէ քրիստոնէական կրօնքով, իմ բնորոշութեամբ կարող եմ անուանել տառապանքի ճարտարապետական տաճար։ Նախ խօսեմ արեւոց կրակարանի մասին ականատեսի իմ վկայութեամբ։

Խորհրդաւոր է նոյնիսկ աւերակ ու կոտրուած վիճակով։ Այստեղ, հազարամեակների ընթացքում զոհաբերութիւն եղել է եւ հայոց ճակատագրի նմանութեամբ՝ յօշոտուել։ Էջմիածնի Մայր Տաճարը առանց արեւոց կրակարանի չի կարող ամբողջացնել իր պատմական ծնունդը եւ մնում է մեկուսացուած, աննպատակ։ Կրակարանի խորհուրդը Մայր Տաճարի ամբողջականութեան պատմական կառոյցն է եւ այն մեծ նպա-

տակը, որը հանդիսանում է տաճարի տարածքառոշման սկզբունքը։


Սուրբ էջմիածնի գմբէթի կառոյցը արտայայտում է այն վկայութիւնը, որ ճարտարապետական որմնաքանդակային աշխատանքների մէջ մեծ միջամտութիւններ են եղել։ Այդ միջամտութիւններից երեւում է, որ ճարտարապետները ենթարկուել են զանազան կարծիքների բաւարարման եւ գործադրման։ Ուստի, գմբէթաշինութեան խորհրդաժողովի բազմակարծիքութիւնը եւ ներկայացրած պահանջները յստակ ընթերցում են առանձին, մասնակի միացումների գետեղումից։ Նոյնիսկ զգացում է գմբէթի ճոխացումի նպատակը, որը հոգեբանօրէն առաջնայինն էր։ Գմբէթի արտաքին մասի ծաւալաքանդակ որմնաքանդակներից զգացում է տուեալ գործին ձեռնարկած մարդկանց բնաւորութիւնները, անկախ այն բանից, որ միջամտողները նոյնիսկ անտեղեակ էին իրանց անձնական հոգեբանութեան ինքնաճանաշողութեանը։ Տաճարի բազմապրիզմայանիստ սրապագաթ բաժանումները, 12 առաքեալների կիսագրած եւ բարձրաքանդակներով լուսապակ (արեւատիսքի) արեւի շրջանագծից ներս, ապացոյց է խմբային մտածողութեան։ Երկու խորանակառոյց, կլոր եւ սրածայր խորանաձեւերի առկայութիւնը ապացուցում է արեւելեան երկրների հետ անհակածառելի կեցուածքի դիրքորոշած գեղագիտական մօտեցումը, արեւոց հայոց-քրիստոնէական եւ իսլամական բնազդին սովորական տարբերի խառնուածքադրոշմի ներդաշնակութեամբ։

Գմբէթի շուրջը, թէ՛ լուսամուտները եւ թէ տասներկու առաքեալների բաժանումը, կատարուել է քարաքանդակ սիւների վարից վեր՝ ոլորապտոյտ զսպանակածեւ հիւսուածքով,

որոնց վերի ծայրը խորանաւորւում է տիեզերաձգտում արտայայտող խորանակառոյցով։ Սրագագաթ գմբէթի եւ թմրուկի միացման եզրերի երրորդութեան բնագդակիսութեան բաժանումով, ճարտարապետական կառոյցը հասնում է աւանդական արեւաշերմութիւն արտայայտող երկրաչափական բաժանումների զարդահիմուածքներին։ Այստեղից գիտակցում ենք, որ քարագործ վարպետը խաչքարագործութեան մեծ վարպետներից է։ Իսկ քարի գոյնի ընտրութիւնը յայտնի է, որ կարմիր կամ սեւ տուֆ քար չէ, աւելի միջին տրամադրութեան (ոչ աշխոյժ, ոչ տիխուր) քարագոյնով է կառուցուել։ Այս բոլորից հետեւեալ եզրակացութեանն ենք գալու, թէ ի՞նչ հոգերանական մտակառոյցի տէր անձինք էին այս գմբէթի իրականացնողները՝ սկսեալ վեհապետից մինչեւ ճարտարապետ քարագործ վարպետները։ Առաջին հերթին զգացուել է կրօնադասանանքային ինքնատիպ գմբէթի աւետարանախմաց, ու այդ հիմքի վրայ կենտրոնացուած մտակառոյցը։ Գմբէթի կառոյցից զգացում է բարեհոգի մտածողութեան տէր ազնուահոգի, ազգային բնաւորութեան ձգոտող մարդկանց միանպատակ որոշումը։ Գմբէթի վրայ չկայ դաժանութիւն, չկան վախ, սարսափ արտայայտող երեւոյթներ, կարծես բնագդամագնիսացումը թեքուել է անդիտակից իմաստասիրական ճաշակի վրայ։ Գմբէթի համբերատար լուութեան խորքում, առանց շեշտելու ներքին ողբի ցայտունութիւնը, զգացմունքային պատկերը շերտաւորւում է տեսադաշտային տարիներին։ Մայր Աթոռ Սուրբ էջմիածինի Տաճարը ինձ համար հոգերանական մի մեծ անհասկանալի առեղծուած էր։ Այդ առեղծուածը, որպէս լուո գաղտնիք, մէկ հաղորդում էր խաչքարերի հետ, մէկ շարականների, մէկ նրա խորանի տակ

արեւոց հայոց կրակարանի հետ։ Անցաւ տաս տարիից իմ գեղանկարչութեան մթնոլորտը ուղղուել էր արեւոց հայոց քաղաքակրթութեան խորքերը, որպէս ինքնաճանաշողութեան վկայութիւն, երբ 1995 թուականին առաջին անգամ ինքնամտապայքարիս յաղթանակը աւարտուեց բնագդագիտակցումիս նահանջով քառաթեւ սկաստիքայի հանդէպ եւ ստեղծագործեցի վիթխարածաւալ արեւոց նշանը՝ անձնանկարիս կիսասկաստիքա աղօթավլիճակով։ Քառաթեւ սկաստիքան հայոց գաղափարանշանների իր նմանատիպութեամբ ինձ համար մի նոր ճանապարհ բացեց, դէպի նոր ստեղծագործական մտակառոյցներ։ Սկաստիքան ինձ համար միջոց եղաւ Սուրբ էջմիածնի տաճարի ի յայտ բերելու իմ վերլուծութեանը։

Մենք իմանում ենք, թէ ինչու Սուրբ էջմիածնի տաճարը կառուցուել է այդ տարածքում։ որովհետեւ արեւոց սրբավայրն էր, եւ դա վկայում է արեւոց կրակարանը։ Սակայն, մենք չենք իմանում, թէ ինչո՞ւ այդտեղ էր պատրաստուել եւ հիմնուել արեւոց սրբավայրը։ Աչա այս առեղծուածի բանալին։ Ուստի, ողջամտութիւնը որպէս օրինաշափ տեսութեան հետեւանք՝ աննպատակ չի տեսնի, որ արեւոց կրակարանի հաստատման վայրը, որպէս այսօրուայ Սուրբ էջմիածնի հաստատման վայր՝ կախեալ է արեւոց հաւատաեղից։ Պատմական ճշմարիտ հոգեկամուրջը չի փշրում, այլ խռովւում է եւ կարողութիւն ունի ամ բողջացնելու ազգային ընդհանրականութեան կենսաբանական ուղղութիւնը։ Ինչպէս գիտենք, Արարատեան դաշտավայրում շատ եկեղեցիներ կան այսօր, որոնք հիմնուել են արեւոց կրօնքի սրբավայրերի վրայ։ Այս բոլոր սրբավայրերի կառոյցները ինքնահաստատում չեն եւ



ոչ էլ պատահականութիւն։ Արեւոց բոլոր սրբավայրերը իրանց հազարամեակների մէջ կառավարուած են քնութեան սահմանադրութեան հետ, որպէս տիեզերախմաստասիրական ըմբռնում։ Բոլոր սրբավայրերի ամենամեծ տաճարը համարում են արեւոց սրբազն լեռը՝ ԱՐ-ԱՐ-ԱՏ-ը, որը երկագաթների համար երկու անգամ կրկնում է ԱՐ-արեւ, մեծ գագաթին վերագրելով աստուած տիեզերական խորհրդախմասոր։ Այսպիսով, Արարատը կոչուել է նաեւ արեւ օգաւոր - արեւ տիեզերական, այսինքն ազատ՝ գաղափարագրութեան իմաստով։

Մենք չենք կարող աչքաթող անել պատմական այն մեծ փաստերը, որոնք իրենց տարողութեամբ ապացուցում են արեւոց հայոց ազգային կրօնաքաղաքական ամբողջականութիւնը։ Տիգրան Մեծի պատկերը դրամի վրայ հսկայածաւալ պատմական մեծ փաստ է, ապացուցելու արեւոց հայոց բարձր ու վեհ քաղաքակրթութեան մասին։ Որքան որ հոռմէական իշխանութիւնը հայոց վրայ ազդել է, սակայն հայոց արեւոց դաւանանքը չի կարողացել ձեւափոխել։ Տիգրանի թագի վրայ պատկերուած արեւանշանը, ուր ճառագայթեալ խորհրդախմասով, որպէս կրկնակի արեւ՝ չորս բաժանումի եւ որպէս հաւասարակշիռ բաժանում՝ երկու արծիւների մէջտեղ, խօսում է հայոց արեւոց ինքնիշխանութեան մասին։ Սուրբ էջմիածնի ճարտարապետական կառոյցը, իր արեւոց սրբատեղիով կապւում է արեւոց լերան հետ։ Եթէ չլինէր արեւոց լերան հետ կապուած ընտրելատեղը, ապա Ս. էջմիածինը կը լինէր միայն քրիստոնէական աղօթատեղի, որի կառոյցը կարող էր լինել որեւիցէ տեղի։ Քանի որ այդպէս չէ, ողջամտօրէն, իմաստասիրական բարձր գիտակցութեամբ պիտի ընդունենք, որ

էջմիածնի կառոյցը Արարատ լերան հետ է կապուել: Մրրագան լեռը իր գեղատեսիլ բարձրութեամբ, մոգական զօրաւոր ձգողականութեամբ դարձել է Հայոց հոգու լեռը, իր արեւածին անունով: Այս նոյն իրականութեանը հետ կապուած է Զուարթնոցի տաճարը, որի հիմքը արեւածեւ է: Որքան էլ որ Զուարթնոցի տաճարը քրիստոնէական համարենք, նոյնիսկ իր երրորդութեան, երեք յարկանի կառոյցով, սակայն իրականութիւնը մնում է անփոփոխ:

Այս ուսումնասիրութիւններովս ես կրօնական հաւատալիքների հետ կապուող հարցերի մասին չէ որ արտայայտում եմ, այլ այն իրադարձութիւնների, որոնք գոյութիւն ունեն եւ որոնց պէտք է նայենք իրականութեան աշքերով: Թող մեր մտքերը մեր պատմութեան շղիտեն մասնատուած ձեւով եւ չօգտագործեն յունական-էթնոս, այսինքն հեթանոս արհամարհական ձեւը: Հայերը արեւապաշտ էին, նրանց հեթանոս էին կոչում, այսինքն՝ ազգային, քնիկ: Բայց այս իմաստին մէջ սրսկուեց նուաստացնող ազգամիջեան պառակտումի ձեւ տուող թունաւորից գաղափարահասկացողութիւն: Արեւոց Հայոց պատմաքաղաքական (ոչ կրօնական) ընդհանուր ուղին հայ ժողովրդի ծագումնաբանական այն մեծ տուեալն է, որը ապացուցում է արեւոց Հայոց տեղաբնիկ լինելու իրողութիւնը: Մենք չենք կարող մեզ ազգ-ժողովուրդ-պետութիւն կոչել առանց այս իրականութեանը: Եւ պատահական չէ որ Սուրբ էջմիածնի գմբէթի կառոյցը, որպէս զեղագիտական, հոգեբանական ըմբռնում, արեւածին է. սա չի խանգարում քրիստոնէական աստուածաբանական իմաստափրութեանը, որպէս առանձին կրօն՝ այլ մէկը լրացնում է միւսին: Հայաստանի մէջ քաղաքական անկայուն, անբարենպաստ

պայմաններից հայ ճարտարապետ վարպետները գաղթում էին ուրիշ երկրներ հայի՝ իրանց ապրուստը ապահովելու համար, իսկ Հայաստանում մնում էին միայն խաչքարագործ վարպետները: Հայոց ճարտարապետական տարրերը տանում են Հայոց երկրից դուրս: Այսպիսով, Հայոց մշակոյթը տարածուելով երկրից երկիր, իր հետքն է թողնում եւ դառնում է ուրիշ ժողովուրդների սեփականութիւնը: Զթուարկենք, փաստերը շատ են: Ահա դրանցից մէկը, ուշադրութեամբ նայենք Վրաստանի մէջ Հայոց եկեղեցիների ձեւին եւ վրաց եկեղեցիների ձեւին, որոնք նոյնատիպ են: Նոյն պարագան էր նաև արեւոց շրջանին: Միշտ Հայաստանից դուրս էին տանում վարպետներին՝ բռնի կամ վարձով, Այսպիսով, որքան Սուրբ էջմիածնի տաճարը եւ արեւոց Հայոց ինքնագիտակցումի ամբողջականութիւնը տեսնենք միասին, այնքան կը հարստացնենք Հայոց մշակոյթի պատմական մեծ անցեալը: Մենք պէտք չէ անտեսնենք եւ ոչնչացնենք պատմական որեւիցէ իրադարձութիւն ու պէտք չէ մոռանանք նրանից քաղուած դասերը: Ուրեմն, Սուրբ էջմիածնի խորանի տակի հաւատասեղը, իր արեւագմբէթ շինութեամբ, ամբողջանում է մէկ նպատակով: Ինչպէս քրիստոնէական աղօթքը ասում է. «Որպէս եւ մենք թողումք մերոց պարտապանաց»: Պատմական իսաոնաշփոթութիւնները կատարուեցին ոչ Աստուծոյ ձեռքով, այլ անկարող մարդոց ձեռքերով: Թող այդ իսաոնակիշները հայոց պատմութեան էջերը շխառնեն եւ թող ամէն բան մնայ հայ ժողովրդի հարազատ սեփականութիւնը:

ԱՐԵԴՈՅ ՀԱՅՈՅ
ՏԻԵԶԵՐԱՐԱՆԻՐ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

Արեւապաշտ Հայաստանի կրօնական դաւանաբանութիւնը հասել էր գագաթնակէտին, երբ կեղրոնական միաստուածութիւնը հաստատուել էր արեւով, որը ամէն բանի սկիզբն էր և ամէն բանի մէջ էր եւ ամէն ինչի վերջը: Եւ այսպէս էր այդ գաղափարանուների հազարամեակների իմաստավաստակը:

Աստուած բառին իմաստափրական կառոյցը արեւոց հայոց կրօնական դաւանանքի հաւատամքից էր՝ արեւը որպէս սահման տիեզերի: Եւ այս ԱՍՏ հիմքով ունենք շատ իմաստ-ներ. Փաստ, հաստ, Դայաստան, Վաստակ եւլն.: Արե-ւապաշտութեան տիեզերածին աստուածաշնչում, որպէս աղօթախմաստային խորհրդանշաններ, շատ յատակ ու տեսանե-լի են գաղափարանշանների հոգեբանական կառոյցի անհրա-ժեշտ արտայայտամ իշոցները, որոնցից է անսահմանութեան նշանը: Ահա, թէ ինչ իմաստափրութիւն է խտացուել այս նշանի խորքում:

Արեւոց հայոց աղօթամատեանում անսահմանութեան այս
խորհրդանշանը, որպէս տիեզերակիմաստասիրական ըմբռում,
այսօրուայ առումով ունի հետեւեալ աղօթակիմաստը. Ամե-
նաքարձեալ, սահման իմաստութեան, որ անսկիզբեն ծնեցար,
տուիր մեզ կեանք, լոյս, ջերմութիւն, սեր, եռութեամբ ին լուսոյ,
որ քաջարանում ես անհուն տիեզերիդ մէց անսահման, ան-



Վերջ: ՄԵՆՔ ունայն ենք ին սահմաններից դուրս, ով լոյս ան-սահման։ Այս նշանի աղօթքային գօրութիւնը մենք տեսնում ենք արեւոց հայոց Ծ, Ծ, Զ, Զ, Զ, Է, Զ խորհրդանշաննե-րի մէջ եւ իմանում, թէ աղօթքի ուղղուածութիւնը որ

խորհուրդի հետ է կապուած։ Այս շատ խտացուած մեկնարանութեամբ ուզում եմ ներկայացնել հայոց սրբազան տառերի խորհրդանշական իմաստները, նրանց կրօնաաղօթքային ծնունդն ու կարեւորութիւնը։ Արեւոց հայոց արեւապաշտական աստուածաշնչի ամենաբարձրեալ աղօթքները թաքնուել են հայոց լեզուի եւ նրա խորհրդանշանների արեւածեալ տիեզերաիմաստասիրական հանճարի մէջ։

ՀԱՅՈՑ «Ա» ԳԱՂԱՓԱՐԱՆՇԱՆԻ ԱՐՏԱԼՈՅԱԾ

Հայոց բոլոր գաղափարանշանները, որ հասել են մեզ, առանձին առանձին հիմք են ծառայել արեւոց (արեւապաշտ հայոց) կրօնի քաղաքական եւ մշակութային գործունեութիւնում։ Այս երեւոյթը միայն հայերիս մօտ չէ. այսօր իսկ շատ ժողովորդներ գաղափարանշաններով են արտայայտում, ինչպէս՝ Զինաստան, Ճափոն, Քորիա։ Տիեզերաիմաստասիրական մտածողութիւնը օրինաշափ կառուցն է մտագիտաճանաչողութեան սկզբունքին։

Սակայն, հայոց գաղափարանշանները իրենց կառոյցով ապացուցում են, որ իրենք ծնունդ առել են արեւից։ Դուք իմանում էք, որ հայոց կրօնը արեւածին է եղել։ Սրան որպէս փաստ, նկատի առնենք հայոց օրուան 24 ժամերի հետեւեալ անունները։

Ժերեկի 12 ժամերը կոչւում են. 1) Այգ, 2) Ծայգ, 3) Ծայրացեալ, 4) Ճառագայթեալ, 5) Շառաւիղեալ, 6) Երկրատես, 7) Շանթակող, 8) Հրակաթ, 9) Հուր Փայլեալ, 10) Թաղանթնեալ, 11) Արագոտ, 12) Արփող։

Գիշերի 12 ժամերը կոչւում են. 1) Խաւարուկ, 2) Աղջամուղ, 3) Մթացեալ, 4) Շաղաւոտ, 5) Կամաւոտ, 6) Բաւական, 7) Խօթափեալ, 8) Գիզակ, 9) Լուսաճեմ, 10) Առաւոտ, 11) Լուսափայլ, 12) Փայլածու։

Այս բոլոր անունները առնշուել են արեւի լոյսի հետ։ Նոյն արեւային կամ կլիմայական իմաստները արտայայտուել են


Հայոց ամսանունների մէջ էլ, որոնք բազմակառոյց, բազմատեսակ փաստեր են եւ կապուել են լեռների, լճերի, գետերի, քաղաքների, տաճարների եւ մարդկանց անունների հետ:

Հայոց լեզուական եւ ազգային կենսաբանական կառույցները ապացուցում են Մեծ Հայքի տարածքում ապրած արեւակրօն հզօր քաղաքակրթութիւն ունեցող հալոց մասին:

Տիեզերական մտածողութիւնը օրինաչափ կառուցն է մտագիտածանաշողութեան սկզբունքի: Եւ այս դիտանկիւնից է, որ մտենում ենք Ա գաղափարանշանի ծագմանը:

Արեւոց շրջանի տառերի կառոյցը սկզբունքով, որպէս նախատիպ, ունենալու էր արեւանշանի (սվաստիքա) հետեւեալ ձեւը.

Սվաստիքան իր արմատները դրել է Հայոց բառ ու բանի մէջ։ Նոյն նշանը կարող են ունենալ նաև շատ շատեր, սակայն նրանց տառակառուցուածքը եթէ արեւային չէ՝ ուրեմն յոկ



ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ Է ՈՐպէս ՄԵՍԱԿ:


Ես կարծում եմ, որ արեւոց հայոց քաղաքակրթութիւնը իր պատմակենսարանական բնակառյօցով արտայայտում է արեւանշանից ծնունդ առած հայոց Ա(րեւ) եւ ապա՝ ԱՐ-ԱՌ-ԱՍ-ԱՍՏ-ԱՉՏ-ԱԶԴ-ԱԶԾ իմաստների կառոյցը:

Սվաստիքան եւ նրա հետ կապուած հայոց տիեզերածին գաղափարանշանները, ինձ համար դարձան մանրուսումն՝ մօտենալու ամէն գաղափարանշանի ծագման, իբր անհրաժեշտ պատճառ։ Արեւոց հայոց կրօնի խորքում, արեւի շարժման ուղղութիւնը պատկերում էր սվաստիքայի շարժումով՝ արեւելքից արեւմուտք։

Արեւի առաջին գաղափարանշանը արեւի հետեւեալ պատկերն է. ☺

Հայոց արեւածանաշումը արդէն գիտակցում էր արեւի շարժման ուղղութիւնը: Այդ ուղղութիւնը պատկերելու համար ավաստիքային վրայ աւելացնում էր ծայրերի թեքութիւն, որը ցոյց է տալիս արեւելք-արեւմուտք հասկացնող թիւնը:

Հայոց տարեցոյցը, լինելով արեւային, արեւին ճառագայթները բաժանեց 12 բաժանումների 

Իսկ տարուայ չորս եղանակների բաժանման համար արեւի ճառագայթները համառուց չորսին՝ 

Այստեղից սկսում է քառաթեւ սվաստիքայի ծնունդը:
Քառաթեւ սվաստիքան կարողութիւն ունի ցոյց տալու
տարրան չորս եղանակներին պատկերացումները.

- Գարնան պատկերացումն է՝
 - Ամրան պատկերացումն է՝
 - Աշխան պատկերացումն է՝
 - Զմրան պատկերացումն է՝

Այս բոլոր արեւանշանները արեւելքից դէպի արեւմուտք են ուղղուել:

Արեւոց կրօնի գարզացումը առաջին անգամ դիմաւորեց քառաթեւ արեւանշանը՝ ավաստիքան **Ֆ**, որպէս աղօթքի արտայայտութիւն արեւելքից արեւմուտք գաղափարանշանին: **Ֆ** պատկերը նշանակում է արեւին դիմաւորել, որպէս պատկերային ամբողջական մտակառոյց: Ուստի հայոց Ատառի առաջին պատկերը սա է **Ֆ**: Այս առաջին պատկերի յաջորդական գարզացման հետ արեւ իմաստը լրացրեց Ռ, որ արեւին առջեւ խոնարհումի նշան է, որը այս է **ՀՐ/Ր**: ԱՐ ձեւը պատկերը կամ գաղափարանշանն է արեւի առջեւ խոնարհումուն: Եւ այս պատկերը տարածուելով կրկնուեց այսպէս՝ **ՀՐ/Ր**:

Հայոց պաշտամունքի ԱՐ շրջանի ձեւից ուրիշ շատ իմաստներ վերածուեցին գաղափարանշանների: Նրանցից է **Ե** նշանը, որ կիսասվաստիքա իր կառուցուածքով ցուցանշում է երկինքի ուղղութիւնը: Հայոց Եր երկինքի հետ կապուած գաղափարանշանն է (Երկներ Երկիր, Երկներ Երկին - Երկներ եւ ծովն ծիրանի): Այս մարզարտափայլ քերթուածը երկինքի մասին իմաստասիրական մեծ ճանաչողութեամբ արտայայտում է երկրի եւ երկինքի տարերքը:

Արեւոց հայոց ԱՐ շրջանէն աւելի ուշ առաջ եկաւ ՍՈ գաղափարապատկերը, որտեղ Ո նշանը, իր հասուածով, մինչեւ վերջ խոնարհումն է արեւին: Ս նշանի կառույցը ուղղուել է երկինք՝ կրկնակի մեծարումով: Այդ պատճառով **ԽԼ/Տ**

Ֆ նշանից յետոյ Ս նշանը տրուեց եւ ստացաւ **Կ/Մ** արեւ սահման լոյսի իմաստների միաւորումը:


Այսպիսի ուժընթաց ճանաչողութեամ ձեւը աւելի դիւրաց-

րեց միւս նշանների ծնունդը **Կ/Ա/Տ**, տիեզերքի նշանը, անսահմանութեան գաղափարով:


Կ/Ա/Տ - Ա, Ա, Տ այս երեք գաղափարանշաններից ստացւում է արեւ սահման տիեզերական լոյսի իմաստը: **ԽԼ/Տ**

Հայոց պատմաիմաստասիրութեան եւ տիեզերագիտութեան բանաւոր եւ գրաւոր փոխիմացականութիւնը հասել էր կատարելութեան բարձր մակարդակի: Հայոց բնաճանաչողութեան առաջին բառերը շատ կարծ են եղել եւ դա ապացուցում է հայոց բառերի բնածին լինելու մասին եւ ոչ փոխառութիւն օտար լեզուներից:

Խորանալով հայոց բառերի իմաստներին մէջ, նկատում ենք, որ նրանց կառույցը նմանում է թուաբանական աղիւասկին: Ինչպէս որ թուաբանութեան մէջ 1-10 թիւերով կարելի է անսահման թուակառոյցներ ստանալ, նոյնօրինակ ձեւով հայոց



ԱՐ շրջանի իմաստները իրենց շարքով



Ա-ի նախնական վիճակները

իմաստներից ստանում ենք հետեւեալները.

Հայոց ԱՐ շրջանի բոլոր իմաստները ծնուել են արեւից, ինչպէս՝ արօր, այր, հայր, մայր, արի, բարի, արծիւ եւ շատ շատ ուրիշ բառեր:

Իսկ ԱՌ շրջանը առաւել ԱՍՏ (ԱՇՏ, ԱԶՏ) շրջանը եւ ԱՐ շրջանը, տուել են հետեւեալ բառիմաստները. առողջ, առաքել, առատ, առաստաղ, առաջ, Աթիշաւ, Աշտարակ, Արամազդ, Դրազդան, Արագ եւ ուրիշ շատ իմացութիւններ:

Հայոց տառերի մի մասը ուղղուել է արեւմուտքից դեպի արեւելք, ինչպէս՝ Ե, Բ, Ի, Է, Զ, Փ, Լ, Է, Տ, Թ, Ո, Մ. Իսկ տառերից միս մասը՝ դեպի երկինք եւ արեւելք, ինչպէս՝ Ա, Ե, Ս, Մ. Մ:

Ծ, Չ, Ջ, Ջ գաղափարանշանները արտայայտում են արեգակի շարժման ու գործունեութեան մասին: Օրինակ, Ծ (Ծով Ծիրանի) բաղկացել է օղակաձեւ Ծից, վերեւում անսահմանութեան Տ տիեզերքի նշանով եւ արտայայտում է անշրափետը: Այս բոլոր նշանների մասին աւելի ասելիքներ ունեմ ընդարձակ մեկնաբանութեամբ: (Տես տառերաշարքը առանձին աղօթքային մեկնաբանութեամբ):

ԱՐԻԱՑԻՆԵՐԻ «Բ» ԲԱՐԻՔԱՆՇԱՎԻ ԻՍԱՍՏԱԽՈՐՃՈՒՐԴԸ

Արեւոց հայոց Բ-ԱՐ ծնուել է արեւի բերքատութեան ծնորհումից: ԱՐից առաջ կայ կիսասվաստիքա նշանը, որի երկնքից պարզեւած անսահման խորհրդաձեւը ուղղուել է դեպի երկիր, լոյսի ճառագայթը բարձրանալով վեր, երկու անգամ թեքուել է երկրին, իր մէջ պարունակող իմաստներով ասում է արեւի բարիքի գաղափարախմաստը:

Այս է Բ նշանի աղօթքախմաստը.



Ի սկզբանե, որ ծնուել ես արեւի լոյսից եւ նրա խորհրդից է կառուցուած կենսունակութեան փառքը, որը բեր է ու բարիք:

Բ նշանի կրծատման պատճառները միս նշաններից գատելու համար է. ա) որպէս արեւածնեալ սվաստիքա, բ) որպէս գաղափարանշանի տարրերակ:

Արիացիների արեւոց կրօնքում Բ նշանով շատ կառույցներ կան, որոնք արեւածին արիական են, այսինքն հայկական:

ԱՐԻԱՑԻՆԵՐԻ «Գ» ԳԱՐՆԱՆԱԽՈՐՅՈՒՐԴ ԳՈՅԱՆՑԱՆԸ

Գ գաղափարանշանը, որ իր նախակրօնական շրջանում որպէս գաղափարախմաստ էր ներկայանում, հետագային, ձայնարտութերման ծագումով վերածուեց Գ հնչիւնի:

Արեւապաշտումի ձեւատրումով մենք եւ Գ համատեղումով իմանում ենք ԵԳ, որը ԱՐ շրջանից յետոյ ստացել է ԱՐԵԳ, այսպիսով՝ արիացիների մօտ արու եւ ԵԳ իմացութիւնը, որը նշանակում է ԵԳ սեռային իմաստից իմաստաւորուած՝ ծնունդ, ծնող, ԵԳ, էութիւն, գոյութեան ԵՒ Գից:

Գ հնչիւնի ձայնաարձագանգը իմաստների գիտակցման այն շրջանն է, երբ արդէն Հայոց իմաստունները ստեղծել էին արեւոց տիեզերական նշանները: Սակայն, Գ նշանը կարող էր այս նկարի տեսակներից որեւ մէկը լինէր: Իսկ դրանք բոլորն էլ ընթերցելի են իրանց իմացութեամբ:



ԱՐԻԱԿԱՆ «Դ» ԿԻՍԱՍՎԱՍԻԹԵԱ ԽՈՐՅՈՒՐԱՀՄԱՍԸԸԸ

Ինչպէս Բ նշանը, այդպէս էլ Դ նշանը կիսասվաստիքա գրաւորապատկերման անցնելուց ձեւափոխուել է իմացականութեան գանազանումի արտայայտումից: Այստեղ Դ նշանը դէպի արեւմուտք է թեքուել, այն հոգեբանութեամբ որ շարժման ուղղութիւնը ծնում է արեւելքից: Դ նշանով արեւածին նախարառերը, որոնք հիմնուել են արիացիներու հոգեբանութեան վրայ, դաւանել են արեւակրօնի սահմանումները:

Դու կառոյցը բնազդային ծագում ունի, որպէս հնչում եւ ոչ որպէս պատկերակառոյց, քանի որ Դու ծնել է թու, թու, թինելուց, նոյն են անգլերէն ցու, ուսաերէն դի, հայերէն նու, նու՛, հո՛ ձեւերը, որոնք բնակլիմայական ձայնաարտաքերման հոգեւոր զգացումից եւ մտաւոր մարմնական հակադրութիւններից են առաջացել: Բ հնչիւնը եւ բոլոր հնչիւնները արեւոց Հայոց սեփականութիւններն են, արիացիների երանելի երկրի սքանչելի ձայնասաղմնաւորման շերտաւորումների կառուցուածքով:



ԱՐԻԱՑԻՆԵՐԻ «Ե» ԵՐԿՆԱՍՏԵՂՑ ՆՇԱՆԻ ԵՐԿՆԱԽՈՐՃՈՒՐԴԸ

Ե նշանը կիսասվաստիքա նշան է, միւսների նման նրա կառոյցը նոյնպէս բազմազան է, սակայն բուն խորհուրդը երկնքի ցուցանշումն է՝ արեւմուտքից արեւելք եւ դէպի տիեզերք ուղղութեամբ:

Երկներ Երկին, Երկներ Երկիր

Երկներ եւ ծովն ծիրանի

Ե խորհուրդը արեւի ծնունդից վերածուել է արեւի տարածութիւնում գտնուող գաղափարախօսութեան.

Արեւի զօրաւոր լոյսդ, որ շարժում է արեւմուտք, ճեղքելով



Երկների խաւարը, փառքը, որ Երկրում եւ Երկներում է, սահմանում է իմաստութեանդ խորհրդով, խաւարը եւ լոյսը եւ Տեղերական վարագոյրն է, Երանելի եւ ունայնութեան հոգին լուսաւորելու ընորիենվոյ:

Են՝ մէկ առանց փոքր ւի է մէկ էլ նրանով եւ այլ տեսակներով, որ խօսում է, թէ որքան բարդ է գիտակցումի ձեւառորմը վերածելով իմաստի, հոգուց եւ մտքից շաղախելով ասելիքի պատկերածեւառորմը: Ե նշանը արիացիների նշանն է, որից հետեւում է, որ արեւի եւ կայծակի հաւատալիքների հակամարտ շրջանում արիացիների արեւապաշտական կրօնքի երկարամեայ հաւատքը արդէն բաւարար բառահմաստային կուտակումների լճացում էր ստեղծել: Ուստի, կրկնութեան մտասահմանափակումը հասել էր գիտակցութեան ընդհանրացումին: Երբ արեւը շոգին, երաշտին մարդկանց անսնունդ թողեց, արիացիների մի մասը նեղուեցին արեւից: Քանի որ կայծակը, ՎԱՀ-ԱԿՆԸ՝ ՍԱՐՍԱՓԵԼԻ աչքը, հրէշը, որ իրենց անձրեւ է բերում, ինչո՞ւ նրան չաղօթել: Այս բնակլիմայական հակադրութիւններից ճեղքուեց արիացիների կրօնքը եւ նրանցից մի մասը պաշտեց կայծակը, անձրեւատուրը: Այս բնապաշտական պատերազմից առաջ եկան չ-արիացիները, ոչ արիացի հաւատքը դաւանողները չ-արիներ կոչուեցին՝ ՎԻՇ, ՎՇԵԱԳՆՈՂ, Վիշաղ, Վիշաղազուներ, հրէներ, օձեր, անարգուածներ: Երբ կարդում ենք վահագնի ծնունդը, նրա մէջ տեսնում ենք հակաարեգակնային չափազանցութիւն: Շեշտելով, որ երկինքը եւ երկիրը ու ծիրանի ծովը երկնում են եւ ամպերով պատել, եւ եղեգներից բոց եւ ծուխ էր ելնում, այսինքն կրակ ու հոգի, իսկ կայծակը՝ սարսափի ակը այդ բոցերի մէջ էր վազում, նկատի ունի արեւի եւ այս երկուսի

միացումը. չափազանցնում է անձրեւի երկունքի բնապաշտական հմայքը եւ այն համեմատելով արեգակի աչքերի գեղագիտական ձեւով՝ որպէս ոչ պակաս զօրութիւն։ Հետագայում բուսական եւ կենդանական հաւատալիքները մնացին արեւից ցածր։

ԱՐԵՒՈՑ ՀԱՅՈՑ «Զ» ԳԱՂԱՓԱՐԱՆՇԱՆԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԿԱՌՈՅՑԸ

Ինչպէս հայոց միս գաղափարանշանները, որոնց մասին արդէն որոշ մեկնարանութիւններ ներկայացրել էի, այդպէս էլ Զ գաղափարանշանի մասին ուզում եմ ներկայացնել, որպէս բացառիկ երեւոյթ, թէ ինչպէս հայ մարդը տիեզերական մտքի կառոյցը ձեւաւորել է գաղափարապատկերային դրսեւորումներով, որը ընթերցելի է համաշխարհային մտքի համար։ Ո՞րն է այդ ամբողջականութիւնը եւ ինչ է արտայայտում Զ գաղափարապատկերը։ Այս նկարում դուք տեսնում էք, թէ որքան յատակ ու պատկերաւոր է մտածելածեւի ուղղութեան նպատակը, որի գաղափարախմաստային ներդաշնակումը ստեղծուել է երկարամեայ ժամանակաշրջանում, արեւի գիտակցումից ու կրօնահասկացողութեան դաւանարանութիւնից։ Հայոց Զ գաղափարանշանը սրբազն նշան է, որի աղօթքահաւատքային արտայայտութիւնը ընթերցում է «անսահմանութիւնից վեր, որպէս մեծարում սրբազն արեւը»։ Իսկ այժմ տեսնենք Զ գաղափարապատկերի մի ուրիշ տարրերակ, որի նախնական վիճակը արտայայտում է զօրացեալ իմաստը։ Երբեմն գաղափարախմաստները իրար նմանուում են, սակայն փոքր ձեւափոխումով ուրիշ իմաստի են վերածում։ Աւելացնեմ, որ հայոց գաղափարանշանները շատ շատ են եղել ոչ թէ 36 հատ, այլ այնքան՝ որքան գիտակցահմաստային պատկերաւորման

աշխարհաճանաչումը կարող էր գծագրել եւ տալ իմաստային ձեւ. ուստի այս թիւք կարող ենք յայտնաբերել այն ժամանակների մտակառոյցից, երբ գաղափարապատկերները գաղափարանշանների չեին վերածուել:

Այս բոլոր գաղափարանշանները արեւոց հայոց հաւատալիքներն եին, երբ աղօթքի գոհացումն ու կողմնորոշումը գիտակցում էին այս նշաններով:

Արեւոց հայոց մէկ գաղափարանշանը կարող էր արտայայտել նոյն իմաստահամակարգին պատկանող ըմբռումներ, որ նոյնն է եւ այսօր. օրինակ, ջուր հասկացողութիւնը թէ՛ հեղուկ է, թէ՛ ծով, թէ՛ կետ է, թէ՛ անապատ է եւ թէ կեանք է եւ շատ ուրիշ մտքեր, որ կապուել են ջրի հետ. Սա պարզ օրինակ էր պատկերացման համար. Զ. նշանի ամենանախական ձեւերից են հետեւեալ պատկերները, որոնց ժամանակ անսահմանութեան նշանի ամհրաժեշտութիւնը չէր գիտակցուել:

Զ. նշանի տիեզերահմաստասիրական բնոյթը աւելի յատականում է, երբ Զ. նշանով իմաստների մասին մտածում ենք. բոլորն էլ արեւի եւ նրա զօրութեան, նրա գործունէութեան իմաստաւորումի հետ են կապուել: ԴԱՅԿ + ԱԶ իմաստը ընթերցենք, գաղափարահմաստների եւ գաղափարանշանների խառն եւ կիսախառն ձեւաւորման շրջանում:


Աւարտելով շատ խտացուած մեկնաբանութիւնս, պիտի ասեմ, որ ինչպէս գաղափարապատկերների շրջանում, այդպէս էլ այսօր, երբ որեւէցէ իմաստի վրայ աւելացնում ենք ուրիշ իմաստ, ստանում ենք նոր իմաստ: Օրինակ՝ հաց - հացրուխ, հացա-հատիկ, հացատեսակ, հացակեր, հացագիտութիւն, հացադուլ, հացընկեր եւ շատ ուրիշ իմաստներ:



Մեր հայոց լեզուն այսօր վտանգուել է, ինչպէս բոլոր լեզուները, քանի որ բառերի փոխարարերամիջոցը կատարւում է բերանացի՝ առանց իմանալու տուեալ բառի իմաստը: Եթէ շարունակուի այնպէս, որ մեր խօսակցութիւնը նմանուի կենդանական աշխարհի ձայնանշիւնային ընկալումի, ապա պէտք է համարենք, որ հայերէն խօսելը ոչ մէկ արժէք է ունենալու, եթէ այն չի գիտակցւում: Մեր առօրեայ, շատ սովորական բառը, որ փոխանակում ենք միմեանց՝ բարեւ, պէտք է իմանանք նրա խորքն ու ծնունդը: Այսպիսով, իրապէս մեր սրբազն լեզուն կենդանի ու վեհ տիեզերահմաստասիրական հոգի է առնում իր հզօր կենսատուութեամբ: Մեր բոլորի սրբազն պարտքն է ճանաչել մեր լեզուն՝ մեր հզօր զէնքը:

ԱՐԻԱՑԻՆԵՐԻ «Է» ԱՐԵՒԱՆՉԱՆԻ ՆԵՐՁԱԱՇԽԱՐՁԸ

Է-ութիւն, սէր, էր, էի, էից. տիեզերահանձար աղօթաշարքը արիացիների արեւոց կրօնքի երկրորդ դաւանանքի շրջանն է, որտեղ արեւը գիտակցուում էր որպէս էութիւն, այսինքն կեանքի իմաստը՝ ոչ թէ սոսկ արեւ: Է սրբանշանի ծագումով, դժուար չէ գիտակցել, որ արեւի գործունէութիւնը սահմանում էր կենաց խորհրդով, այսինքն՝ էականը, լոյար, տաքութիւնը, գարունը: Է նշանը հայոց լեզում միշտ ներկայ է բառերի շարադրութիւնում եւ զա գալիս է վաղնջական ժամանակներից: Օրինակ՝ սա է, նկատի ունի որեւիցէ առարկայ: Օրինակ՝ գարուն է, այստեղ ոչ թէ գարունն է, այլ էն է, ուր



գարունը իր միջից է վերագրում էի փոխադարձ իմաստաւորումը: Այսինքն էն գարունն է:

Հայոց Է խորհրդանշանը, որպէս էից էութիւն, ոչ մէկ առնչութիւն չունի յունական ԵՕՏի հետ: Էի տրամարանական առկայութիւնը առաջին անհրաժեշտութիւնն է առարկաների զատորոշման մէջ: Երբ որեւիցէ մէկը խօսակցութեան ժամանակ դադար առնելով հնչեցնում է Է՝ ձայնաարտաքերումով, այդ վիճակը որակագոտում է յիշողութեան ձեւը, որպէս իմաստածանաշում: Էի հետ կապուած այլ կառոյցներ են՝ չէ, էյ, հէյ, էֆ, էի, էն, էլ: Այս բոլորը արտայայտում են զգացումի գիտակցում եւ որակաւորումը փոխարարերական է, որ կապուել է իրադարձութեան հետ:

Երբեմն էին նման յիշողութեան դադարը վերածում է Ըի, երբ դժուարախօսները չեն կարող շարադրել իրենց միտքը եւ միշտ կրկնում են Ը՝ Ը՝ Ը՝ այսինքն բանաւոր ստորակէտ է, որը համաշխարհային բնոյթ ունի եւ ազգի հետ չի առնչում եւ ոչ էլ փոխառութիւն է: Էի պարագան, առաջին մտաւոր փորձն է իմաստային ձեւով զատելու որեւիցէ բան եւ է ասելով նկատի ունի, այսինքն հաստատ որոշել է զանազանութիւնը: Օրինակ՝ գարուն է, ձմեռ է, եւ ամքող իմաստային որակաւորումները էի է վերածում: Էի պարագան համաշխարհային բնոյթ ունի, մանաւանդ որ հնչիւնը նախնական է: Օրինակ, հայոց էն եւ ԵՕՏը տարբեր են, ԵՕՏի մէջ արեւին է ուղղուել գոյի սկիզբը, իսկ հայոց մօտ էի գաղափարապատկերային կառոյցը վերածուել է տիեզերական իմաստաիրութեան: Տես էի աղօթքախորհուրդը, որը է ում աւելիով ներխտացուել է, մնում է միայն այն ընթերցել: Նրանք ովքեր յունական ԵՕՏը նմանեցնում են հայոց էութիւն իմաստի հետ,

պարզապէս անգիտակից են ծաւալային մտածողութեան օրինաշափութիւններին՝ որպէս կենսածին երեւյթների տարբեր նոյնութիւններ: Եւ այդ շուարումից, այդ նոյնութիւնները որակաւորում են որպէս փոխառութիւն:

Սակայն, շատ խտացուած ձեւով նշելու եմ, որ Սէր իմաստը նոյն էին վերագրուող սահմանումն է Էութեան, եւ դա գաղափարապատկերային եւ իմաստային առումով այդպէս է: Երբ արեւի զօրաւոր լոյսի ճառագայթին միանում է անսահմանութեան նշանը, այդ միացման կէտը Սէր իմաստի ծնունդն է: Տրամաբանօրէն, լոյսի եւ իմաստութիւնից ստեղծում է երկնքի Էութեան խորհուրդը մտքի հետ եւ ստեղծում է սէրը, այսինքն սահման էի: Այս է աղօթքախորհուրդը էի.

Ի սկզբանե, որ արեւի զօրաւոր ճառագայթիդ լոյսը բարձրանում է տիեզերիդ սահմանները լուսաւորելու ինչոյն մտիս խաւարը եւ անսահմանութեան տիեզերահմաս խորհրդանշիդ սրբազն սիրոյ համանը (սէր) որդէս սահմանում էութեան, որ տիեզերահմաս խորհրդակառոյցդ էութեանս իմաստի լսարանը վերացնում է երկայինից երկնային մտիս, որդէս յալիտենական աղօթք, հաստատուն է իմաստիդ լոյսը եւ մտիս լսարանը տեղափոխուում է տիեզերական լսարանիդ տաճարում, որ աղէն բաժանել ես մարմնիս անհետացող, ունայնացող նիւթը, հոգուս եւ մտիս ուղղութիւնները: Չո դարգեւած տառաղանքները եղան իմաստութեանս գաւազնը, դու ես իմաստութեանս ծնունդի հոգեմտակերտիչը, ընդունի՛ էութեանդ տաճարի տիեզերակերտ լսարանդ եւ մտիս հորիզոնները շար լսարանիցդ անդին՝ դէմի յալիտենականութեան եւ սրբազն իմաստաճարիդ բարձունքները:

Հայոց է գաղափարանշանը բացառիկ երեւյթ է

համաշխարհային առումով, որպէս տիեզերահմաստասիրական մտքի հաստատուն պատկերաձեւակերտում, որը նոյնիսկ աներեւակայելի է:

Էի խորհուրդը ամբողջովին իմանալի է, ոչ թէ նրա համար որ այդպէս է կերտուած, այլ նրա համար որ այդ նշանի կերտողին հասած տիեզերահմանճարի հրամայականն է, որ ներկայացրել է արիացիների է սրբազն նշանը: Այս է արիացիների Առեհոջ ՄիջՔԸ, ՀՈԳԻՆ եհ ՀԱՆՁԱՐԸ:

«Ը» ԽՈՐՃՐԴԱՆՇԱՆԻ ԱՂԹՔԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Երկար ժամանակ Ը խորճրդանշանը ինձ համար լուսակեաց էր, բայց կարծես խօսելիք ունէր. սակայն, ո՞ր ըն է այդ խօսքի սկիզբը: Ինձ համար նրա լեզուն բացեց փոքրատառ ըն, որ նոյնպէս պատկանում է լոյսի ընդհանրական աղօթքին, որտեղ ընդ-միջից հասկացողութիւնը ցոյց է տալիս լոյսի վարի մասից սկիզբ առնող ճառագայթը՝ անսահմանութեան նշանի միջից, իսկ վերի վերջաւորութիւնը, որպէս լոյսի. իմաստին փոխի հաղորդաերախտաւորում, թեքուել է դէպի արեւելք՝ որպէս խոնարհում արեւին, որպէս լոյսի պատկանելիութիւնը ընդ արեւին միջից:



Արեւոց հայոց բառ ու բանի ունեցած ժառանգութիւնը, գաղափարախմաստները եւ լեզուական կառոյցը համազօր են իրար: Որեւէ իմաստ գաղափարանշանի իմաստասիրական նոյն կառուցուածքը ունի:

Ը խորճրդանշանի գաղափարախմաստը ընթերցւում է այս տարբերակով. Եթէ լոյսի ճառագայթից սկսեց աղօթքը վերի մասից.

Ընդմիջից, որ լոյսիդ իմաստից է ծննում եւ մտիս խորհուրդը թեքում է դեռի արեւելք երախտագիտութեան աղօթքի ընդունելիութեամբ, որը անսահմանութեան անմահ սկիզբն եւ վերջն է ամեն բանի, լոյսի եւ մուրի: Մուրին, խաւարին միջից լոյսիդ շառաւիդը նորից շարժում է արեւմուտից արեւելք, որպէս անընդմիջելի մեծաւոր եւ անիմանալի հեռաւոր: Ընդհանրական ես, ընդունելի անսահմանութեանդ լոյսի խորհուրդով, ընկանիմ եւ ընդհանրականիդ ընդհանուր ընդունելութիւնը, որ սկզբնաւորել ես ի սկզբանե:

ԱՐԵՒՈՑ ՀԱՅՈՑ «Թ» ԳԱՂԱՓԱՐԱՆՇԱՆԻ ԽՈՐՃՐԴԱԿԻՄԱՍՏԸ

Արեւոց հայոց գաղափարանշանների փայլուն եւ յստակ իմաստակառոյցը զարմանալիօրէն արտայայտում է գաղափարանշանի ասելիքը:

Թ խորհրդանշանի պարագան ի սկզբանէ ունի արեւածեալ սվաստիքածեւից նրա թեժութեան - թեւի - արտայայտութիւններից մէկը: Թոփչքային իմաստ արտայայտող այս նշանը տիեզերքի, երկնքի եւ ալդ տարածութեանը մէջ կատարուող երեւոյթների մեկնարանն է՝ որպէս թոչունի թոփչք, որպէս լոյսի թեժացած թոփչքածեւ: Թ նշանը մեծ ապացոյց է գաղափարանշանների մասին գիտակցելու, որպէս առանձին իմաստներ:



Թ գաղափարանշանը Պ գաղափարանշանի բարդութիւններ ունի, սակայն ուղղուածութիւնների արտայայտչականութիւնից Թ նշանը յատակ է, աւելի դիւրըմքոնելի: Ընթերցանութեան ժամանակ Թն ծնունդ առել է որպէս իրական երեւոյթ եւ ոչ առարկայ, որ խոշընդուտէր արեւի կրօնքին, որպէս գործողութիւն ցոյց տուող նշան, որը կրօնաւրական դաւանանքով սվաստիքածումից յետոյ վերագրուեց լոյսի թոփչքային մեկնարանմանը եւ դասաւորեց մտքի թոփչքային մտածողութեան դրաւերումները: Թ նշանից եւ նրա հետ առնչուող երեւոյթներից զգում ենք թափանցելու, թռչելու, թեւակոխելու, թաւալուելու եւ շատ իմաստներ, որոնք թէեւ Թով չեն սկսւում, սակայն նոյն գործողութիւնն են արտայայտում:


Եթէ ընթերցենք Թ խորհրդանշանը արեւոց կրօնադաւաննքային աղօթքալնթերցումով, այն լրիւ վերագրում է սա ձեւին.

Ի սկզբանէ արեւանցանիդ (սվաստիք) ծնունդից սկիզբ առնող լոյսիդ սրբնքաց թոփչից, որ բարձունս է տիեզերքում, մտիս լոյսի աղօթքը թեւելով լոյսի թաղանթիդ թափանցեալ թիրանի ծովը, դու լոյսի ծնունդ՝ երկնի եւ երկրի, այսինքն լոյսիդ մեկ ծայրը մեզ ուղղուած, իսկ միւս ծայրը՝ բարձունս երկնի եւ երկրի:

Թ խորհրդանշանը, ինչպէս եւ միւս սրբագան խորհրդանշանները, մարդկային հոգու եւ մտքի ներդաշնակ մղուածութիւնն են իմացութեանը, նրան վերածելու պատկերի կամ արտայայտապատկերի: Այս է արեւոց հայոց տիեզերահանձար աստուածաշնչային գաղափարանշաններու սրբագան աղօթքախօսութիւնը լոյսի հետ:

«Լ» ԽՈՐՃՐԴԱՆՇԱՍԻ ԼՈՒՎԾԻՆ ԱՂՕԹՁՅ

Ինչպէս Խ, Զ, Է, Վ եւ նմանակառոյց խորհրդանշանները, այնպէս էլ Լ խորհրդանշանը իր վարի մասով, որպէս սկզբնաւորման հիմք, ունի անսահմանութեան խորհրդանիշը: Գլխագրի պարագային՝ արեւի խորհրդանշի ձեւափոխուած մասն է, իսկ փոքրատառի պարագային՝ Լ նշանը կառուցուել է արեւի հասկացողութիւնից շատ յետոյ, որպէս գիտակցուած ու ըմբռուած խմաստասիրական լուսանշան, անսահմանութեան խորհրդանշանով: Արեւոց կրօնքի դաւանութիւնը արդէն բաժանել էր լոյսերի ծագման եւ պատկանելիութեան սկզբնաաղբիւրները: Եւ այդ պատճառով լուսնի լոյսին անուանում էին




լուսնակ, իսկ արշալոյսի պարագային՝ Յ յարութեան նշանի առկայութիւնը որպէս տարրերութիւն զգացւում է:

Հոյսի հետ կապուած արեւոց հայոց դաւանանքը, լինելով միակրօն արեւապաշտ հաւատք, ոչ մէկ քան իսպնել է իր հետ: Եւ այդ պատճառով զգացւում է տիեզերախմաստասիրական մտքի լուսաւոր հասկացումը: Արեւոց հայերը տեղեակ էին, որ լուսնակի լոյսը արեւից է եւ այդ պատճառով է, որ լուսնակ եւ արեգակ ակ կառուցներում ճանաչել են, ինչպէս կայծակի եւ քնական այլ երեւոյթներում: Մենք տեղեակ ենք արեգ-ակ կառուցին եւ արշալոյս-լոյս ըմբռումին, ինչպէս նաեւ նրանց հետ կապուած ու նրանցից ծնուած խմաստասիրական մտակառուցների:

Ինաստաւէր կառուցի հիմքը արեւի լոյսն է: Եւ իմաստութիւնը ծնուել է արեւի լոյսից: Արեւոց հայոց ԱՍՏ շրջանը, որը արդէն տեսանք, Արեւ Սահման Տիեզերքի գաղափարապատկերային ընթերցումով, ԱՍՏ կառուցից առաջ տրուեց Մ մշտնշենական նշանը, որպէս հոգու եւ դաւանանքի վերջնական ամբողջացում, իսկ Մ նշանից առաջ տրուեց Ե՝ ի սկզբանէ գաղափարանշանը: Հոյսի հետ է եւ նրանից է ծնուել լսել իմաստը: Մենք ունենք ՈՒՆԿ, սակայն ինչպէս միւս օրինաշափ երեւոյթները, այդպէս էլ այս երեւոյթը ՈՒՆԿին՝ լսելուն տարրերակն է: Լուսաւորիչ՝ այսինքն մտքի լոյս տուող, լուսաւոր միտք, լսարան, լսել: Իսկ ՈՒՆԿի պարագանականշի հետ լսելու իմաստն է յատկանշում. օրինակ, կենդանական աշխարհը ունի ունկ-ականշ, սակայն նրանց լուսաւորիչ չենք կարող կոչել:


«Խ» ԽՈՐՃՐԴԱՆՇԱՍԻ ԽՈՐԵՄԱԿԱՌՅՅ ԳԱՂՏՆԻԹՆԵՐԸ

Սկզբնական շրջանում մեծ դժուարութիւն էր Խ նշանի մեկնարանումը իր խիստ եւ քարդ կառուցով, սակայն ակնթարթային նշմարումով, երբ վերականգնեցի Խի նախակառուցների շարքը, պարզուեց որ Խ նշանը իր տեսակներից մէկն է, որ մեզ է հասել այս ձեւով, լոյսի վրայ իրեն չհասող միացող խորհուրդ-գաղտնիք իմաստով, որովհետեւ իմաստասիրական նշանի եւ լոյսի ճառագալթանշանի կապը ընթերցելի լինելով, սկիզբը որպէս լոյսից ծնուռը անսահման նշան, լոյսի խորհուրդն է, որ ուղղուել է դէպի արեւելք, խոնարհման, խոհուն իմաստով, խոկ եթէ անսահմանութիւնից է ծնուռը մտքի լուսարանումը, ապա լոյսին միանալու գաղտնիքից անցնում է հոգու զգացումի սիրաաղօթային հոգեմօտեցումին: Հնթերցելի է յստակ ու ճոխ իմաստութեամբ եւ արիական է:



ԱՐԻԱՑԻՆԵՐԻ «Ծ» ՏԻԵԶԵՐԱԾԻՆ ԻՄԱՍՏԱՆՇԱՍԻ

Ծ իմաստանշանը այն մեծ փաստն է, որից անմիջապէս իմանում ենք որ օղակաձեւ է, որից վերեւ անսահմանութեան նշանն է, որը քանաւոր իմաստով հայոց ծիրանի ծովն է, այսինքն արեգակնային ծիրանագոյն երկինքը: Ծիր-ան ծովը հայոց քնաիմացական արտայայտութիւնն է: Այս նշանը կառուցողը անպայման իմանում էր, թէ ինչի՞ համար էր անջրպետից վերեւ պատկերած անսահմանութեան նշանը եւ ինչի՞ց է կառուցուել այդ նշանը: Ուրեմն, անսահմանութեան նշանը Ծի մէջ արտայայտում է արեւելքից սկիզբ



առնող անիմանալի է (տես հայոց հարցական նշանը՝ )
 (?) այս նշանները փոխառութիւններ չեն այլ մտքի գործունէութեան որպէս արդիւնք, աշխատում է իմաստային ձեւով լուծել որեւէցէ հարց, որը բնախնդիրային լուծման ձեւ է:
 Այս է անսահմանութեան նշանի պարունակութիւնը Ծ-իրանի ծովում՝ անջրպետից վեր: 

Կողքի պատկերն է աղօթքային բովանդակութիւնը Ծ տիեզերաբնոյթ իմաստանշանի խորհուրդը.

Մտիս Շեղ կարողութեամբ, որդես անկարող գիտակցելու ժողովական սիեզերանութիւն սահմանները, որդես սրբութիւն գիտակցութեան համար, ժողովական դասկերում եմ որդես Երկին, որի մեջ է ամեն բան եւ ենզնով է լուսաւորում ամեն ինչ: Եթե զանից ծնուած՝ ի սկզբան ժողովական սիեզերանութիւն իմաստանշանը, որի Երկու ծայրերը եւ եզրերը կը առում են կենաց եւ ժամանակի իմանալի տարածում, եւ այդ տարածութիւնում են տեղադրել եմ կենաց ծնունդը իր փառաւոր ծայրերունով, որը հասնելով եւ միանալով իմաստների միացման տեղը, ստեղծում են սեր եւ կարօս ու տանում են կենաց ուղիս: Չո խորհրդի բաժանումով թէ՝ դարգեւում են իմաստութիւն եւ թէ կեանիս Երկորդ ցըանը՝ ծերութեան հոգետառաղանդի, Վերանալու եւ միանալու իմաստութեանդ, հոգիս խառնելով էութեանդ անսահմանութեանը:

ԱՐԵՒՈՑ ՀԱՅՈՑ «Ծ» ԽՈՐՃՐԴԱՆՇԱՍԻ ԱՍՍԱՐ ԼԵԶՈՒՆ

Դ սրբագան նշանի մասին խօսելիս, աւելի նախընտրելի համարեցի փոքրատառ դ եւ ձեռագիր Հ նշանների համատեղումից տեսնել նրանց տարրերութեան նշանակութիւնը: Կառուցուածքների տարրերութիւնը շատ փոքր է եւ ամենակարեւորը՝ որ այս նշանը, բացառաբար միւս նշանների, իր վերի մասով արեւմտեան կողմ է ուղղուել: Այդ պատճառով Ղ նշանը, միշտ, իրենից առաջ եւ յետոյ տրուող գաղափարանշանների հետ, յաճախ ներկայանում է իմաստակառոյցների մէջը կամ վերը:



Այս գաղափարանշանի բարդ կառոյցը, որ հասել է մեզ որպէս տառ, հնարաւորութիւն է տալիս գիտակցելու այլ փոքր ձեւափոխումների խիստ նշանակութեանը, որը գաղափարահմատային երեւոյթ է: Ինչպէս այս ձեւը, նաեւ ուրիշ գաղափարանշաններ նոյնարնոյթ են. օրինակ՝ Վ, Ը, Լ, Շ, Դ, Ղ: Այս ձեռագիր եւ գլխագիր տառերի տարրերութիւնը առաջ եկաւ բանաւոր խօսքից՝ գրաւոր գաղափարանշանայինի անցնումից, երբ գաղափարահմատները քաղաքակրթութեան անկման աւարտին էին եւ որպէս օրինաշափութիւն, գրաւոր ձեւի անցնելու համար, նրանք որպէս ազգային ժառանգութիւն մնացին այնքան ժամանակ, որ ունեցան իրենց զանազան տեսքերը, ըստ մեկնողական իմացութեան զարգացողութեան: Արեւապաշտ կրօնքի աւարտը սկզբնաւորում է կրակապաշտութեամբ, որպէս արեւի հոգեբանական գաղափարահմատ:

Դ խորհրդանշանի ընթերցումը իրանից առաջ տրուող գաղափարանշանի ուղղութեամբ է դրաւորուել: Իսկ վարի մասով ձեռագրաձեւում անսահմանութեան նշանն է, որը, գլխագրում արեւանշանի կիսահետքն է: Ուստի Դ նշանի ասելիքը այս է.


Անսահմանութեանդ սրբանցանի կնիքով, որ ծնւում է անսահման խորիցող ու կիսում կենաց լոյսի իմաստութեան բաժանումով, որ շարունակում է գոյութիւնը ին մեծ, որ բարձրանալով բարձունդ տիեզերական թափանցում է խաւարի սահմանները անհմանալի:

Ձեռագիր  ի այս ձեւի վրայ աւելացուող գուգահեռ գծին միացող մասը անիմանալի ից անցնում է գոյութեան, որեւիցէ մասնիկի հաղորդակից դարձնելով, ու անիմանալին

շարունակում է ունայնութիւնում այլ գաղափարանշանի շաղկապումին: Վի ներկայութիւնը հետեւեալ կառուցներում՝ աղ-աղ-ակ, ուղիղ, աղի, աղերս, առաստ-աղ-(ակ) եւ շատ շատ Պ-Ա իմաստներում Հնչիւնաձայնային գոյութեան ծնունդ է: Այն կենսարանօրէն ձայնաօրկանային համակարգի կարողութեանը արտայայտութիւն է, ոչ միայն որպէս հնչիւն, այլ՝ որպէս շնչափոխային, օթամղումի նեղացման, խեղդուածութեան աղաղակումի փրկութեան ձայնարձակում: Վի ճանաչողութիւնը, թէ ինչ ձեւով եւ ինչ անհրաժեշտութիւնից է ստեղծուել որպէս գաղափարանշան, կարօտ է ուսումնասիրութեան, մի բան, որ օստար լեզուների որոշ մասի մէջ այն գոյութիւն չունի: Վի եւ Խի հնչիւնարձակման մօտիկութիւնը բաժանում է Ը հնչիւնով: Այն պարագան, որ բառակառոյցներում իրար մօտ են այս արձագանգները, երբեմն շփոթեցնում է: Վի իմաստակառոյցը, որպէս հոգեբանական դրսեւորում, ընթերցելի է այնպէս ինչպէս կայ. սակայն անյայտ է ամբողջական իմաստը իր ոչ լրիւ կառոյցի պատճառով, որը կայ որպէս նշան եւ ունի իր կառոյցով իմաստներ: Ուստի, մեզ հասած արեւոց հայոց գաղափարանշաններից եւ նրանց տարատեսակներից երեւում է, որ արեւոց ԱՐ ձայնարտարերումները, մինչեւ Դ, Լ, Խ ձայնարտարերումները, շատ հեռու են իրարից: Մէկը բերանային ազատ արտայայտութիւն է, իսկ միւսները՝ Խն եւ Պն՝ ներքին եւ ամենավերջին հնչիւններն են, որոնք աւարտում են խեղդամահով եւ հնարաւորութիւն չունեն ուրիշ հնչիւն արտարելելու: Այս տեսանկիւնից, Վի արեւմտեան կողմը թեքուած (անիմանալի) նահ, աղերս, աղաղակ, աղաչել, աղմկել, աշ-իս, օ'խ եւ Խից յետոյ Դ հնչիւնով աւարտում է ձայնային համակարգի գործունէութիւնը:

Ղ նշանի արձագանգը այնքան նեղ է ու սահմանափակ, որ կարողութիւն չունի ամէն տեղ ներկայ գտնուելու. այդ պատճառով երբեմն նրան փոխարինում են Լ կամ Խ ձայնահնչիւնները: Բերանային մասը, որպէս գմբեթածեւ բարձրախօս, հնարաւորութիւն ունի օդի եւ թքագեղձերի, լեզուի եւ մկանածնօտային շարժումներով ազատ արտայայտել, որը Դմշունի:

ԱՐԵՒՈՅ ՀԱՅՈՅ «Ֆ» ԽՈՐՃՐԴԱՆՏԱՆԻ ՍԿԶԲՆԱԴՈՐՈՒՄԸ




մաէներկիան արեւային է, որպէս ճառագայթ եւ որպէս ձեւ:

Ինչպէս երեւում է հայոց արեւապաշտ կրօնքից, բոլոր խորհրդանշանները եղել են աղօթք եւ իմացութիւն: Ծխորհրդանշանի կառոյցը հաւանաբար լոյս, շող կառոյցների լրացնող եւ արեւի բնորոշ յատկութիւններից մէկն է, որ առաւտեան ճառագայթում է: Ճիշդ է որ լոյս շող է, սակայն, որպէս տարրեր երեւոյթ, նաեւ անհրաժեշտ է գիտակցել նրա շատ կարեւոր հոգերանական իմաստանշանային դասակարգումը: Այս երեւոյթը կարելի է նոյն ձեւով տեսնել քրիստոնէական կրօնքում, որպէս հոգերանական կարեւոր ըմբռնում: Ծխորհրդանշանի հետ կապուած բոլոր իմաստները, լինելով արեւոց հայոց կրօնադաւանանքային սահմանումներ, հայկական են եւ ոչ փոխառեալ: Խօսք վերաբերում է արեւոց կրօնքի ուշ միջին եւ վաղ շրջանին: Հետեւարար, մեզ հասած Ծխորհրդանշանը իր տակի թեք կոր մասով, շատ փոփոխուած է եւ թէ Ծնանի այս փոփոխութիւնների պատճառները մեզ ծանօթ չեն: Ուստի, որպէսզի մենք գիտակցենք ճառագայթ նախնական իմաստի պատկերը, պէտք է որ ծայրերը կորացած չլինեն, իսկ եթէ շեղել է յետոյ, ուրեմն այն շեղում է դէպի իմաստասիրական կողմը եւ աւելի բարդանում: Ուստի, թէ՝ մէկը եւ թէ միւսը հանձարեղ մտքի արտայալութիւն են, որ հազարամեակներ առաջ ստեղծուել, սրբագործուել ու պահուել են հայոց արեւապաշտ կրօնքի տաճարներում, ճառագայթելով արեւաշինը լոյսի ճանաչումը՝ որպէս ճաճանչ, որպէս ճրագ, որպէս հանձար տիեզերածին աստուածաշնչի:

ԱՐԵՒՈՑ ՀԱՅՈՑ «Ծ» ԳԱՂԱՓԱՐԱՆՇԱՆԻ ԴԱՐԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՅՑԸ

Եատ զարմանալի է արեւոց Ծ գաղափարանշանի տիեզերաիմաստասիրական խոր ու յատակ կառոյցը: Ձատկապէս խօսքս ուղղելու եմ անսահմանութեան նշանի վրայ, որը շատ գաղափարանշանների վրայ կնքած է իր յատուկ շեշտումով, որպէս սկզբունքային ըմբռնում: Հիմի տեսնենք, թէ ինչ արտայալութիւն է ցոյց տալիս արեւոց հայոց սրբագան Ծ գաղափարանշանը:


$$\textcircled{S} = \textcircled{G} + \textcircled{G}$$



Այս ընթերցումից իմանում ենք,որ արեւոց ԱՐ շրջանից մինչեւ ԱՐԾԱԼՈՅՍ ժամանակաշրջանը շատ հեռու է, սակայն ԱՐԾԱԿ արեւամեծարման աղօթքից շատ լաւ երեւում է, շնորհի Ծ սրբազն գաղափարանշանին: Ինչպէս երեւում է, այս գաղափարանշանը աղօթքային տիեզերակառոյց ունի, որտեղ արտայայտում է ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹԵԱՆ ՈՐԵՒԻԾԵՑ հատուածից սկիզբ առնող արեւային շարժման ուղղութիւնը, անսկիզբ իմաստով գալարում է անջրպետում, իսկ վերեւի՝ անսահմանութեան նշանով ասում է. Արեւի շարժումը անսահման է, արեւը անսահման է, սկիզբից անսահման է, անվերջ: Շարժումը արշալոյս, ջերմութիւն, եռանդ արտայայտող հոգեբանական նուրբ կառոյց ունի: Շարժման ուղղութիւնը, որ գալարում է անջրդետում, անսահման է: Թէ կենտրոնից եւ թէ դրսից, ներշարժում եւ արտաշարժում արտայալութիւնները գիտակցում են ունայնութեան եւ անսահմանութեան խորհրդառոր ընկալումը: Ծ խորհրդանշանը ի գուր չէ, որ արշալոյս իմաստի մէջ արեւից յետոյ է արտայալուել, իսկ լոյս իմաստը շարադրուել է Ծ նշանից յետոյ: Ուստի, լոյս հասկացողութիւնը արեւի շարժման եւ լոյսի տարածման անմահ եւ անսպառ խորհրդն ունի, որը պիստի համընկնի ներսէս Ծնորհալու <Առաւատ կուտոյ> արեւաաղօթքին: Այստեղ, նոյնիսկ ընդգծում է երրորդութիւն իմաստակառոյցի ձեւալորումը անսահմանութեան նշանի մէջ, արեւը-աստուածը որպէս սկիզբը-մէջը եւ վերջը ամէն էի եւ գոյի: Այս հանճարեղ աստուածաշնչային տիեզերահմաստասիրական գաղափարակառոյցները այսօր ապրում են մեր սրբազն լեզում, նրանք վաղ շրջանից մինչեւ ուշ շրջան, կատարելագործուել ու պահպանուել են


իրենց հրաշք փրկութեամբ: Իսկ հետագային, երբ գաղափարանշանները վերածուեցին տառերի, նրանք մեռան քաղաքակրթութիւնների յորձանուտում: Բայց արեւոց կրօնքը ամենաանփոխարինելին էր արեւոց հայոց համար, որոնք սրբազն խորհրդանշանները պահեցին իրանց սրտի եւ հոգու աստուածաշնչային մատեանում: Ծ աղօթային խորհրդանշանը մենք տեսնում ենք հետեւեալ իմաստներում. Արշակ, Արշալոյս, աշ, Արեւաշ, ըող, ըողակաթ, Ծողիկ, Ծաղիկ, ըողըողուն եւ նման շատ կառոյցներում, որոնք խորհրդանշում են արեւի գաղափարը եւ նրա հզօր գործունէութիւնները: Այսօր շատ կարեւոր է գիտակցել եւ արժենորել մեր հոգում եւ մտքում, մեր սրբազն ու անմահ հայոց գաղափարանշաններին ու նրանց անաղարտ իմաստասիրական լեզուին:

Վաղ շրջանի հայոց գաղափարանշանների միասնակառոյցներում, Ծ խորհրդանշանի հետ կապուած բոլոր իմաստները պատկանում են արեւոց հայոց կրօնաաղօթքային դաւանանքներին, երբ Ծ նշանը արեւի կողքին տրուող սրբազն արտայայտչանշան էր:



ԱՐԵՒՈՅ ՀԱՅՈՅ «Պ» ԽՈՐՃՐԴԱՆՇԱԽԻ ԿԱՌՈՅՅԸ

Ինչպէս միւս խորհրդանշանները, այնպէս էլ Պ խորժանշանը ունի իր տարատեսակները, որ ապացուցում է թէ սոյն գաղափարանշանի տարատեսակը նոյն կառուցուածքում, աղօթաարտայալտչամիջոցի տարբերակ է։ Պ նշանը Ն նշանի նման արեւմուտք է ուղղուել, սակայն Պ նշանի վերի պարուրածեւ մասը այս կառուցուածքով, լոյսի ճառագայթները ուղղում է դէպի երկիր, իսկ ի՞նչ է երեք ճառագայթի խորհուրդը. այս պարագայում, զա ընթերցւում է որպէս կենաց եւ լոյսի հետ կապուող իմաստի սկիզբն ու աւարտը պարզեւա-




տու լոյսի, որ իմաստասիրական բացատրութեամբ արտայայտում է կենաց ընթացքը։ Այս բազմազանութիւնը նոյն Պ գաղափարանշանի համակարգն է. ամէնքն էլ ընթերցելի են իրենց աղօթքային հոգերանական կառուցով։ Եւ ամէն մի տեսակում զգացուելու է խորհրդածեւի տարբերութիւնը։ Ընդհանուր առմամբ այս կառուցը, հիմնուելով արեւոց հայոց կրօնքի դաւանաբանական օրէնքին, արտայայտում է լոյսի եւ նրա էութեան գործունէութիւնը, որը, տիեզերահմաստասիրական հասկացողութեամբ, մտքի եւ հոգու ներդաշնակ կապն է հաւատքի ամ բողջացումով։ Արեւապաշտ հայոց գաղափարանշանները չեն ծանրաբեռնուել շփոթեցուցիչ բարդութիւններով, որպէսզի մտքի իմաստը չշեղուի բուն կառուցի արտայալտչամաստից։ Ահաւասիկ մի քանի գաղափարապատկերների միացումները եւ նրանց ընթերցումը արեւոց հայոց դաւանաբանական գաղափարանշաններով, որը ստեղծում է աւելորդ կրկնութիւն եւ եթէ պատճառն ու նպատակը յայտնի են, աւելորդութիւն են կրկնութիւնները, որոնք ծանրաբեռնելու էին տիեզերահմաստասիրական մտքի աղօթքային նպատակը եւ նրանից անցնելու էր գիտական, ոչ աղօթքային բացատրութեան։ Սակայն, բացառուած չէ, որ արեւոց գաղափարանշանները միշին շրջանում իրենց իմաստասիրական վերելքում հասել էին այս բարձրութեանը։ Դրա ապացուցները շատ շատ են եւ շօշափելի։ Միայն մի պարզ օրինակով յիշեցնենք թագաւորաց թագերու գաղափարանշանները եւ հայոց խաչքարերի գաղափարապատկերային դասաւորումները, որոնք արեւոց հայոց քարագործութեան ժառանգորդներն են։ Գաղափարապատկերները ոչ թէ հնարքներ են, այլ այն մեծ անհրաժեշտութիւնը, որ հնարաւոր մի-

շոցներով մտքի արտայայտութիւնը դրսեւորում են պատկերի ձեւով, որպէս յիշողութեան շօշափելի կնիք, որպէս յուշամատեան: Այս երեւոյթը ունի համաշխարհային օրինաչափ բնոյթ: Երբ գոյութիւն չունէին կշիռ, չափ, մարդիկ ուրիշ միջոցների էին դիմում փոխարարերութիւնները կենսագործելու համար: Զարմանալի թող չթուայ, որ արդարադատութեան խորհրդանիշը իր կառուցով նժարն է՝ հիմնուած սուրի ծայրին: Սա ամենից պարզ օրինակն է: Արեւոց Պ նշանը յիշեցնում է լոյսի առասպելական գօրութիւնը իր բարձրագոյն իմաստներով, որպէս տիեզերակամարից իշնող լոյսի պատկներ: Արդէն իսկ արեւոց հայոց գաղափարանշանները ինքն ըստ ինքնան առանձին առանձին նշաններ են, ուստի այդ առանձին նշանը չէ որ ինքն իր մէջ ունի իմաստ, խորհուրդ, գաղափար, թէ ոչ բոլոր հնչումները եւ ձեւերը անիմաստ էին լինելու: Ոչ մէկ կասկած կայ այս մասին: Նոյնիսկ արեւոց գաղափարանշանները եղել են թուային արժէք ներկայացնող հաստատուն եւ անփոփոխ համակարգ, որը նոյնիսկ գաղափարաշափային յատկութիւն արտայայտող շօշափելի երեւոյթ է: Հազարամեակներից բխող այս հրաշագործ արեւածնունդ եւ տիեզերահանձար սրբանշանները հայ ժողովուրդի ազգային սեփականութեան ընդհանրական պատմութեան գանձերն են:

ԱՐԵՒՈՑ ՀԱՅՈՑ «Ո» ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ ԱՊՕԹՔԱԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Մեզ հասած արեւոց հայոց սրբազն գաղափարանշանները շատ փոփոխութիւնների են ենթարկուել, սակայն երբեք չեն կորցրել իրենց ընդհանուր իմաստակառոյցը: Եթէ որոշ փոփոխութիւններ են եղել եւ իմաստը փոխուել է անիմանալի պատճառներից, այդ մէկը կարելի է վերականգնել իրանց տարատեսակների մէջ, որոնք արեւոց ժամանակ օգտագործուել են որպէս աղօթքի նոյն իմաստին լրացուցիչ իմաստակառոյցներ:



Մեզ հասած արեւոց հայոց այսօրուան Շ- խորհրդանշանը իր մասին ունի ասելիք, որ լինելով հայոց հաշուարկման՝ հաղարաւորի թուային գաղափարանշանը, այդ պարագայում մեր այսօրուան Շ-ի նման չէ, ինչպէս փոքրատառ ոն ասում է, որ գլխագիր այսօրուան Շ-ից այդ կիսող մասը անսահմանութեան նշանն է։ Ուստի, փոքրատառ ոն մեծատառ Շ-ի մասին ասում է, որ գաղափարախօսականը դաւանաբանական է եւ ոչ պատահական։ Այս նշանը ինձ համար բացում է մի նոր էջ տիեզերահանձար աղօթամատեանից, իր կառոյցի եւ լոյսի ազատութեան ձեւաւորումի շնորհիւ։

Երբ գաղափարապատկերը իր աղօթքային ճիշդ վիճակով է, շատ յստակ է երեւում, մտքի ասելիքն էլ յստականում է։ Այս է Շ- խորհրդանշանի ասելիքը։ $\text{P} \infty = \text{Թ} = \text{Ռ}$


Որոշչափ լոյսիդ ծնունդի, սկիզբն է, որ քածրանում է, երկնակամարդ լուսաւորում եւ իշնում միևս կեանքը որոշող լուսատուդ։ Սկիզբեդ կենաց լոյսի, որ լուսակում է լոյսիդ հատումով մտիս, ի սկզբանե անսահմանութեան անիմանալի խորհից, քածրանում ես կամարով ու կաղում ես մտիս հաւաքը Ի կամարիդ տակ, որոյն իմանալի սրութիւն, Ի սահմաններիդ խորանին, լոյսի կամարին տակ փառաւորում եւ յալիտեականում է մտիս շատիղը. դու ես մեծը եւ անսահմանը, ետրիւնը եեզանից է սկսում եւ աւարտում։

Շ, Ռ գաղափարաշարքը արեւաօծեալ է ի սկզբանէ։ Մեզ հասած սրբազն գաղափարանշանները մեր հպարտութիւնն են, մեր մայր լեզուի սկիզբը, որ սնուցանում է իր տիեզերահանձար լոյսով։

ԱՐԵՒԱԾԻՆԵՐԻ «Տ» ՏԻԵԶԵՐԱԽՈՐՃՈՒՐԴ ԻՍԱՍՏԱՆՑԱՆՑ


Արիացիների Տ նշանը եւ անսահմանութեան նշանը նոյն նշաններն են։ Տն արտայայտում է երկրից եւ երկնքից կապուած աղօթքարտայայտութիւնը, իսկ հորիզոնական ուղղուած անսահմանութեան նշանը արտայայտում է ի սկզբանէ կենաց եւ արեւից սվաստիքայի անցման շրջանը, երբ արեւ պատկերի եւ էութեան խտացուած ձեւը սվաստիքան էր՝ զօրաւոր աստղը՝ արեւը։ Այս է այս երկու խորհուրդների պատկերը միասին $S : \circ + S = \circ$






Տ տիեզերական նշանը իր հնչինակառույցով, տիեզերա-
իմաստասիրական չորրորդ շերտաւորման շրջանն է: **Տ** որպես
տիեզերքի հետ խորհրդակցելու աղօթքանշան: Այս առիթով
ուզում եմ խօսել հայոց Ֆ խորհրդանշանի մասին, որի բացա-
կայութիւնը մեսրոպահանգրուանային գաղափարաշարքում,
որպէս հաշուարկման միջոց, բացակայում է եւ դա հնարա-
ւորութիւն է տալիս գիտակցելու, որ մեսրոպակառոյց աղիւ-
սակից դուրս ուրիշ նշաններ կային: Իսկ ինչ է խորհրդանշում
Ֆ իմաստանշանը: **Մ**էշտեղի լոյսի ճառագայթը եւ նրա
վերին մասի **Տ** անսահման տիեզերանշանով, գրոշմւում է
լոյսի ճառագայթի վրայ, ասելով որ անսահման է լոյսիդ վեր-
ջը: Իսկ **Օ** նշանը գրաբարում չկայ: Սակայն այս նշանը **Ծ**
նշանի անսահմանութեան իմաստի տակն է՝ որպէս անշրպետ,
երկինք եւ ամբողջութիւն: Այդ պատճառով Օն շշփոթեցնելու

Եւ կրկնութիւնների պատճառը չինելու համար, այն հայոց մօտ վերածուել է կիսակլոր ձեւի՝ Պ (Պ) : Նոյնի է Զ նշանի վերի մասը, ուր Օ ամբողջական անջրապեսն է, որի տակը անսահմանութեան նշանն է, ասելով, որ տիեզերածովը՝ երկինքը անսահմանութեան վերեւում է Եւ անսահման է: Որպէսզի Ճիշդ համոզուէք, տեսնենք հարցական նշանը ? ~ Պ, որը նոյնպէս նշանակում է անիմանալի, անյայտ: Այսօր գաղափարաննշաները գործում են. օրինակ՝ (,) սոորակէտը, (՛) երկար նշանը, (՛) շեշտը, (՛) փութը (:) վերջակէտը եւ այլ նշաններ, որոնք բոլորն ալ իմաստածին են եւ ոչ փոխառում:



ԱՐԵՒՈՅ ՀԱՅՈՅ «Փ» ՏԻԵԶԵՐԱՐԱՆԱՐ ԼՈՒՍԱԲԱՆԱԼԻՆ

Արեւապաշտ հայոց կրօնաքաղաքական կառույցը սահմանաւորութել է տիեզերական աստվածական մտքի անսահմանութեան



եւ նրա մէջ գործող երեւոյթների բնախմացականութեամբ, Սվաստիքաձեւ եւ նրա բնոյթը բացող բանալին, աւելի յատակութեամբ է մեզ ներկայացնում սրբազն Փ խորհրդանշանը, որը ԱՌ ԱՌ արեւոց կրօնադաւարանական կառույցում ԱՌ կառույցից առաջ մարմնաւորեց ՓԱՌ իմաստը, Զ շատ իմաստի վերջաւորութեամբ:

Այս գաղափարանշանը, որպէս հնչիւն, ծնում է բերանի ներսի օդի կուտակումից, որ դուրս է մղում՝ հնչեցնելով Փ ձայնը: Այն ներսի կուտակումը, որ հոգու բնազդազգացումային ամբողջութիւնն է արեւոց հայոց մօտ, ստանում է ճիշդ եւ անմիջական աղօթքաարտայալութիւն: ՓԱՌ բնախմաստածայնային կառույցը, որպէս աղօթքաերանգային ներդաշնակութիւն, Զ հնչիւնով լսելի է զարձնում ականշին, Զ փափկանչիւն արտայալութեամբ: Բոլորովին պատահական չէ Փ գաղափարանշանի կառուցուածքը եւ ուղղութիւնը: Այն ուղղուել է դէպի արեւելք, դէպի արեւին եւ կառուցուել է այդ լոյսի կենտրոնական ճառագայթից, որի մէջտեղից կնքում է անսահմանութեան տիեզերական աստվածական գաղափարախորհուրդով:

Այս է Փ սրբանշանի աղօթքամատոյցը.

Լոյսի հզօր ճառագայթը, որը անսկիզբ եւ անկերց է, որ քարձանում է դէպի վեր եւ դէպի երկիր ու անսահման և անցրետի տարածենումդ արեւելիցից արեւմուտք լուսաւորում եւ ին անսահման շարժումով: Եթէ բեզանից սկիզբ առնում է ամեն բան եւ լուսաւորում է դէպի երկիր, որպէս դարգեւ, արեւմուտքից լուսաւորելու ես խաւարք, իսկ եթէ անհունից սկիզբ առնող արեւից մօքիս իմաստը վերածուող անհմանալի իմաստից է մօտեցումիս խորհուրդը, աղա անսահման է կե-


նացս խորհուրդին տուածդ ուղղութիւնը: Թոն է ամեն բան երկից երկինք, արեւելքից արեւմուտք: Թեզանից է փախչում խաւարը եւ այնտեղ է ծնւռում իմաստութեան լոյսը եւ կենաց փառքը:

Արեւոց հայոց սվաստիքակառոյց Փ նշանը եղակի է, որպէս ապացոյց հայոց արեւածին, տիեզերածին գաղափարանշանների ծագման անխախտ փաստ: Փ խորհրդանշանով են կերտուել փառք, փաստ, արփի, արփող եւ Փ նշանը պարունակող շատ իմաստներ: Փ սվաստիքակառոյցը փաստ է սվաստիքան լոյսի հետ կապելու օրինաշափ ապացոյցով: Տիեզերահմաստ այս գաղափարակնիքը ինքնատիպ է եւ գոյութիւն ունի արեւոց հայոց գաղափարանշանների համակարգում: Փ նշանը ընթերցելի է աշխարհի բոլոր ժողովուրդներին եւ թարգմանչի միջոց է հանդիսանում իմաստասիրական մտքի: Փառք ու փառաւորութիւն փայլատակող փարոսին, փայլփայող փոթորիկին, որ իմաստութեան լոյսը պահում է անսահման մտքի հետ:

ԱՐԵՒՈՑ ՀԱՅՈՑ «Փ» ԽՈՐՃՐԴԱՆՇԱՆԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆԵՐ ԲՆՈՅԹԸ

Արեւոց հայոց աստուածաշնչակիմաստ խորհրդանշանների հանձարաբնոյթ աղօթքալեզուն, իր ամքող էութեամբ խոտացուել է հայոց սրբազան գաղափարանշանների մեր այսօրուան տառերում: Յատկապէս ♡ խորհրդանշանը այն մեծ բանալին է, որի սվաստիքակառոյց ձեւը եւ անսահմանութեան նշանի յստակ ներկայութիւնը ապացուցում են, որ ♡ խորհրդանշանի աղօթքակիմաստը այս է. / + C = ♡


Լոյսիդ անիմանալի սկիզբից, որ անհասանելի խորհիցդ դարգեւել ես մեզ, որ տուած լոյսի փառքը անսահման է, որ անիմանալի սկիզբից է ծնւռում, մեծանում է ու բարձրանում փառուվ եւ միանում կենաց եռթեան ու անցնում կենաց,



արեւմտեան կողմը իջնելով ծերութեան խորհուրդում եւ իմաստութեամբ դարձեալ բարձրանում անհուն խորութիւններիդ անհմանալի ունայնութիւններում:

Զ խորհրդանշանի ներկայութիւնը սկզբում եղել է աղօթք, որը մեծարում է մեծութիւնը տիեզերի եւ նրա փառքի: Այս նշանը գրաբարեան շրջանում եղել է շատ՝ յոզնակի՝ իմաստանշան: Զ սրբազն խորհրդանշանը ըմբռնելի է իր հզօր հոգեբանական արտայայտչակառոյցով: Այն անմահ է բոլոր ժամանակների համար եւ ըմբռնելի է այս համակարգի բոլոր ժողովուրդներին:

Զ նշանը պատկանում է Ծ, Է, Զ, Ջ, Ջ, Լ, Ը, Վ շարքին, քանի որ ունի անսահմանի նշանը: Զ սրբանշանը ԱՐ նշանից առաջ տրուելով, ստացել է մեծարման՝ Ք-ԱՐ ամուր, զօրաւոր իմաստը, որը ինչպէս երեւում է արեւը սրբատաշ, սրբացուած քար է խորհրդանշում, եւ քարը, որպէս վեմ եղել է տաճարաշինութեան հիմնաքարը: Տես Petros - վէմ, Petrolium - քարիւղ: Յատկապէս, մեզ համար շատ կարեւոր է տեսնել այս նշանի առկայութիւնը փառք, Դայր, ասի եւ այլ բառերում:



Զ տիեզերախմաստ սրբազն աղօթքանշանը

ԱՐԻԱՑԻՆԵՐԻ ԱՅԼ ԽՈՐՃՐԴԱՆՑԱՆՆԵՐ ՈՐՈՆՅ ԱՐԵՒԱԾԻՆ ԿԱՍ ԱՐԵՒԱԲՆՈՅԹ ԵՆ


Հ հրատու, որը ծնուել է արեւի անմիջական ճառագայթի թեժ ձեւից՝ շանթահար, շիկացած բնոյթ ունի: Յ նշանը երկու կեանք՝ յարեալ խորհրդակառուցը ունի, որը նշում է արեւի ամէնօրեայ վերածնութիւնը: Ե նորաստեղծեալ նշանը ողղուել է դէպի արեւելք, նշելով որ արեւելքից ծնուող լոյսը նորից նորոգուած բարձրանում է անջրպես:

Ե ի խորհուրդները նոյնպէս ընթերցելի են եւ ունեն իրանց արեւանորոգիչ գաղափարախոսականը: Ե նշանը արեւոց հայոց արիաբնոյթ նշաններից է:


Ու, Վ, Է սրբանշանները, դարձեալ տիեզերածին մտահմաստներով են օժտուել:

Ցի պարագան՝ Ցոլակ, արեւ, ցոլ, բնածին բառածայնաւորում է, որի ձայնարտաբերման իմաստը ծնուել է ցոլի իմաստագիտակցումից եւ բնազդային գարմանքաարտայայտումից:

Զ նշանը եւ միւս նշանները նոյնպէս պատկանում են տիեզերախմաստախրական նոյն համակարգերին, քանի որ մտածելածեւերից, նախամարդուց ձայնարտաբերուած բնոյթից իմանում ենք խորհուրդին կնիքը:



164



165

ՄՏԱՓՈԹՈՐԻԿՆԵՐ ՀԱՅՈՑ ՏԻԵԶԵՐԱՀԱՍԱՍ ԳԱՆՁԵՐԻ ՎՐԱՅ

Նրանք ովքեր բնազդամղումից դրդուած հայոց տառերի ծագումը ծնեցնում են յունական, հրէական, եթովպիհական, հնդկական, ասորական, պահլաւ եւ այլ լեզուներից՝ չարաչար սխալում են։ Նրանք հաշուի չեն առել, որ հայոց տառահնչիւնաշարքը, բնաձայնային առումով, թէ՝ օրինաշափ է եւ թէ գերակշռում է ուրիշ լեզուներին։ Առողջ մտածողը հարց է տալու. եթէ հայերը իրենց տառերը առել են յոյներից, ձեւափոխելով, ի՞նչպէս է պատահում, որ հայոց տառերի հնչիւնաքանակը յունականից առելի է դառնում։ Մրանք լեզուական արտայայտութեամբ ձկուն են, ամէն մի հնչիւն ունի իր համապատասխան տառը, որի ներքին իմաստաբովանդակութիւնը այդ տառի հարազատ կառոյցն է։ Եթէ ուրիշ լեզուներում մէկ հնչիւնատառ ստեղծելու համար երեք-չորս հնչիւնահամատեղումների պէտքը կայ, ապա հայոց տառահնչիւնները այդ անկատարելիութեանը չեն մատնուել, այն պատճառով, որ ի սկզբանէ կային, այսինքն փոխառութիւններ չեն։

Ահա եւ մէկ ուրիշ շատ կարեւոր ապացոյց, ինչպէս կարելի է ուրիշ լեզուներով գրել, այն էլ առանց առողանութեան, հետեւեալ հնչիւնները. Երկներ եւ ծովն ծիրանի, Ո- տայր ինձ զօնւիսն ծխանի, ծիր, ծարաւ, ժաջ եւ նմանատիպ՝ Փ, Ծ, Չ, Շ, Ջ, Ր, Ջ, Ծ հնչիւնները, որոնք յատուկ են հայոց

իմացականութեանը։ Ինչպէս իմանում ենք, այս տողերը, որ մէջբերեցի, նախաքրիստոնէական Հայաստանի բարձրաճաշակ գրականութեան գլուխ գործոցներ են, որոնք եղել են հայտառա, հայալեզու, որոնք ոչնչացուել են մոլեռանդ, ծայրայեղ քրիստոնէութեան շրջանում։

Եկեք կուրահաւատ չլինենք, երբ իրականութիւնը այնքան մեծ է ու շօշափելի, ինչպէս կարելի է այս մեծ փաստից այն կողմն անցնել, ոտնակոխելով ճշմարտութիւնը։ Պարզապէս անխոհեմութիւն եւ անխմացութիւն է։ Հաշուէք հայոց տառերը, որոնցից մեզ հասել են 36 հատ, առաւել։ Օ եւ Ֆ։

Օն եւ Ֆն նոյնպէս հայոց տառերի համակարգին են պատկանում։ Յատկապէս՝ Ֆն կառուցուել է երկու տիեզերախմատանշանների համատեղ կառոյցով։ Տ տիեզերախմատ անսահմանութեան եւ լոյսի իմաստային կառոյցով, որը, որպէս Ֆ հնչիւնածախարտաբերում, արտայայտում է ունայութեան մատնանշումը եւ անսահմանութեան նախաճանաշման սահմանումը։ Հայոց տառերը ոչ թէ 36 հատ էին, այլ այնքան՝ որքան եղել է զաղափարախմատների պատկերային քանակը։ Հայոց տառերի ծագումը դրահց Հայաստան թերող գիտնականները ինչ պատասխան են տալու իրենց անթոյլատրելի, երեւակայական կարծիքների համար, որ նոյնիակ հրատարակելու մատուցել են մտաւոր աշխարհին։ Միթէ ճշմարտութիւնը ճշդելու անհրաժեշտութիւն կա՞յ, երբ հայոց տառերը արմատապէս հայկական են եւ ծնուած են պատմական Հայաստանի հողի վրայ։ Միայն այն է, որ գիտնականները այդ տեսնելու հնարաւորութիւնը չունեն։ Ոչ թէ տառերի գոյութիւնն է առեղծուածք, այլ գիտնականների մտածելածեւը եւ մօտեցումն է առեղծուածքին։ Անկարելի է հայոց տառերի

ծնունդը դրսից բերել: Դա հակաօրինաչափական է, բառիս
ընդարձակ իմաստով:

Իր ինքնատիպութեամբ Հայոց տառերի մոգականութիւնը
շփոթեցրել եւ շատ շատ մտածողների սայթաքեցման պատճառ
եղել է: Հայոց տիեզերակիմաստ սրբազն գաղափարանշաննե-
րը հասկանալու համար, հարկաւոր է նրանց մօտենալ իրենց
ծննդափայրի Ճիշդ ճանապարհով: Եւ այդ ճանապարհը տանում
է դէպի տիեզերք եւ ոչ թէ այլ տեղ: Այդ ճանապարհի ուղղե-
ցոյցը բացող բանալին հանդիսանում է տիեզերահմասաւ-
սիրական ծայրագոյն տրամաբանական մտածողութեան լսա-
րանից անդին անցնելու կարողութիւնը: Մրանք են իմացու-
թեանը հանախմբող միջոցները, տիեզերահմասաւսիրութեան
ծաւալային մտածողութիւնը, գեղարուեստահմասաւսիրական
հոգեբանութիւնը, որոնք թափանցելով տառահնչիւնի ներին
իմաստակառոյցի մէջ եւ ընթեցելով այդ կառոյցի բովան-
դակութիւնը, ի յայս են բերում տուեալ նօանի ծագման նա-
խադայմանները, որ տուեալ հաղաբակրութեան դատկերն են:

Ինչպէս կարող ենք մենք իմանալ այս շատ բարդ խնդիր-
ների լուծումը, եթէ մենք չկարողանանք որեւիցէ տառից
իմանալ նրա նախասկիզրը՝ իր գեղագիտական, հոգեբանական,
իմաստային եւ տիեզերակիմաստասիրական ըմբռնումներովը:
Ուրեմն նախ մենք պիտի կարողանանք լուսկեաց պատկերից
դուրս բերել նրա ծաւալային ամ բողջականութիւնը, ջե-
րառաւժային եւ ծայնաարտերման, գունաերանգային ջե-
րառաստիճանը եւ հոգեբանական դատաօների կատը:

Ահա այս միջոցներով մեր մտաապարէզում կը ստանանք
տուեալ քաղաքակրթութեան կենսունակ բովանդակութիւնը:
Խոնարհում եմ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի հանձարին եւ նրա

համեստութեանը, որ նա ոչ մի տեղ չի յիշատակել, որ Հայոց
տառերի ստեղծիչը ինքն է: Սակայն ինքը ոչ մէկ յանցանք
ունի տառերի ծնունդը իրեն վերագրողների եւ չվերագրողնե-
րի բանավէճերում: Նոյնը պիտի ասեմ միւս պատմիչների
համար: Նրանք իրենց սրբազն պարտքը կատարել են իրենց
կեանքի գնով: Եւ ամենասրբազն ու վեհ գործը այն է, որ
նրանք այս բոլորը գրել են Հայոց տառալեզուով, որպէս մեծ
փաստ, որպէս մեծ վկայութիւն:

Հայոց պատմիչների հայատառ-հայալեզու գրութիւնները
արդէն ամենամեծ փաստեր են, որոնք ապացուցում են իրակա-
նութիւնը ինչպէս որ է:

Հայոց լեզուաքաղաքակրթութեան հետ առնչուող իրա-
դարձութիւնները դարձեալ ճշմարիտ վաւերականութիւններ
են: Միայն նրանց Ճիշդ մեկնաբանութեամբ է, որ մեր մտքե-
րում կարող ենք յատակացնել պատմութեան իրադարձութիւն-
ները: Երբ մենք խօսում ենք պատմական եղելութիւնների մա-
սին, ոչ թէ պատմութիւնն ենք ճշդում, այլ մեր մտքերն ենք
ճշդում պատմութեան նկատմամբ: Իսկ պատմութիւնը մնում է
այնպէս, ինչպէս որ եղել է:

Ինչպէս երեւում է Հայոց պատմահողաշերտից, Հայոց լե-
զուաքաղաքակրթութեան վրայ բեռնաւորուել էին օտար լե-
զուները, որոնք մեզ յայտնի են պատմականօրէն: Այդ լեզունե-
րի բանաւոր եւ գրաւոր թափանցումը Հայաստան օրինաչափ
երեւոյթ է նոյնիսկ այսօր, որպէս կենսաօրինաշափ մտափոխ
յարաբերութեան միջոց: Թէ՛ ասորական, թէ՛ պահլաւական,
թէ՛ յունական եւ թէ հոռմէական լեզուները շերտաւորել են
պատմական մտաշերտը, որոնք շփոթեցնում են մեր մտքերը
իրենց ներկայութեամբ: Հայոց սրբազն իմաստանշանները,

որոնք միշտ եղել են արեւապաշտական կրօնքի մէջ, գործում էին որպէս իմացամիջոց եւ մեզ հասել են մեծ գուրգուրանքով։ Սակայն նրանք տառի վերածուելով, կորցրին գաղափարահմաստային նախնական գործունեութիւնը, որ այսօր մեկնաբանութիւններիս բռն նիւթն է։

Հնդկաստանում եւ Եթովպիայում գտնուող հայանման տառերի առկայութիւնը այն մեծ փաստն է, որը ապացուցում է, որ հայոց արեւապաշտական կրօնքի այս անգին տիեզերահմաստ նշանները իրենց հետ տարել են հայ արեւապաշտ վարդապետները՝ քրիստոնէութեան դաժան կրօնքից փախուստ տալով։ Որովհետեւ դրանք այն ժամանակ տառեր չէին, այլ կենսունա՝ կ գաղափարահմաստային տիեզերական աղօթքներ։ Հնդկաստանում ապաստանելու փաստը պայմանաւորուել է եւրոպոիտ ցեղի հետ ապրելու բնագդամղումի ապահովութեամբ։ Ոչ թէ հայոց գաղափարագրերը Հնդկաստանից եկան, այլ Հայաստանից անցան Հնդկաստան, որը ճշմարիտ է։ Արեւապաշտ հայոց տիեզերահմանձար սրբանշան իմաստապատկերները գանձեր են իրենց տիեզերահմաստ բովանդակութեամբ։ Նոյնիսկ քրիստոնէութիւնը ստիփուած էր նրանց ընդունելու թաքուցեալ, գաղտնի, ցոյց չտալով իր մեծ սխալի նահանջը։ Նրանք ովքեր փորձում են հայոց սրբազն տիեզերահմանձար գանձերի մասին խօսել, պարտ են նախ սկըսել ինքնաճանաշումից, ինքնիմաստակշուից եւ խոհեմութիւնից։

Հայոց տառերի ծնունդը տիեզերահմաստասիրական է։ Ա՛յդ է ճշմարիտ վկայութիւնը, որը անցնում է տիեզերահմանձար լսարանից անդին։ Եւ որպէս օրէնք, իմաստութիւնը միշտ խոհեմութեամբ է գեղեցիկ, իսկ խրատ տալը

այն ունենալուց յետոյ է տրւում։

Հաւանարար հարց է առաջանալու, թէ ինչո՞ւ հայերը սեպագրութիւնը ըընդունեցին։ Լեզուաֆաղաքակրթութեան ուսումնասիրութիւնում իմաստանշանների երկարակեցութիւնը պայմանաւորուել է նրանց ոչ անհատական իմաստալըմքոնումից։ Արեւապաշտ հայերը նախապէս իմանում էին սեպագրութիւնների վաղամեռիկ աւարտը։ Արիացիների իմաստանշանները իրենց համոզումով ընթերցելի են իմաստուններին, որոնք վերաիմաստաւորուելու, յարութիւն առնելու յոյսերով ապահովել էին։ Բոլոր օտար լեզուներից հեռու մնալու պայմանաւորուածութիւնը բացատրում է նրանց անհաղորդիչ լինելու փաստով։ Եւ զարմանալի թող չթուայ այն տարրերի մուտքը օտար լեզուներ, որտեղ տեսնում ենք արիացիների գաղափարահմաստների ձեւով։ Հաւասարակշուած համարելով երեւյթների ճանաշման եւ խորհրդացման օրինաշափութիւնների ձեւակառոյցները, այստեղից պիտի եզրակացնենք, որ հայոց տառերի կառուցուածքի մէջ առկայ է անսահմանութեան նշանը, որը ծնուել է հայկական իմաստաշերտաւորումներում։ Իսկ օտար լեզուներում՝ թէ՝ յունական, թէ՝ լատինական եւ թէ եգիպտական գաղափարանշաններում, որպէս տառաձեւ չի առնչուել։ Ուստի որտեղից ծագեց եւրոպական ։ Հարցական նշանը եւ մաթեմաթիքայի մէջ անսահմանութեան չոր իմաստանշանը, որը անմեկնողական է կենսունակութեամբ։ Ես այս հարցը առաջ չեմ քշում, այլ մատնանշում եմ որ աւելի լաւ տեսնենք, թէ ինչը որտեղից է։ Նոյնը լատինական S, Z, L, C տառերի պարագան է, իրանց անմեկնաբանելիութեամբ։ Ուստի, աւելի լաւ չէ՞ր լինի տեսնել այսօրուան լատինատիպ տառերի գերակշուղով ովկիանոսը, որ

ազատ փոխառութեան խառնարանի վերածուելով, տառերը կորցրել են իրենց արմատները: Եւ զարմանալի է, որ այդ տառահնչիւնները չկարողանալով հնչեցնել հայոց որեւիցէ տառահնչիւն, օգնութեան են բերում լրացուցիչ հնչիւններ, ամբողջացնելու համար իմաստի նպատակը: Միւս բացասաւմս, որ ճշմարտութիւնից է բխում դարձեալ, ոչ ազգամոլական տեսանկիւնից՝ այլ իրականութեան ձիշդ ըմքոնումից, որ լատինատառերի հնչողութիւնը իր անկայուն վիճակով, հեռանում է տառի հաստատուն ձեւից: Իսկ շերտաւորուած լեզուներում նոյն նշանը տարբեր լեզում լրիւ ուրիշ հնչիւն է արտայայտում: Իսկ հայոց պարագան հաստատուն է, անփոփխ, ուր ամէն մի տառ իր անշեղ հնչիւնը ունի: Եթէ լատինատառերը այսպիսի արագ յաջորդականութեամբ շերտաւորուեն, իրենց ճակատագիրը նմանուելու է սեպագրութեան ճակատագրին: Մարդահամարի եւ տեղեկատուութեան խառնարանում, հազար տարի յետոյ, եւրոպացին անկարող է լինելու իրեն հասկանալու, որովհետեւ լատինական լեզուն մեծ մաշուածք է տուել եւ կորցրել է իր տառախմաստի բուն կենաւունակութիւնը: Մտաշերտաւորումների այս պարզ օրինակում, ապագայի հաշոյն, լատինական տառերը չեն կարողանալու իրենց մասին որեւիցէ բան ներկայացնել: Նոյնիսկ անգլերէնը, ֆրանսերէնը, իտալերէնը, սպաներէնը, սլովաքեան լեզուները եւ գերմաներէնը օգտագործելով նոյն տառաձեւերը, հնչիւնային տարբերութեամբ, արդէն ոչնչացրել են բուն տառի հնչիւնային ամբողջականութիւնը: Այդ վտանգուած տառերը մեռնելու են եւ այսօր մեռնում են նոր շերտաւորումներից:

Աւելացնեմ որ այս խառնարանին միացաւ թրքալեզու

լատինատառ խառնաշերտը: Ահա այս վերջին փոխառութիւնը լրիւ վտանգել է լատինական լեզուն, որի ամենացայտուն վաստը գերմանաթրքական լեզուակառոյցների իրար մօտենալու եւ խառնուելու մեծ ու դժբախտ բարդութիւնն է: Ահա թէ ինչո՛ւ այդքան վտառ ու յատակ տեսանելի է լսարանիս ուսուցումը: Լեզուների վտանգուածութիւնը սկսում է անխոհմութիւնից, անխմաստութիւնից: Արդի կենաց համար, որքան որ շնչելու օդի մաքրութիւնն է անհրաժեշտ, այդքան էլ լեզուների յատակացումն է՝ իմացութեան իմաստով: Թուրքիայի նախնական լեզուականատառակառոյցը նախընտրելի էր լատիներէնի համար, որպէսզի չշերտաւորէ միւս լեզուի կենաւունակութիւնը ես մատնանշելու եմ, որ այն փոքր ազգերի լեզուները, որոնց տառերը փոխառութիւններ են, վտանգելու են լեզուական սկզբնական հարազատութիւնը: Եւ մենատիրական մօտեցումը լեզուների նկատմամբ ինքնասպանութեան է նմանում: Լեզուների արագ շերտաւորումները խախտելու են համաշխարհային մտքի որակը, որը ահմանուել է հոգերանական օրինաշափութիւնների վրայ: Ահա առաջին գործածական միջոցները՝ ձայնասփիւոք, հեռատեսիլը, համակարգիչը, որոնք ընդլայնում են լատինական լեզուի տարրողութիւնը իր զանազան տարբերակներով: Իսկ այս պարագային սեղանալու են թարգմանութիւնները, որոնց բարդութիւնը տանելու է անհասկացողութեան, երբ կրակը սառոյց իմաստով է թարգմանուելու: Այն պետութիւնները, որոնք զբաղուել են հողատարածքային հետաքրքրութեամբ, կորցնելու են իրենց լեզուակենաւունակութեան նախարամատները, որը տանելու է տառերի ի սպառ ոչնչացման:

Ահա թէ ինչու հայոց իմաստանշանները շատ կարեւոր են

Համաշխարհային լեզուակառոյցներում, թարգմանութեան դեր կատարելու: Լատինական Բ - ը եւ ռուսական Բ - վ արդէն հնուց բաժանուած են, ինչպէս Խ - իքսը եւ Խ - իս, հ - ու, Ա - ա, Ա - էի:

Հայոց տառահնչիւնները ամբողջութեամբ արտայայտելու կարողութիւն ունեն որեւէ լեզուի ձայնահնչիւնները եւ հնչիւնաթարգմանական դեր կատարելու: Հայոց լեզուն փրկեց համաշխարհային պատմութեան այն յուշարձանների տեղեկատուութիւնները, որոնք իրենց մտաշերտում ունէին Միջին Արեւելքի ժողովուրդների մասին տուեալներ: Տոկուն, ճկուն, անշեղ, անփոփխ մնաց Հայոց տառահնչիւնը եւ աւելի զօրաւոր ու ազատ կենսականութեամբ լցուեց մտահմացականութեան բարդ համակարգերում: Ահա մի մեծ ապացուց. ես գրում եմ Հայերէնով այնքան ազատ, ճկուն, որ ամէն մի իմաստ ենթարկում է իմաստութեանս եւ ազատորէն ընդառաջում ամբողջական շարադրութեանը: Հայոց լեզուի խօսակցութիւնը հարմոնիք է այն առումով, որ 38 տառահնչիւնները խօսակցութեան ընթացքում չեն կոտրասուում, այլ ճկունանում են, դիւրացնելով լեզուամկանային աշխատանքը: Հայերէնով խօսողը չի յոգնի եւ դիմագծերի վրայ կնճռահետքեր չեն առաջանայ: Հայոց լեզուին յատուկ է նաեւ փափուկ արտայայտամիջոցը. նա կոկորդախզիչ, իսեղդիչ բարդ հնչիւններ չունի, որոնք դժուարացնեն խօսակցական գործարանները: Հայոց լեզուով շարադրուող տրամաբանութիւնը իր ազատութեամբ հասնում է մտքի կարողութեան այն բարձրագոյն կէտին, որը փորձում է հասնել եւ անցնել անիմանալիի յաշորդականութեանը: Իսկ նահանջելու պարագային նոյնքան ճկուն է՝ առոյգ, պատկերաւոր, թափանցիկ, առա-

չընթաց: Հայոց լեզուի մտածելամեքենան հնարաւորութիւն ունի մտքի երեւեկայութիւնը լոյսի արագութեամբ հասցնել տիեզերախմաստասիրական լարանի ազատ մեկնողականութեանը: Հայոց լեզուի ամենամեծ առաելութիւնը, համաշխարհային առումով, այն է, որ կարողութիւն ունի որեւէցէ լեզուի ձայնաարտարերումը ճիշդ բնարանի նման գրել եւ հնչել: Հայոց լեզուի արդի մտամեքենան ոչ միայն մտքի շարադրման միջոց է, այն նաև նոր մտախմաստների ստեղծման աղբիւր է: Իմ յարգանքս բոլոր լեզուների հանդէպ իմաստասիրական բարձր մօտեցում ունի, սակայն իմացութեանս յատկան է, թէ լեզուն, բացի խօսակցական միջոցից, ինչ բարձրագոյն յատկութիւն ունի մարդարանական հոգու եւ մտքի կայունացման համար: Արդեօք ծուլացնո՞ւմ է ուղեղին, կամ սահմանափակո՞ւմ է նրա մտածելու կարողութիւնը, կամ դժուարագրելի՞ են հնչիւնատառերը, որոնք գեղագիտութեան դժուարութիւնների տանելով, իրենց վրայ աւելի ուշադրութիւն սեւեռելով, մտքի ասելիքը յոգնեցնում են: Միւս յատկութիւնը՝ թէ արդեօք լեզուն հնարաւորութիւն է տալիս պարզ խօսելաձեւից անցնել ազատ մտածելաձեւի, որը սահմանագերծում է մտածողութեան կարողութիւնները եւ մարդու գիտակցութիւնը ազատում է նեղ մտածելաձեւից: Մարդկային մտքի իմաստասիրական ազատութիւնից է կախուած այս երկրագնդի ճակատագիրը: Ուստի հարկ է մտածել, թէ ինչ է առոյգ լեզուամտածողութեան կենսական նշանակութիւնը: Կան լեզուներ, որոնք անհաղորդ են իրենց մտածելաձեւի կարծր կառոյցով եւ իրենց լեզուից բացի, թոյլ չեն տուել իմանալու ուրիշ լեզուներ: Ահա այս է արդի քաղաքակրթութեան անտեսանելի ու վտանգուած մտակեն-

սոլորտը: Հայոց լեզուի ոչ պահպանողական իմաստամեքենան արտադրել է այնպիսի թարգմանութիւններ, այնպիսի բարձր մտարակով, որ կարծում ես թարգմանութիւնը հենց հայերէն է գրուել: Հայոց լեզուով թարգմանուել են աշխարհի դասական գործերը, բարձր ոճով եւ մակարդակով: Այս բոլորը գովազդ չեն, այլ ճշմարտութիւն՝ իմաստասիրական լայն հակացողութեամբ:

Ուստի արեւապաշտ Հայաստանի հազարամեակների միջից մեզ հասած գանձերը պահպանելու պարտականութիւնը, պատմագիտականօրէն համամարդկային պարտականութիւն պէտք է համարել:



**ՏԻԵԶԵՐԱԿԻՄԱՍՏԱՍԵՐ
ԱՐՈՒԵՏԱԳԷՏ ԳԵՂԱՎԿԱՐԻՉ
ՄԿՐՏԻՉ ԾԻՐԱՑԻ (ԱՍԼԱՆԵԱՆ)
- ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ -**

Ծնած է Վրաստանի Ախալցխա հայահոծ շրջանի հայկական ծիրա գիւղը, 1949-ին: Փոքր տարիքէն կը սիրէ նկարչութիւնը: Ծուցահանդէսներու կը մասնակցի 13 տարեկանէն սկսեալ եւ կ'արժանանայ բազմաթիւ մրցանակներու: Գեղանկարչական դասեր կ'առնէ ծոլակ Մանասեանի արուեստանոցը: Աւարտելով Ախալցխայի հայկական միջնակարգ դպրոցը, 1965-ին կը մեկնի Երեւան: Երեւանի գեղարդուեստական թեքնիքական նորարաց ուսումնարանը կ'աւարտէ գերազանց գնահատականներով եւ գեղարդուեստի պատույ գովասնագրով: Ուսանողութեան տարիներուն մօտէն կը ծանօթանայ Մարտիրոս Սարեանին եւ Երուանդ Քոչարին ու կը լսէ անոնց նման մեծ վարպետներու ուսուցումները: 1968-ին, պարտադիր Երկտարուայ զինծառայութեան ընթացքին, պաշտօնապէս զինուոր-գեղանկարիչի աշխատանք տանելով,

Կ'արժանանայ հրամանատարութեան գովասանքներուն, որպէս զինուոր-թղթակից գեղանկարիչ։ Կը մասնակցի զինուորական ցուցահանդէսներու, արժանանալով պարգեւատրումներու բարձր գնահատանքներուն։ 1970-ին, զինծառայութիւնը աւարտելէ ետք, կը մեկնի Տոնի-Ռուստով (Նոր Նախիջեան), ուր տարը տարի կ'աշխատի ուսական «Վեշեռնի Ռուստով» թերթի խմբագրութեան մէջ։ Խ. Միութեան համամիութենական արուեստի իրաւունքի գործակալութեան անդամ ըլլալով, կը ստեղծագործէ համամիութենական գեղարուեստի ֆոնտին մէջ։ Այդ տարիներուն Ասլանեան կը խորանայ իմաստասիրական մտքի համակարգին մէջ եւ ինքնորոշումի մղումով կը թեքուի տիեզերական իմաստասիրութեան մտածողութեան լսարանը, որուն մէջ խորանալով յառաջ կը մղէ՝ ներկայութեան բացակայութիւնը եւ բացակայութեան ներկայութիւնը ծայրագոյն տրամաբանական աշխատութիւնները։

Ծիրացիի տիեզերահմաստասիրական մտքին կը պատկանին մտածողութիւնը եւ նմազադութացման սահմանումները, հոգեբանական նոր մեկնաբանութիւններով։ Այս ուղղութեամբ տանելով իմաստասիրական աշխատանք, հետազային կը զարգացնէ ինքնամդումի մտամեկուսացման պայքարը հարթ մտածողութենէն վերածելու ծաւալային մտածելածեւի, որուն հետեւանքը կը սահմանուի տիեզերահմաստասիրական ծայրագոյն տրամաբանական մտածողութեան լսարանով։ Ծիրացիի մտապայքարային հրաւէրը շսահմանափակուելով գեղարուեստահմաստասիրականի ուղեծիրին մէջ, ինքն ըստ ինքեան կ'արգելափակէ հասարակական մտքի սովորական մտապատճեցը եւ իր վրայ կը սեւեռէ մտածողութիւններու զանազան շերտաւորումները։ Այս լուակեաց, ինքնակենաց

իմաստալսարանը կը հիմնաւորուի բարդ խնդիրներու անլուծելի վիճակներու երկու անիմանալի եղբերուն՝ անսահմանութեան եւ ունայնութեան մասին վերլուծութիւնները տիեզերահմաստական ծայրագոյն տրամաբանական բարդ մտածողութեամբ։ Այս տիզերակերտ միտքերը Ասլանեանը կը նետեն գերբնազանց արուեստի վերացականութեան անորոշութիւնները, նոյնիսկ հասցնելով հոգիի եւ մտքի տառապեցուցիչ հակասութիւններու։

1980-ին կը վերադառնայ Հայաստան։ Մեր հոգեւոր մշակութային եւ աստուածաբանական ուսմունքին մօտէնծանօթանալու նպատակով, կ'ընդունուի Սուրբ էջմիածնի հոգեւոր ճեմարանը։ Այդ տարիներուն Ծիրացի իր գերագոյն նպատակը համարած է գեղարուեստի բարդ խնդիրներէն անցնիլ նոր որոնումներու, յատկապէս ունայնացուած երեւոյթներու ժամանակասահմանումի իմացականութեան ոլորտներուն մէջ։ Ուսանողութեան երեք տարիներուն արդէն ինքնամդումով աւելի մտասեւեռուած էր դէպի ինքնահմաստասիրական գեղագիտական տիեզերալսարանով քան ճեմարանի առօրեայ ծրագրով։ Ասլանեան այդ տարիներուն, հակառակ կղերական միջավայրին, սովորական անանդրադարձումի հոգեբանութեամբ կը ստեղծագործէ այնպէս ինչպէս անկաշկանդ ազատամտութիւնը կը պահանջէ։ Այս առումով, երբեմն Աստուածաշունչի հակասութիւններու անհասկացողութեամբ, սրբապահնց բարդ խառնարանը կ'օգնէ արուեստագէտին իր տիեզերատիրոջ արարչականութեան մէջ տեսնելու մարդկային միտքի բարդութիւններէն դէպի պարզութեան տանող կախուածութիւնները։ Ծիրացի ճեմարանին մէջ երկու անգամ կը ցուցադրէ իր գեղարուեստական գործերը՝ Սրբիգոր Նարե-




Արուեստագէտը աշխատանքի պահուն Պուրճ Համմուտի (Վիրանան)
Հայ Կաթողիկէ Սր. Փրկիչ եկեղեցւոյ մէջ:
Որմանկար՝ 100 քառ. մեթր տարածութեամբ



«Ծիեզերածին Ծովինալր»
կտաւ իւղաներկ, 200 X 150 սմ.

Կացիի եւ Աստուածաշունչի թեմաներով՝ որոնք կը տպագրուին «Էջմիածին» ամսագրի մէջ եւ վեհափառին կողմէ կը պարզեւատրուին:

Էջմիածնի ճեմարանի լրակեաց պատերուն տակ, ինքնամտակերտումի նոր որոնումներու մէջ, աւելի ներծուլուելով պատմական հոգերանութեան քան թէ կղերական որոշումի վրայ, Ասլանեան լուր ու անհասկնալի կ'ըլլայ իր շրջապատին համար, քանի որ զինք շրջապատող առարկաները, եկեղեցական աղօթքները, խաչքարերը, վանքի սրբատաշ հինգած քարերը կը խլեն իր միտքերը, որպէս անիմանալի գաղտնիքներ: Ասլանեան Աւետարանի մեկնարանութիւնը կանոններէ դուրս տեսնելով, իր մտածումները կը միացնէ աշխարհական կեանքին եւ միշտ կը հակառակի «Հաւատալ առանց իմանալու» միտքին: Ասլանեան արդէն ընթերցած եւ ուսումնասիրած ըլլալով համաշխարհային արուեստի պատմութիւնը, անոր



Մեծ որմանկար (մօտաւորապէս 100 քառ. մեթր տարածութեամբ) Այնձարի (Լիրանան) Հայ Առաքելական Սր. Պողոս եկեղեցւոյ մէջ

համար թէ՛ հայ եւ թէ օտար դասականները՝ գրականութեան թէ երաժշտութեան ասպարէզին մէջ՝ կերտած էին արուեստագէտի հոգեմտակառոյցը:

Այսպիսով, Ծիրացի իր յօժար կամքով չի շարունակեր կը-դիրական ասպարէզը: Կ'ամուսնանայ Երեւանի Կոմիտասի ան-

ուան պետական երաժշտանոցի շրջանաւարտ, երգչուհի, արուեստագէտ Արաքսի Գապաքեանի հետ եւ իրենց զաւակի՝ երգիչ-դաշնակահար Ալօ Ասլանեանի հետ ընտանեօք Պէյրութ կը տեղափոխուին:

Ծիրացի Լիրանանի եւ Սուրիոյ մէջ կը նուիրուի որմանկարչական մեծածաւալ արուեստին: Յաջորդաբար, որմանկարներով կը զարդարէ եկեղեցիներու խորաններ ու պատեր: 1986-1991-ին, Տամակոսի Հայ Կաթողիկէ Տիեզերաց Մայր եկեղեցւոյ որմերը՝ 400 քառ. մեթրէ աւելի մեծութեամբ: Յոյն եկեղեցւոյ մկրտարանի խորանը՝ 2 քառ. մեթր: Լիրանանի մէջ Այնձարի Սր. Պողոս եկեղեցիի մուտքի որմերը հսկայածաւալ հայ սուրբերով կը ծածկէ՝ 100 քառ. մեթրէ աւելի: Այնձարի Հայ Կաթողիկէ եկեղեցիի մուտքի պատերը: Պէյրութի մէջ, Հաճնոյ Սր. Գէորգ եկեղեցիին մուտքին՝ Մեծ եղեռնը եւ Սր. Գէորգը: Պուրճ Համմուտի Սր. Փրկիչ եկեղեցւոյ աւագ խորանը՝ 10 քառ. մեթր մեծութեամբ եւ մկրտատունը՝ 12 X 3 մեթր: Սր. Աստուածածին եկեղեցւոյ խորանը՝ 25 X 7 մեթր: Ռըմէյլ թաղի Սր. Յարութիւն եկեղեցւոյ հսկայածաւալ որմանկարները՝ աւելի քան 100 քառ. մեթր: Ռայաքի Սր. Աստուածածին եկեղեցւոյ խորանը եւ պատերը՝ հսկայ սուրբերով եւ առաքեալներով:

Ծիրացի, որպէս գեղանկարիչ, թղթակցած է զանազան թերթերու. Հայաստան՝ «Երեկոյեան Երեւան», «Աւանգարդ», «Սովետական Հայաստան», «Ոզնի», «Ծիծեռնակ», «Պիոներ Կանչ» թերթերուն, իսկ Ռուսիա՝ «Մոլոտ», «Կուամսայա Զվեզդա», «Կուամսայա Առմիա» թերթերուն:

Մկրտիչ Ասլանեան գործածած է բազմաթիւ ծածկանուններ. «Մկօ», «Մկրտիչ», «Ծերացի», «Սվաստիքա», «Լեռ-



«Աղասութեան Սլացք»
կտաւ իւղանկար 130 X 80 սմ.

ամպրոպ», «Ռաշինքտոն», «Մառշալ», «Որոտ», «Տիեզերք», «Նեմրուտ», «Երանգ», «Արիացի», «Ծիրենիա», «Առաքեալ», «Իմաստասէր», «Սար», «Միհր», «Ճամբորդ», «Լուռ», «Հայ», «Աստ», «Ուրուական», «Հոգի», «Խաւար», «Մութ», «Ասլան», «Աս»։ Այս ծածկանուններուն բուն նպատակը արուեստագէտի հոգեւոր եւ մտաւոր ինքնապացքարն է։ Արուեստագէտը կ'ուզէ հեռանալ ինքն իրմէ, որպէս անհատ իր նիւթականութիւնը ոչնչացնելու։ Սակայն, ազգային տեսանկիւնն, միշտ կը վերադառնայ իր անուան, այնպէս ինչպէս որ է՝ Մկրտիչ Ծիրացիի՝ Մկրտիչ Ասլանեանի։

Ասլանեան բազմաթիւ ցուցահանդէսներ տուած է Սուրիոյ, Լիբանանի, Լեհաստանի, Հայաստանի, Փրանսալի, Ռուսիոյ եւ Վրաստանի մէջ։ Ասլանեանի արուեստին մասին իրենց գնա-



«Կայծակի Ժպիտը», գծանկար

հատանքի խօսքը արտայայտուած են հայկական թերթեր ու ամսագրեր՝ «Զարթօնք», «Արարատ», «Մասիս», «Սփիւռք», «Խօսնակ», «Աւետիք», «Նոր Օր», «Նոր Կեանք» (Ա.Մ.Ն.), «Քուլիս», ինչպէս նաև օտար լեզուներով թերթեր՝ «Մակաղին», «լը Ռէվէլ», «լՌ Ռիխան լը Ժուր», «ալ-Ճիար», «ալ Պինաա», «լա Ռեվիլ տիւ Լիպան», «ալ-Մասիրա», «ալ-Նահար էլ Արապի ուա Տուալի», նմանապէս ոռւսական, պարսկական, ֆրանսական եւ արաբական թերթեր։ Հեռատեսիլային բազմաթիւ կայաններ հարցազրոյցներ եւ հանդիպումներ ունեցած են արուեստագէտին հետ՝ աշխատանքի պահուն, բարձր որմերուն վրայ։ Ասլանեանի բոլոր գործերուն ամբողջականութիւնը կարծէք կ'ամփոփուի անոր տիեզերակմաստահրական միտքի այս հանգրուանին մէջ, ուր, առաջին անգամ, սկաստիքակերտ

ակօսով կը թափանցէ հայոց պատմութեան արեւապաշտական կրօնքի խորքերը:

Ասլանեանի բարդ հոգեբանութիւնը կ'անցնի վերացականութեան իմաստալարանէն անդին, որպէս անորոշութեան խորհուրդ՝ հեռացում ինքն իրմէ, որպէս մտարոնումներու նոր ճանապարհածեմումի անիմանալի առաքելառդի:

ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ

1962-4՝ Ախալցիխէի Մշակութային Տան մէջ կայացած ցուցահանդէսներէն կը պարզեւատրուի արուեստի գովասանագրերով եւ մրցանակներով;

1969՝ Թիֆլիսի բարձրագոյն գինուորական ուսումնարանի մէջ տարած արուեստի աշխատանքներուն համար կը պարզեւատրուի Գրեգովի անուան մրցանակով:

1970՝ Անդրկովկասեան ընդհանուր գինուորական մշակութային տան մէջ կայացած ցուցահանդէսին կը պարզեւատրուի Սուրբիկովի անուան մրցանակով:

1975՝ Համառուսաստանեան գեղարուեստի միութեան Տոնի Ռոստովի մարզի կազմակերպութեան կողմէ կը պարզեւատրուի գովասանագրերով:

1977՝ Լեհաստանի Վրոցլաւ քաղաքի «Էվրիկա» անհատական ցուցահանդէսին կը պարզեւատրուի վերացապաշտ արուեստի վկայականով եւ գովասանագրով:

1982՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանին մէջ ցուցահանդէսներու՝ Երկու անգամ Վազգէն Վեհափառի կողմէն կը պարզեւատրուի:

1986՝ Տամասկոսի Հայ Կաթողիկէ Տիեզերաց Մայր Եկեղեցոյ որմանկարներու համար կը հրաւիրուի Սուրբիոյ մօտ

Վատիկանի դեսպանատուն եւ դեսպանի կողմէն կը պարզեւատրուի իտալացի մեծ որմանկարիչ Զաւատարիի անուան պարզեւ-մրցանակով:

1986՝ Տամասկոսի մէջ որմանկարելու ժամանակ Շուէտի դեսպանը այցելութիւն կու տայ Ասլանեանին եւ շուէտական շարժանկարահանողներ կ'ուղարկէ, որոնք հարցազրոյց կ'ունենան իրեն հետ որմանկարչութեան ասպարեզի շուրջ:

1990՝ Մխիթար Սեբաստացիի գրչի ձեւաւորման համար կը պարզեւատրուի Մխիթարեան Մխիթարանութեան կողմէ՝ Մխիթար Արքահօր մետալով:



1990՝ Պէտրութ-Պուրճ Համմուտի Հայ Կաթողիկէ Սուրբ Փրկիչ Եկեղեցոյ որմանկարներու համար Հայ Կաթողիկէ Միութիւնը կը պարզեւատրէ զինք ոսկի մետալով (օնսա):

1991՝ Երեւանի Գեղարուեստական թիւ 8 Թեքնիքական Ուսումնարանէն կը պարզեւատրուի գերազանցիկ գովասանագրով:

1991՝ INSTITUT ACADEMIQUE DE PARISը կը շնորհէ իրեն «Ոսկի Զեռքեր» գեղանկարիչի մրցանակ եւ արծաթ մետալ՝ Փարիզի Յաղթանակի կամարով:

1992՝ SALON INTERNATIONAL D'ART LIBRE VITBY-LE FRANCOISը կը շնորհէ իրեն արծաթ մետալ դափնելուսակով եւ ազատ արուեստի կրծքանշանով:

Գեղանկարիչ Մկրտիչ Շիրացի (Ասլանեան) ծանօթ անուն է ազգային եւ միշտագոյացին գետնի վրայ, որպէս բարձր գնահատութեան արժանացած արուեստագէտ:



Միջազգային ցուցահանդեսու ընթացքին Մկրտիչ Ասլանեանի
շահած մեծ մրցանակները

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յառաջաբան	5
Հայոց սրբազն տառերը տիեզերափմաստասի- րական ծայրագոյն տրամաբանական մտա- ծողութեամբ	13
Հայոց պվաստիքաների անհետացումը	30
Սվաստիքաները հայոց մշակոյթում	36
Հայ նշանակում է արեւ	41
Արարատ սարի անուանածնունդը	47
Մեծն Տիգրանի արեւապատկ թագի գաղտնիքները	52
Մովսէս Խորենացու հայոց պատմութիւնը	60
Բաւ է չարշարենք արեւոց հայոց պատմութիւնը	66
Սվաստիքայի մտահոգեկառոյցը տիեզերահանձար իմաստակնիքը	70
Սվաստիքաները	73
Արեւածիների կամ արիացիների սրբազն երկիրը	78
Հարթ մտածելաձեւից ծաւալային իմաստափ- րութեան անցնելու տիեզերահանձար ան- հրաժեշտութիւնները	85
Չայնաարտաքերման տիեզերահանձար լսարանը	96
Սուրբ Էջմիածնի արեւագմբէթ կառոյցի լուսկ- եաց գաղտնիքները	101
Արեւոց հայոց տիեզերահանձար աստուածա- շունչը	110
Հայոց «Ա» գաղափարանշանի արշալուսը	113
Արիացիների «Բ» բարիքանշանի իմաստախորհուր- դիք	119
Արիացիների «Գ» գաղմանախորհուրդ գոյանշանը	120
Արիական «Դ» կիսասվաստիքա խորհրդափմաստը	121
Արիացիների «Ե» երկնաստեղծ նշանի երկնախոր- դ	

հուրդը	122
Արեւոց հայոց «Զ» գաղափարանշանի տիեզերա- իմաստասիրական կառոյցը	125
Արիացիների «Է» արեւանշանի ներքնաշխարիք	128
«Ը» խորհրդանշանի աղօթքային ընթերցումը	132
Արեւոց հայոց «Թ» գաղափարանշանի խորհրդա- իմաստը	134
«Լ» խորհրդանշանի լուսածին աղօթքը	136
«Խ» խորհրդանշանի խոհեմակառոյց գաղտնիք- ները	138
Արիացիների «Ծ» տիեզերածին իմաստանշանը	139
Արեւոց հայոց «Ղ» խորհրդանշանի անմահ լեզուն	141
Արեւոց հայոց «Ճ» խորհրդանշանի սկզբնաւորումը	145
Արեւոց հայոց «Ծ» գաղափարանշանի դաւաճա- բանական կառոյցը	147
Արեւոց հայոց «Պ» խորհրդանշանի կառոյցը	150
Արեւոց հայոց «Ռ» խորհրդանշանի աղօթքալը- թերցումը	153
Արեւածիների «Տ» տիեզերախորհուրդ իմաստանշա- նը	155
Արեւոց հայոց «Փ» տիեզերահանձար լուսար- անլին	158
Արեւոց հայոց «Ջ» խորհրդանշանի տիեզերահան- ձար բնոյթը	161
Արիացիների այլ խորհրդանշաներ որոնք արեւա- ծին կամ արեւաբնոյթ են	163
Մտափոյթորիկներ հայոց տիեզերափմաստ զան- ձերի վրայ	166
Տիեզերափմաստաէր արուեստագէտ գեղանկարիչ	
Մկրտիչ Ծիրացի (Ասլանեան)	177

Ա. կողմի նկար՝ «Յօշոտուած Սվաստիֆան»
գործ՝ Մկրտիչ Ասլանեանի
Բ. կողմի նկար՝ «Դարերի Խորքից»
գործ՝ Մկրտիչ Ասլանեանի

Տողաշարում եւ էջադրում
«ՍՓԻՌՈ-Ք»-ի

Տպագրութիւն՝ **Է Ծ Վ Ա -ի:**

Tel. (03) 236710

Հասցե.- MKRTICH ASLAN/AN,
C/O "SPURK" ARMENIAN MAGAZINE
P.O.BOX 113-7269
Beirut, Lebanon
tel: 03/268522
01/583273